

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱԳԱՆ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 82.0:06

ԳՄԴ 83.3

Ա 636

*Հրապարակության է երաշխավորել
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Ա 636 Անգլալի ապագան/հոդվածների ժողովածու: -Եր.: ԵՊՀ հրատ.,
2015, 114 էջ:

Ժողովածուն ընդգրկում է ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնի կողմից 2014 թ. նոյեմբերին կազմակերպած «Հայոց ցեղասպանությունն արտասահմանյան գրականության մեջ և արվեստում» գիտաժողովի նյութերը:

ՀՏԴ 82.0:06

ԳՄԴ 83.3

ISBN 978-5-8084-2042-7

© ԵՊՀ հրատ., 2015

© Կազմողի համար, 2015

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Անգյալի ապագան.....	5
Ալբերտ Մուշեղյան Գերմանացի սպաները եվ ղիվանագետները 1915-16 թթ. Հայոց ցեղասպանության մասին	8
Anush Sedrakyan Cultural and Historical Conflicts in Turkish Literature	17
Ռուբեն Մելքոնյան, Նաիրա Պողոսյան Հայոց ցեղասպանության թեման ժամանակակից բուրբ գրականության մեջ. համառոտ ակնարկ	26
Սիրանուշ Գալստյան Հայոց ցեղասպանության թեման արևմտյան կինոյում.....	43
Натали Гончар-Ханджян Армения и армянский вопрос в освещении Александра Амфитеатрова.....	54
Վահե Արսենյան Ցեղասպանության թեման Ֆեթիյե Չեթինի «Մեծ մայրս» վեպում	60
Կարեն Բադալյան Հայոց ցեղասպանության արտացոլումը Գ. Է. Գուարչի «Հայկական տոհմածառ» վեպում	68
Արմինե Բոյան Սկանդինավյան երկրների գրական արձագանքը Հայոց մեծ եղեռնին	76
Սոնա Գալստյան Ավստրոհունգարական և գերմանական պետական արխիվները և հայկական ցեղասպանությունը	86
Մարիամ Մուղղոսյան Հայոց ցեղասպանության արտացոլումն արևմտյան կերպարվեստում.....	93
Սիրանուշ Կարապետյան Հայոց ցեղասպանության թեման իսպանական արձակում.....	102

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱԳԱՆ

Հարյուր տարի առաջ մեր ժողովրդին պատուհասած աղետը, որ արևմտյան պատմաբանների բնորոշմամբ Հին աշխարհի նորագույն պատմության ամենասևեդներից մեկն է, պատմաբանների, դիվանագետների, քաղաքական և պետական գործիչների ուսումնասիրության նյութ և առարկա լինելուց զատ, թեմա էր նաև գեղարվեստական գրականության և գրողի համար: Մեծ եղեռնն այսօր արդեն հարյուր տարվա պատմություն ունի: Դա նշանակում է, որ հարյուր տարեկան է նաև նրա մասին գրականությունը, որի առաջին օրինակներն ստեղծվում էին արդեն կոտորածների ընթացքում, ասենք՝ Չարենցի «Դանթեական առասպելը» պոեմը կամ Արմին Վեգների «Ճանապարհի առանց տունդարձի» նամակների ժողովածուն:

Դարասկզբին Վահան Տերյանը դառնությամբ գրում էր, որ օտարը չի կարող հասկանալ մեր հոգին, մեր ցավը: Մեր գիտաժողովը հակառակն է ասում: Ավելին, փաստերը ցույց են տալիս, որ մեր մեծ ցավի մասին ավելի շատ ու ավելի հետևողականորեն գրել են օտարները, քան մենք, և դա, թերևս, հասկանալի է: Հայոց եղեռնի թեման առավել հետևողականորեն արծարծված է հատկապես եվրոպական երկրների՝ անգլիական, ֆրանսիական, իտալական, դանիական, իսպանական, գերմանական գրականության մեջ: Հատկապես ուզում են ընդգծել թեմայի մշակման ավանդույթը գերմանական գրականության մեջ (Վեգներ, Վերֆել, Հիլգենռաթ): 50-60-ական թվականներից թեման տարածում գտավ նաև ԱՄՆ-ում, Լատինական Ամերիկայում, արաբական երկրների գրականության մեջ, Իսրայելում, մասամբ նաև՝ Թուրքիայում: Հայոց մեծ եղեռնի թեմայով գեղարվեստական երկեր են ստեղծվում նաև մեր ժամանակներում, օրինակ, եգիպտացի Ժիլբեր Սինուեի (սպորում և ստեղծագործում է Փարիզում) «Երևան» վեպը (2009) կամ ավստրալացի Լեն Ուեքսի ութհարյուր էջանոց վեպը, որը լույս տեսավ բոլորովին վերջերս: Հետաքրքիրն այն է, որ Լեն Ուեքսը պրոֆեսիոնալ գրող չէ, այլ՝ օդաչու: Այս փաստերը հիմք են ստեղծում ասելու, որ հայոց եղեռնի թեման գեղարվեստական գրականության մեջ վաղուց ձեռք է բերել համաշխարհային հնչելություն:

Նկատելի թվով գործեր են ստեղծվել մասն արվեստի մյուս ճյուղերում՝ կերպարվեստում, կինոարվեստում, երաժշտության մեջ, որոնց արձագանքներն իրենց արտացոլումը կգտնեն մեր գիտաժողովում:

Ո՞րն է մեր գիտաժողովի հիմնական նպատակը:

Առաջին՝ մեր գրականության և մեր ազգային գիտակցության տեսանկյունից կարևորագույն խնդիր է արտասահմանում ստեղծված գեղարվեստական գրականության համակարգումն ու արժևորումը, որի ուղղությամբ, ցավոք սրտի, առայժմ շատ քիչ բան է արվել:

Երկրորդ՝ շատ կարևոր խնդիր է այդ գրականության մատենագիտության ստեղծումը, ինչպես մասն այդ երկերի հայերեն թարգմանությունների աշխուժացումը, քանզի փաստ է, որ հսկայական քանակությամբ արժեքավոր գրականություն առայժմ մնում է չթարգմանված:

Պրոմեթևսի մասին Ֆրանց Կաֆկայի հանրահայտ պրիտչայում ժամանակի հետ աստիճանաբար փակվում է տիտանի վերքը, այդ մասին մոռանում են աստվածները, մոռանում են վերքը քրքրող արծիվները, մոռանում է և ինքը՝ Պրոմեթևսը: Մեր վերքը համառորեն չի փակվում, քանի որ մեր մեծագույն խնդիրը մնում է անլուծելի, այդ իսկ պատճառով մենք չենք ուզում, որ այն փակվի: Այն չի փակվում մասն, քանի որ դա թույլ չի տալիս մեր թշնամին: Թվում է՝ ժամանակները փոխվել են, և թուրքական բարբարոսության մասին եվրոպական հանրահայտ մոդելները (օրինակ՝ Շեքսպիրի հերոսներից մեկն ասում է. «Թուրք լինեմ, թե սուտ եմ ասում») կամ Վիկտոր Հյուգոյի «Այստեղով թուրքեր են անցել» աֆորիզմը) վաղուց պետք է, որ մոռացված լինեին, բայց այդպես չէ գոնե մեր տպավորությամբ, քանի որ Եղեռնի գոհերի և մեր հանդեպ թուրքերի այսօրվա պետական կեցվածքը հաճախ այնպիսի ձևեր է ընդունում, որոնք անմիջապես մատնում են թուրքական ազգայնամոլական գծի ժառանգականությունը: «Թուրքերի գործողությունների դաժանությունը, -դեռևս դարասկզբին հիշեցնում էր անգլիացի քաղաքական գործիչ Ջորջ Քեմպբելը,- պատահականություն չէ, այն տևական և օրգանական երևույթ է»: «Թուրքը երբեք չի փոխվում», - հիշեցնում էր մասն իշխան Լոբանովը: «Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան», - ակնարկում էր հայ մեծ բանաստեղծը:

Ըստ էության, աշխարհի տարբեր հորիզոնականներում ապրող և ստեղծագործող արվեստի և գրականության բազմաթիվ մարդիկ, ովքեր գրել և այսօր գրում են մեր ողբերգության մասին, կատարում են հիրավի մեծ գործ՝ հումանիզմի բարձր արժեքների լեզվով թուրքական հասարակության դեմ մշտապես պահելով կատարվածի մասին ճշմարտության հայելին: Անկասկած, նրանք դրանով փորձում են նաև նպաստել թուրքական հասարակության մարդկայնացման ընթացքին, առանց որի անհնար է Եղեռնի իրողության քաղաքական ճանաչումը, ինչպես նաև թուրք և հայ հասարակությունների հաշտեցումը: Ուստի արժևորելով և համակարգելով գրականության ու արվեստի այդ գործերը՝ մենք վերստին հիշում ենք մեր ցավը և մեր հարգանքի տուրքն ենք մատուցում մեր ժողովրդի տառապանքը նաև իրենց տառապանքը համարող բազմաթիվ ազնիվ արվեստագետներին:

Արա Առաքելյան

Բան. գիտ. դոկտոր,

ԵՊՀ արդասահմանյան գրականության ամբիոնի վարիչ

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀՀ ԳԱՍ գրականության

բան. գիտ. դոկտոր

ԳԵՐՄԱՆԱՅԻ ՄՊԱՆԵՐԸ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ 1915-16 ԹԹ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր – Առաջին համաշխարհային պատերազմ. Օսմանյան կայսրություն, բռնարարքներ, զանգվածային սպանություններ, պացիֆիզմ և հակաֆաշիզմ, ծրագրված եղեռնագործություն, հայ փախստականներ:

Ключевые слова: Первая мировая война, Османская империя, насильственные действия, массовые убийства, пацифизм, антифашизм, запрограммированный геноцид, армянские беженцы.

Key words: First World War, Ottoman Empire, massaere, antifashizm and pacifism, Armenian refugees, planned genocide.

Գերմանացի պացիֆիստ-դեմոկրատ Հայնրիխ Ֆիրբյուխերը ծնվել է 1893 թ.-ին սոցիալ-դեմոկրատի ընտանիքում: Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես՝ 1914 թ.-ի օգոստոսին գորակոչվելով զինվորական ծառայության՝ Ֆիրբյուխերը Միջագետքում և այլ հայաբնակ վայրերում ականատես եղավ հայ ժողովրդի զանգվածային տեղահանությանը և կոտորածին: Մայրենի գերմաներենի հետ կատարելապես տիրապետելով ֆրանսերենին՝ Ֆիրբյուխերն արագորեն յուրացրեց նաև թուրքերենն ու արաբերենը և 1915-1921 թթ. դարձավ գեներալ Լիման ֆոն Սանդերսի թարգմանը: Ստամբուլում, Միջագետքում, Հալեպում և Դամասկոսում հայերի զանգվածային բնաջնջման ժամանակ իր ապրած ողջ ցավն ու զայրույթը, դաշնակից թուրքերի գործած սահմուկեցուցիչ ոճիրները և նրանց հետ գործակցող գերմանացի բարձրաստիճան հրահանգիչների քստմնելի անտարբերությունը Ֆիրբյուխերը հան-

գամանալից փաստերով պատկերեց 1922 թ. հրատարակած գրքում՝ «Ի՞նչ էր թաքցնում Կայզերական կառավարությունը գերմանացի հպատակներից. Հայաստան՝ 1915. Քաղաքակիրթ ժողովրդի ոչնչացումը բուրքերի ձեռքով»¹, որը լրացումներով հրատարակվեց 1930-ին «Հայաստան 1915» վերնագրով²:

Իր գրքում բուռն ցասումով դատապարտելով 1915 թվի Հայոց ցեղասպանությունը, Ֆիլբյուխերը պատմական ցայտուն փաստերով համոզիչ ցույց է տալիս ընթերցողին, որ Օսմանյան կայսրությունն ինքն իր ներսում ի սկզբանե արյան և մախճիրի իշխանություն է եղել: Դեռևս Օսմանը՝ այն ցեղապետը, որի անունով կոչվեց սուլթանների դինաստիան, երագում էր համաշխարհային տիրապետության մասին: Նա հռչակվեց իր 90-ամյա հորեղբորը նետահարելու համար, որը խանգարում էր նվաճելու ինչ-որ մի ամբողջ: Օսմանի որդի Օրխանը (1326-1359 թթ.) ստեղծեց ենիչերիների զորքը, որն իր բռնարարքներով Եվրոպան ու Ասիան շուտով պիտի լցնեի անուսարսափով: Այն համալրվում էր քրիստոնյա տղաներով, որոնց ավարում էին ռազմարշավների ժամանակ կամ առեւվանգում Փոքր Ասիայի հույն և հայ ընտանիքներից: Ահա թե ինչ է գրում օսմանյան թագավորների բարբերի մասին Ֆիլբյուխերը.

«Կոստվոյի մոտ գտնվող «Սև կեռնեխի դաշտում» տարած հաղթանակով, որտեղ 1389 թ. ջախջախվեց Սերբիայի պետական իշխանությունը, Մուրադ I-ը թուրքական կայսրությունը դարձրեց աշխարհակալ տերություն: Ճակատամարտում Մուրադն ընկավ սերբի դաշույնից: Նրա որդի Բայազիդ I-ն իր իշխանությունը սկսեց եղբորը խեղդելով և դրանով մտցրեց զարհուրելի մի սովորույթ. համարյա յուրաքանչյուր գահակալություն ուղեկցվում էր եղբոր և ազգականի սպանությամբ: Մուհամմեդ III-ը (1595-1603 թթ.) քառասյուն գահի առաջ, բուրգի մման իրար վրա կիտել տվեց իր տասնյոթ եղբայրների գլուխները: Գահաժառանգները քշվում էին սուլթանի ժառանգների համար նախատեսված մեկուսարան, որտեղ հաճախ անցկացնում էին իրենց կես կյանքը՝

¹ Vierbücher H., *Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915. Die Abschachtung eines Kulturvolkes durch die Türken.* Hamburg-Bergedorf.

² Vierbücher H., *Armenien 1915.* – հայերեն թարգմանությունը՝ Հայնրիխ Ֆիլբյուխեր, *Հայաստանը 1915-ին*, ԵՊՀ հրատ., 2000:

նյարդայնացումը փարատելով ալկոհոլով ու կանանցով, այնպես որ «կալանավորները», հասնելով իշխանության, մեծ մասամբ տկարամիտ էին լինում պատասխանատվություն կրելու համար»³:

Սուրը, որ բռնակալ սուլթանների կառավարման խորհրդանիշն էր, հաճախ իրենց իսկ դեմ էր ուղղվում՝ 200 մեծ վեզիրներից 76-ը մահացել են ոչ բնական մահով: Սպանվել է բոլոր սուլթանների մեկ երրորդը: Ֆիրբյուխերի բերած այս փաստերի հաստատումը գտնում են XIX դարի գերմանացի մեծ բանաստեղծ Հայնրիխ Հայնեի մի հուշագրության մեջ, որտեղ նա գրում է, թե երբ ես շատ երիտասարդ էի, լրագիր կարդալիս բացում էի նախ վերջին էջը, որտեղ շարունակ գրված էր լինում, թե Թուրքիայում այսինչ վեզիրին կախեցին և նշանակեցին այնինչ վեզիրին: Եվ ես միշտ զարմանում էի, թե այդքան վեզիր կախելուց հետո ինչպե՞ս է, որ դեռ մարդիկ կան, ովքեր համաձայնում են դառնալ վեզիր:

Չափազանց հատկանշական է Ֆիրբյուխերի վկայությունը, որ սուլթաններն ահ ու սարսափի մեջ էին իրենց իսկ ստեղծած ենիչերիներից. «Թուրքիան դեռ հարյուր տարի առաջ կփլուզվեր ենիչերիների կամայականություններից, եթե 1828 թվին Մահմուդ II-ը Հուսեյն փաշայի ջանքերով Կոստանդնուպոլսի ձիու շուկայում գնդակոծելով չվերացներ այդ անհնազանդ տղաներից 40.000-ին»⁴:

Նույնիսկ Հայ ժողովրդի պատմության սովորաժամալ հատորները չեն արտացոլել այնպիսի սահմոկեցուցիչ փաստեր, ինչ որ պատմում է գերմանացի զինվորական Ֆիրբյուխերն օսմանյան կայսրության ներքին կյանքի մասին: Մի երկու տարի առաջ այսօրվա Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, հանդես գալով Լոնդոնում, հայտարարում էր, թե Թուրքիան արևի պես պայծառ պատմություն է ունեցել, իսկ թուրքը լույս ու ջերմություն է ճառագայթել, որտեղ էլ որ հայտնվել է, և շատ այսպիսի վառվառ խոսքերով դավատանքներ հնչեցին նրա պաթետիկ ելույթում մեր պատմական հարևանի մասին: Երևի Էրդողանը ծանոթ չի եղել Ֆիրբյուխերի գրքին:

Քայլ առ քայլ, օրացուցային ճշգրտությամբ Ֆիրբյուխերը վեր է հանում 1915-ին Ստամբուլում և այլ հայաբնակ վայրերում երիտթուրքերի

³ Ֆիրբյուխեր, էջ 28:

⁴ Նույն տեղում, էջ 30:

ձեռնարկած հրեշավոր բռնարարքները: Դեռ 1915 թ.-ի մարտի 18-ին ռազմական դատարանն արգելեց հայերի «Ազատամարտ» կենտրոնական օրգանը: Արդեն Կոստանդնուպոլիս են հասնում մախճիրի մասին հաղորդող առաջին լուրերը: 1915 թ.-ի ապրիլի 21-ին, կարդում ենք գրքում, թուրքական կառավարությունը որոշում էր ընդունել հայ ժողովրդի բնաջնջման վերաբերյալ և գաղտնի հրաման էր ուղարկել ռազմական և քաղաքացիական առյուծների: Կոստանդնուպոլսում ձերբակալվեցին մոտ 600 հայ մտավորականներ, որոնք տեղափոխվեցին Անատոլիայի խորքը: Այսպես ժողովրդին զրկեցին իր գլխավորներից, - ընդգծում է Ֆիբբյուխերը:

Պատգամավոր Վարդգեսը, ով առանձնահատուկ մտերիմ հարաբերություն ուներ երիտթուրք պարագլուխների հետ, իր բարեկամների ձերբակալումից հետո մտնում է ոստիկանապետ Բեդրի բեյի մոտ՝ նրանից մի հուսադրիչ խոսք լսելու, բայց ստանում է հետևյալ կտրուկ պատասխանը. *«Ես քեզ երեք օր ժամանակ եմ տալիս բողոքելու Կոստանդնուպոլիսը»*: Վարդգեսն Ալնումու հետ դիմում են իրենց վաղեմի մարտական ընկեր Թալեաթին. *«Ինչո՞ւ եմ անմեղները չերբակալվել»*: Թալեաթը պատասխանում է. *«Ես դա արգելել չէի կարող»*, իսկ մի քանի օր հետո պատռում է իր դիմակը: 1915 թ. մայիսի 12-ին Թալեաթը նետում է Վարդգեսի երեսին. *«Մեր թույլ օրերին Դուք չոքեցիք մեր կոկորդին և բարձրացրիք հայկական բարեփոխումների հարցը: Դրա համար էլ մենք մեր ներկայիս դրության բարեհաճությունն օգտագործելու ենք այնպես ցրիվ տալու Ձեր ժողովրդին, որ Դուք հիսուն տարով Ձեր զրլիսից հանեք բարեփոխումների գաղափարը»*: Մի քանի շաբաթ անց պատգամավոր Վարդգեսին գազանաբար սպանեցին Քեմալի կիրճում: Սպանողը Էնվեր փաշայի փեսայի թիկնապահն էր: Իսկ Վարդգեսի կինը կառավարությունից տեղեկություն ստացավ, թե իր ամուսինն ինքնասպան է եղել արքայազնի դռանը:

Կոստանդնուպոլսից վտարված ղեկավարներն արքայազնից հեռագրով դիմեցին Թալեաթին. *«...Երբեք մեր մարքով անգամ չէր անցնի, որ մեր համարեղ գործակցությունից հեռո՞ւ հարկադրված պիտի լինեինք՝ այսրեղից հեռագրով բանակցելու Ձեզ հետ»*, - ստորագրում են՝ Ալնումնի, Ջարդարյան, դոկտոր Փաշայան:

Չուր հույսեր, նրանց մահը վաղուց վճռված էր: Յավոք, Ֆիրբյուխերին հայտնի չէր 1911 թվին գորավար Անդրանիկի հայտարարությունը՝ ուղղված նույն Ալեմունուն և նրա կուսակիցներին, այլապես վերոհիշյալ հեռագրի առիթով կհիշեր իր գրքում մեծ գորավարի մարգարեական խոսքերը. «Ինչքան կուզեք գրկախառնվեք երիտթուրքերի հետ՝ ձեր արյունը ձեր գլուխը, մենակ խեղճ ժողովրդին տանուլ չտաք»: Կոստանդնուպոլսից արքայական 600 զործիչներից մոտ 590-ը սպանվեցին:

«Երզնկայի և Սվազի միջև և ընկած Քենախի (իմա՝ Կամախ) կիրճը: Այնտեղ 1915 թ.-ի հունիսյան օրերին, - նշում է Ֆիրբյուխերը, - տասնյակ հազարավոր կանանց ու մանուկների անլուր տանջանքներից հետո գլխապտույտ բարձրությունից ողջ-ողջ նետում էին ցած: Այդ կիրճը պետք է *Դանթեի կիրճ* անվանել: Դա իրականություն դարձած նգովքի անդունդն է, ինչպիսին Դանթեն է նկարագրել իր «Դժոխքում» Մարդկությունը, որ հասել է իր խայտառակության գիտակցմանը և իր մեղսապարտության ճանաչմանը, պետք է որ Կովկասի ամոթալի սպին դարձներ հուշավայր ամբողջ երկրագնդի համար, քանզի այստեղ է կատարվել բոլոր ոճրագործություններից ամենազարհուրելին: Այդ խայտառակությունը մաքրելու ցանկությունը և պատերազմն անիծողների նողկանքը պետք է որ միավորվեն և մարդկանց առիթ տան ուխտագնացության դեպի Քենախ-բողազ: Ուխտավորներն այնտեղ կրկին ու կրկին հոգեպես կվերապրեն այն, ինչ կատարվել էր 1915-ին»⁵:

Հայոց ցեղասպանության ճանաչման հակառակորդները, իրենց աղքատամիտ կարծիքները հիմնավորելու, սնանկ փաստարկները միջազգային հանրությանը համոզիչ դարձնելու համար, տասնամյակներ շարունակ անփոփոխ կրկնում են միևնույն կեղծ արդարացումը՝ ռազմական պայմանների հետևանքով հայերին տեղահանելու անհրաժեշտության մասին: Այս առթիվ Ֆիրբյուխերը նկատում է. «Հաճախ այն կարծիքն է հայտնվել, թե ավելի քան մեկ միլիոն հայերի սպանությունը ավելի քիչ պետք է վերագրվի կանխամտածված, պլանավորված սպանության, քան ինչ-որ չարաբաստիկ հանգամանքների, որոնք չէին կարող կանխատեսվել կառավարության կողմից»⁶: Նույն կերպ էլ XXI դարի

⁵ Ֆիրբյուխեր, էջ 7-8:

⁶ Նույն տեղում, էջ 51:

նախօրեին՝ ավետարանչական նորագույն աստվածաբան, Գերմանիայի Գյոտինգենի համալսարանի դեկան, պրոֆեսոր Մարտին Թամկեն Եվրոպայում աշխարհ եկած նոր սերունդներին փորձում է ապացուցել, թե օսմանյան կայսրության մեջ հարյուր-հազարավոր հայերի տեղահանությունը թելադրված էր պատերազմական անհրաժեշտությամբ, և նրանց համատարած մահը համարում է անբարենպաստ բնական պայմանների հետևանք⁷: Մինչդեռ Ֆիլիբյուխերն իր գրքում բացահայտել է այդ ցեղասպան եղեռնագործության ծրագրված բնույթը. «Թալեաթի ի կատար ածվող հրամաններից աներկբա հետևում է, որ կառավարությունը նպատակ է դրել հայերի ոչ թե վերաբնակեցումը, այլ բնաջնջումը: Այդ հրամանները, որոնք 1915 թ. սեպտեմբերից մինչև 1916 թ. մարտն ուղարկվում էին Հալեպի կառավարող հիմնարկներին, Թեհլերյանի դատավարության ժամանակ մասամբ ներկայացվեցին բնագրով»:

Մի՞թե հետևյալ փաստերը հաստատում են անբնական պայմանների հետևանքով հազարավոր մարդկանց մահը, թե՞ ծրագրված գազանային խոշտանգումներով խաղաղ հայ բնակիչների սպանող: Ֆիլիբյուխերը հաղորդում է. «Հաստնանում և Սալմաստում միայն ջրհորներից հանվել է 850 գլխատված դիակ - ինչու՞, որովհետև թուրքական զորքերի գլխավոր հրամանատարն ամեն մի քրիստոնյայի գլխի համար վճարում էր որոշակի գումար: Ջրհորները լցված էին քրիստոնյաների արյամբ: Միայն Հայաստանից Սոչբուլաղ է ուղարկվել 500 կին ու աղջիկ անարգելու համար Տեսնելով, թե ինչպես են բանդիտները օրը-ցերեկով բռնաբարում իրենց քույրերին, կանայք հարյուրներով նետվում էին խոր գետը Վանից մի ուսուցիչ գրում է. «Ապրիլի կեսերին հրի մատնեցին մեր փողոցն ու իմ տունը: Շրջակա գյուղերից մեր տանն ապաստանել էին 250 փախստական կին ու երեխա և 50 հոգի քաղաքից: Նրանք բոլո-

⁷ **Martin Tamecke.,** *Armin T. Wegner und die Armenier, Anspruch und Wirklichkeit eines Augenzeugen, (Արմին Թ. Վեգները և հայերը – մի ականալուսի հավակնությունը և իրողությունը)*, լույս է տեսել 1993-ին և լրացումներով վերահրատարակվել 1996-ին, Համբուրգում: Տե՛ս **Ալբերտ Մուշեղյան, Թեև Արմին Վեգները պաշտպանության կարիք չունի**, ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2010, հունվար-ապրիլ, մայիս-օգոստոս, № 1-2, էջ 448-459. նույնի՝ *Արմին Վեգների հիշարական անարգելու փորձ*, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2010, ապրիլ-հունիս, թիվ 2(30), էջ 25-44:

որը ողջակեզ եղան տան հետ միասին: Ամայացած գյուղերում ոչ մի կենդանի շունչ չէր մնացել, բացի դիակներ խժռող շներից ... Մուշի քաղաքը գրաված ժանդարմները սկսեցին տղամարդկանց աչքի առաջ բռնաբարել նրանց կանանց: Շատ տղամարդիկ սպանում էին իրենց կանանց և աղջիկներին: Մի ամբողջ գերդաստան թույն խմեց Անկարայի մոտերքում սպանեցին 500 մարդ, նախապես կտրելով նրանց քթերն ու ականջները և աչքերը հանելով»⁸:

«Դեր էլ Չոր օազիս քշված հայերից գրեթե ոչ մեկը կենդանի չմնաց: Ժամանակ առ ժամանակ նրանց հարյուրներով տանում էին և սառնասիրտ սպանում Բաբայում երկուսուկես օրում սովից մահացավ 1029 հայ»⁹:

Թուրքիայի նախագահ Էրդողանի և վարչապետ Դավութօղլուի առաջարկած պատմաբանների հանձնաժողովը ինչպե՞ս է պատրաստվում հերքել կամ բնական աղետներին վերագրել գերմանացի սպայի արձանագրած այս փաստերը:

1916 թ.-ի նոյեմբերին գեներալ Լիման ֆոն Սանդերսին հաջողվեց դադարեցնել հայերի զանգվածային տեղահանությունները Չմյուռնիայից: Այս օրինակը Ֆիրբյուխերին ցույց տվեց, որ գերմանաթուրքական դաշինքի առկայությամբ անգամ հայերի տեղահանման, առավել ևս անպատիժ ոչնչացման համար, Գերմանիայի ռազմական միասիան Միջագետքում կարող էր շատ կանխարգելիչ գործողությունների դիմել, որ չարվեց: Իր ողջ զայրույթը վերուստ հրահանգված այդ կանխատեսված անգործության դեմ Ֆիրբյուխերը արտահայտեց «Արևելքի գոհը» հոդվածում: Այստեղ նա հայ ժողովրդի հրեշավոր դահիճ էր անվանում Սուլթան Համիդի և երիտթուրքերի կառավարած Թուրքիան, պակասում է միայն հայ մեծ բանաստեղծ Թումանյանի դիպուկ ախտորոշումը, որը Թուրքիան անվանում էր «Արևելքի ընկնավոր»: Ֆիրբյուխերի պատկերմամբ՝ հայերի հեծեծանքների վտակները, հորդելով Ստամբու-

⁸ Vierbücher H., *Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915. Die Abschlachtung eines Kulturvolkes durch die Türken.* S. 68-69.

⁹ Նույն տեղում, էջ 76:

լից, Տրապիզոնից, Սվազից և Էրզրումից՝ «կուտակվում դառնում էին անասելի տառապանքի հսկայական-ահավոր սիմֆոնիա»¹⁰:

1921 թ. մարտի 15-ին Բեռլինում, Շառլոտենբուրգի Հարդենբերգ փողոցում հայ ուսանող Թեհլերյանը գնդակահարեց Բեռլինում գաղտնի բնակվող նախկին մեծ վեզիր Թալեաթ փաշային: Ֆիրբյուխերը այդ դիպուկ կրակոցի համար անթաքույց հիացմունքով հայ ուսանողին համեմատում է շվեյցարացի միջնադարյան առասպելական նետաձիգ Վիլհելմ Թելլի հետ և «Թեհլերյան» ազգանվան մեջ տեսնում է այդ ժողովրդական հերոսի «Թելլ» անունը¹¹: Ընթերցողը, թեկուզև Ֆրիդրիխ Շիլլերի «Վիլհելմ Թելլ» դրամայից, կարող է հիշել, որ առասպելական նետաձիգի որդին Շվեյցարիայում դատապարտվել էր մահվան և դատարանի սաղիստական վճռով նա կարող էր ազատվել կախաղանից, եթե հայրը նետի հարվածով ցած գլուխը որդու գլխին դրած խնձորը:

Երիտթուրքական հայատյաց պարագլուխները, բնաջնջելով հայ ժողովրդին, ոչ միայն տիրացան նրանց ավելի քան 3000-ամյա հայրենիքին, այլև տնետուն անցնելով կողոպտեցին նրանց անձնական սեփականությունը, բուրքական բանկերում ավանդ դրած ոսկին ու կանխիկ գումարները: «Սիայն հայերից կողոպտած ունեցվածքը և կանխիկ գումարները գնահատվում է մի քանի հարյուր միլիոն գերմանական ոսկե մարկ, - գրում է Ֆիրբյուխերը, - 1916 թվին Թուրքիան այդ գողացած փողերից ուղարկեց Բեռլին 100 միլիոն ոսկե մարկ՝ բանկերին որպես արտաթույթ ի պահ: Հաշտությունից հետո այդ ամբողջ գումարը բռնագանձվեց Անտանտի կողմից»¹²:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հայնրիխ Ֆիրբյուխերը եռանդուն մասնակցում էր պացիֆիստական շարժմանը, այդ գործին նվիրաբերելով իր հռետորական անուրանալի ձիրքը և պատերազմ ու վայրագ կոտորածներ տեսած մարդու դառը փորձառությունը: 1922 թ. Հաագայում և Ամստերդամում տեղի ունեցան Խաղաղության միջազ-

¹⁰ «Vorwärts», № 61, 1920, 10 օգոստոսի:

¹¹ Շվեյցարական առասպելական հերոսին պատկերել է Ֆրիդրիխ Շիլլերը իր «Վիլհելմ Թելլ» դրամայում:

¹² **Vierbücher H.** *Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915. Die Abschachtung eines Kulturvolkes durch die Türken.* S. 81.

գային մեծ կոնգրեսներ, որոնց գլխավոր կազմակերպիչներից էր Պատերազմի հակառակորդների լիգայի նախագահ Արմին Թեոֆիլ Վեգները: 1930 թվականին Ֆիրբրյուխերի «Հայաստան՝ 1915» գրքի նոր հրատարակման շնորհիվ, սպառազինությունների մրցավազքի և պացիֆիստական շարժման այլ կարգախոսների կողքին կրկին հնչելություն ստացավ հայերի դեռևս չդատապարտված սպանողը, բայց դժբախտաբար 1933 թվին գերմանական մացիզմի իշխանության հասնելուց հետո գիրքը արգելվեց և մեծ մասամբ դարձավ հրդեհի ճարակ: Այդ գիրքը հայտնաբերելու համար խուզարկվում էին մույնիսկ մասնավոր քաղաքացիների գրադարանները:

Իր պացիֆիստական և հակաֆաշիստական երկարամյա գործունեության և հրապարակային ելույթների համար Ֆիրբրյուխերը զոհ գնաց գեստապոյական բռնության: 1939 թ.-ի փետրվարի լույս 12-ի գիշերը նրա մոտ մտավ մի անձանոթ անձնավորություն, որն ակնհայտ գործում էր գեստապոյի հանձնարարությամբ: Խոսակցության մասին ոչինչ հայտնի չէ: Այցից անմիջապես հետո նա ուշագնաց եղավ: Սինչ այդ ողջ-առողջ Ֆիրբրյուխերը հաջորդ առավոտյան իսկ վախճանվեց ուղեղի կաթվածից Ռոբերտ Կոխի անվան բեռլինյան հիվանդանոցում:

Мушегян Альберт, доктор филологических наук, профессор, "**Немецкие офицеры и дипломаты о геноциде армян 1915-1916 годов**". В статье на основе новых научных данных освещаются и анализируются многочисленные факты осуществленного правительством младотурок геноцида армян. Автор статьи опирается на публикации и работы целого ряда служивших в эти годы в армии немецких офицеров, дипломатов, среди них, в частности, Генриха Фирбрухера.

Musheghyan Albert, PhD, professor, **German officers and diplomats about 1915-16 years' Armenian Genocide**. Prof. A. Musheghyan in his article reveals and discusses numerous facts of Armenian Genocide, which were executed by Young Turks. The author presents us new scientific materials, which are based on numerous officers and diplomats', especially Heinrich Firbrucher's research works and publications.

ANUSH SEDRAKYAN

YSU, PhD Associate prof.

CULTURAL AND HISTORICAL CONFLICTS IN TURKISH LITERATURE

Բանալի բառեր – *Ցեղասպանություն, մշակութային առանձնահատկություն, կոնֆլիկտներ, բուրբակյան մշակույթ, պարմական դրսևորումներ:*

Ключевые слова: *Геноцид, исторические особенности, конфликты, турецкая культура, исторические аспекты.*

Key words: *Genocide, cultural identity, conflicts, Turkish culture, historical aspects.*

Just revisiting the perspective of the reflection of the Armenian Genocide by Turkish authors and by Turkish civic speakers we can conclude that people are more or less concerned about consequences and the result of the sad event. I might state the fact that Turkish people are underway reassessing the reality of Armenian Genocide, explaining it, and though in a very moderate manner trying to face the history, trying to reunite themselves with the memory that their ancestors kept rejecting for almost a decade.

That's why in the progressive we see the encounter of ideas, which indicates the fact that the mankind striving for the betterment of the world is ready to quit and abandon eternal hatred and emotional engagement for true understanding and for mending and bridging the gaps our mentalities.

The first fact that this Genocide assessment in Elif Shafak's book "Bastard of Istanbul" stated is the similarity of Turkish and Armenian cultures, which is truly realistic picturing of the situation at the beginning of the 20th century, because irrespective of religious outlooks (Christian and

Muslim) this peoples lived so long side by side together, they shared so much of cultural heritage, they shared so much history common traditions and common lifestyle, that truly, they could have shared the same destiny, if it wasn't for historical and political blunders that Turkish government committed and definitely Armenian community wasn't strong enough politically and diplomatically to be able to prevent all these hardships and all these grievances. And why stated the fact that Armenian diplomatic rulling elite circles weren't able to prevent the Genocide effects for two reasons.

Firstly, half of the elite was welcoming the changes, the shifts in politics that Turkey made, expecting a better life for Armenians, which indicated inability of foreseeing the real post effect of this situation. Everybody knows we are aware that lack of sovereignty and self-governance leads to relying on dictatorships, but the latters are unable to provide ethnic minorities with all available rights and freedom. There is an episode in the book about Armenian poet Hovhannes Stambulyan, who was caught to the police station and charged for stirring rebellion against Ottoman Empire just for the poem that sounded very personal and intimate.

“The child weeps in his sleep without knowing why,
A husband yet unending sob of longing
Impossible to console
That’s how I long for thee,.../”¹

And secondly, our elite thought that the independence of Armenia is connected with Russian Empire, which was really not straight forward and outspoken in it's political aspirations and motivations (typical of all empires), and always pursuit some clandestine objectives. The undercurrent implications which political leaders were unable to detect, were unable not to follow and thus to prevent. That's why for both these cases horrible and heinous massacre cured. The ashes of this massacres still pound in our hearts with foreboding effect of continuation. We are now facing the centennial of Armenian Genocide and facing it with a same case without result causes and with the process that breaks possible developments of both for Turkey and

¹ “The Bastard of Istanbul”, ElifShafak, United States of America, 2007, Penguin Books, p. 3.

Armenia. Not allowing Turkey to enter the European family and not allowing Armenia to cut itself from Russian influence.

This was very vividly and moderately depicted in Elif Shafak's book, where she states that Turkish families shared the guilt, the curse that can't be relieved. Human and moral laws are violated, because "The Bastard of Istanbul", this girl, the heroine of the book was born because of incest between a brother and a sister. And she being born as a result of incest becomes a symbolical figure, as if the whole Turkish nation comes up as an iconic symbol of incest, of something broken, of something rudely and harshly abused. No surprise, because when you commit this murderous act against your brother, against your closest neighbor, against people who shared the same shelter and the same food with you are turning into a tribe of savages, instead of building up a normal nation, with an unshadowed sense of statehood. That's why I might state that the very title of the book, "The Bastard of Istanbul" symbolizes Turkey and Turkish nation. And this bastard of Istanbul, Asya, being a woman, which is also very gender touchy issue, because in a sense for traditional communities life both Turkish and Armenian, being a woman is a problem and a challenge at the same time. But younger Turkish generation is somehow willing and ready to overcome the challenge of its birth, of history, and simultaneously the issue of gender vulnerability along with political and historical hurdles. Asya bears her ancestral memory together with Armenian blood. This points out to the necessity of an acceptance, because willy-nilly we have to accept what is given to us. It turns out that both girls Armanush and Asya (Armenian and Turkish) who happened to meet, have the same grand grandmother who escaped from her Turkish husband. By the way these are very realistic facts they often happen in Turkey, where Armenian women were converted into a different religions, they marry Turkish husbands, but they never forgot neither their faith nor their families after the Genocide and neither did Armanush's granny who escaped with her brother to distant America. Speaking of America, speaking of Russia, speaking of countries of other than Armenia and Turkey Elif Shafak in a very skilled manner underscores the

fact that the Armenians and Turks are closer, and the Caucasus nations are more attached to each other than distant empires.

For example, there is such a wonderful and unique case, incident told in a book, when the American woman after having divorced her Armenian husband and trying to take revenge for this divorce (because it was his initiative to start the divorce case) makes a resolution to marry a Turkish guy in order to take the revenge knowing how much Armenians and Turks hate each other. And they really do, because of this Genocide events, this dispossession and ethnic cleansing made this nations hostile to each other maybe for a long period of time. So marrying Mustafa she tries to show how wild and severe Armenian traditions are. And she tells her Turkish husband what kind of food Armenians consume saying that they ate animals intestines stuffed with rice and other species. She says: "Can you imagine they eat this sort of food?" She notices that her Turkish husband's eyes glimmered with delight and satisfaction, so he said dreamingly: "Mumbar, this dish is called mumbar, and it is very tasty". This episode definitely manifests the fact that these two nations eat the same food. This is our primary necessity vitally essential at the same time. Traditions can really integrate and disintegrate nations, and by the way Armenians can come across with very familiar names, all the names of dried fruits, dishes' names, species which are used both in Armenia and in Turkey. And we never know where these dishes originated from. Every now and then we are caught unawares by the fact that these common food names point out that we had a lot in common, but now nothing is left but these names. Even the names are ready to awaken not only negative but also positive memories, if the government of Turkey is wise enough to acknowledge the fact of Genocide. By the way, when two girls in Elif Shafak's work lead heated discussion on the fact why is it so important to acknowledge the Genocide, we can understand that acknowledgment is not yet an excuse, it is a step halfway towards understanding, so acknowledgement is something outspoken, is something revealed and as all the buried secrets they generally ruin everything. They ruin relationships between people and between countries.

Also, the book comprises two conceptual compositional tools: both ideological and symbolical. The plot encompasses the chain of the revelation of secrets. First of all through some circumventing methodic the Armenian Genocide secret is revealed, when Asya (the bastard of Istanbul) and Armanush (the survivor of the Armenian Genocide) talk on Genocide they indirectly confirm the fact of it, the fact of its impact and they just debate over the interpretations and perceptions of this crime, while Asya asserts that Armenians suffer from this psychologically, from the interiority of the complex, while Armanush admits that the Turks equally suffer because of the lack of acknowledgment and they have no possibility to go further, to move ahead to the future. There is also family secret revealed because in the end we understand that Mustafa, the father of Asya, raped his sister, and Asya was born in the result of incest. Another secret concerns the familial and therefore national history, it turns out that Asya's grandmother was an Armenian, who managed to survive the Genocide with the help of her Turkish husband, but still she couldn't forgive the death of her family, and the assassination of her relatives, so she leaves her husband.

We witness first hand that piled up secrets sooner or later get revealed bursting out like a fresh torrent sweeping everything on its way to the Truth. The book becomes more and more captivating and at the same time more and more nostalgic. The crime afflicts bodies for a time and souls for a time being. The evaluation of the current situation made in cold blood prompts a solution for both nations. Turkish people and the state should accept and face their history.

Morality is the core issue which Elif Shafak turns into the starting point of her discourse in this book, because morality should be kept with the concept of faith which is very typical in Muslim culture. By the way the concept of faith every now and then emerges the special picturesque comparisons.

"Whatever falls from the sky above, thou shall not curse it. That includes the rain.

No matter what might pour down, no matter how heavy the cloudburst or how icy the sleet, you should never ever utter profanities against whatever the heavens might have in store for us. Everybody knows this."²

From this quotation we derive the idea that the secret of birth and belonging is something compulsory like rain falling from the sky. People sometimes share common birth, common history, common destiny, irrespective of their wish or will take it or leave it, they have to handle it. Christian culture is not fatalistic it is more moralistic, while Muslim culture is more fatalistic.

Then the other compositional issue can be seen. The chapters of the book are entitled by the names of desert (cinnamon, vanilla, pistachios, wheat, orange peels) The vast amount of stuffed vine leaves, dried fruits, nuts, beautifully made Ashure desert, which really is a special one for Turkish cuisine, the process of cooking and the family of intelligent, smart and the same time obsessed Turkish woman adds to the beauty and charm this novel. Because we see that women living alone, one of them having given to a birth to a bastard, share many complexes of unknown origin, unidentified origin, one of them suffering from hypochondria, the other from depression, and these qualities can be characteristic of the whole Turkish nation, because faults and crimes are not voiced, seek retribution in this or that way. Committed crimes generate sleepless nights and restlessness of mind and soul, emotional disturbances are frequent if conscience is awake. If you are conscious of being burdened with guilt, it generally gives an outlet complexes, spiritual madness and the hypochondria and depression are types of madness. Elif Shafak directly hints about it. That's way Elif Shafak was blamed and even sued for insulting the turkishness according to their famous provision of law, because direct hints are clearly understood and captured by not only Armenian but also experienced and conscious Turkish readers.

We feel common similarities also in Armenian and Turkish gender relationships, because it seems that irrespective of religious difference the gender relationships between man and women are exactly alike, because sort

² "The Bastard of Istanbul", Elif Shafak, United States of America, 2007, Penguin Books, p. 11.

of men are a bit superior, a bit harsh and rough. The male dominance manifests itself both in Armenian and Turkish households. Here we can sense how even in the United States Armanush's father tries to be more insistent and more dictating. This sort of "dictatorship" is treated very normally by the women of Armenian family, because they think that man is the one to be responsible for and the man is the one to dictate and to instruct women. The same happens in Turkey. It is obvious in the following excerpt:

"The Golden Rule of Prudence for an Istanbulite Women: When harassed on the street, never respond, since a woman who responds, let alone swears back at the harasser, shall only fire up the enthusiasm of the latter!"³

Needless to say that the same golden rules act also for Armenian women and they are also told to behave themselves as real Armenian women, as Turkish women.

As well as the relationship between elderly and young people, because younger people sometimes are reprimanded for not treating elder people with due respect. And due respect is a notion imposed by unrecorded society rules. We see that not only personal relationships resemble each other, but also society rules resemble each other in both communities. Still there is misunderstanding and I might say forever abandoned love existing between these two nations, because they had a competitive streak, which has gone now, and they do not argue who is better, they argue who is guilty. As we turn to the punishments of Turkish families by Mustafa for incest, because they prepare Ashure the famous Turkish desert, with cinnamon, flavor butter, milk, and etc. This is a national dish as Armenian pokhindz, mixed with sweets and honey and other ingredients. Mustafa is the one who likes this dish very much.

The very traditional dishes bear the same idiosyncrasy, they are not only food, not only dishes, they are culture. Ashure is not only something to eat or to consume, it is something that identifies a person with his culture, with his hearth, with his national identity, etc.

³ "The Bastard of Istanbul", ElifShafak, United States of America, 2007, Penguin Books, p. 42.

The Genocide is both a crime and guilt, which inflicts its foreboding ominous effect on our present. And at the same time it is an ability to forgive and a chance to restart something anew. Turkish people trying to acknowledge their guilt, and Armenian people trying to forgive and forget, because life goes on and only cultural identities and commonness can form a solid basis for further if not cooperation, yet communication.

Mustafa's aunt adds poison in Ashure, and Mustafa knows about the poison facing the choice either to eat or not to eat it. He prefers to eat it. This was a retribution to his guilt for the crime that he committed towards his sister years ago. So, we can see an undercurrent implication of the idea that Turkish nation without any prerequisites should pay off for the guilt they have committed by their own hands, they have to make the decision, because the poison is added, and both nations consume it daily both in their memory and in attempt to forgetfulness..

"Then followed another drop, this time on his head. The cat rose slowly with deep discontent, and stretched his limbs before heading back into the house. Another drop. He quickened his pace.

Maybe he didn't know the rules. He just didn't know that whatever falls the sky shall not be cursed.

And that includes the rain."⁴

Սեդրակյան Անուշ, բ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ, Մշակութային հակամարտություններն ու հիշողության խնդիրը թուրքական ժամանակակից գրականության մեջ. հոդվածը անդրադառնում է հայկական և թուրքական իրականության մեջ Եղեռնի փաստի վերաիմաստավորմանն ու մշակութային ընկալման տարբերություններին:

Հայ և թուրք հերոսուհիների կենցաղային երկխոսությունների միջոցով բացահայտվում է ցեղասպանության կատարված իրողության և դրան հետևող վշտի, մեղքի և զղջման բացակայության խնդիրները: Նաև արդիական է դառնում վրեժի և արդար հատուցման նոր պատկերացումների և մոտեցումների թեման: Հոդվածում քննված է հայ-թուրքական մշակութային, գեոդերային նմանությունները, ինչպես նաև կրոնական ասպեկտը:

⁴ "The Bastard of Istanbul", ElifShafak, United States of America, 2007, Penguin Books, p. 59.

Седрабян Ануш, к.ф.н. доцент ЕГУ. Исторические культурные противостояния в турецкой литературе; статья посвящена иллюстрации исторических коллизии в свете современной интерпретации признания и принятия фактора армянского геноцида. Сам факт непризнания геноцида и отрицания собственной истории, не дает турецкому обществу увидеть перспективу развития, неомраченную ложью и чувством вины. Герои романа “Стамбульский бастард” волей неволей становится участником событий в которых переплетаются перспективы будущего, неопределенность настоящего пресущие обоим народам /армянам и туркам/.

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵՊՀ, ք. գ. ք., դոցենտ

ՆԱԻՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԵՊՀ ասպիրանտ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԲ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ¹

Բանալի բառեր – Հայոց ցեղասպանություն, բուրբական գրականություն, ժրխ-
ւորդականության քաղաքականություն, հայերի բռնի իսլամացում, հուշագրություն:

Key words: *Armenian Genocide, Turkish literature, policy of denial, forcibly
Islamization of Armenians, memoirs.*

Ключевые слова: *Геноцид армян, турецкая литература, политика отрицания,
насильственная исламизация армян, мемуары.*

Հայտնի է, որ գրականության կարևոր խնդիրներից է գեղարվեստի նյութ դարձնել տվյալ պահին հասարակությանը հուզող և արդիական խնդիրները, սակայն, միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ երկրում և հասարակության մեջ տիրող մթնոլորտը նույնպես ազդում է գրական թեմաների ընտրության վրա: Այս առումով փաստենք, որ Թուրքիայում արգելված մի շարք թեմաների հանդեպ 20-րդ դարի թուրք գրականու-թյունն ընդհանուր առմամբ որդեգրել է նույն դիրքորոշումը: Այդ թեմանե-րի շարքում են 1915-23 թթ. Հայոց ցեղասպանությունը, աքսորը, այդ տարիներին բռնի կրոնափոխված՝ իսլամացած, հայերի խնդիրները: Գրականությունը նաև համարվում է հասարակության մտածելակերպի,

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսա-կան աջակցության շնորհիվ՝ № SCS 13YR-6B0034 գիտական թեմայի շրջանակներում:

աշխարհայացքի լավագույն արտահայտիչը, և Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայում տարածված ժխտման, փաստերի խեղաթյուրման, լուրջան մատնելու միտումն ամբողջությամբ արտացոլվել է ժամանակի թուրքական գրականության մեջ: Կարելի է ասել, որ առանձին ու հպանցիկ անդրադարձներից բացի, թուրք գրականությունը մինչև վերջերս Հայոց ցեղասպանության խնդրին հարկ եղած ուշադրությունը չէր դարձնում: Ավելին՝ հայկական թեմատիկան թուրք գրականության մեջ առավելապես «ներկայացված» էր բացասական հերոսների, դավաճանների, թշնամիների կերպարների միջոցով:

Եթե պահպանողական կամ ազգայնամոլական թուրք գրողների թշնամական վերաբերմունքն առհասարակ փոքրամասնությունների և մասնավորապես՝ հայերի նկատմամբ կարելի է բացատրել նրանց որդեգրած գաղափարախոսություններով², ապա առաջադեմ և սոցիալիստ համարվող թուրք գրողների լուրջունն առնվազն տարօրինակ է: Փաստենք, որ անցյալ դարի 30-ական թվականներից թուրք գրականության մեջ ձևավորվող ձախ, սոցիալիստական ուղղվածությունը հատկապես բուռն ծաղկում սկսեց ապրել 1940-ական թվականներին: Քննադատական և սոցիալական ռեալիզմի ուղղության շրջանակներում ստեղծագործող, մարդկանց տարատեսակ իրավունքների պաշտպանության դիրքերից հանդես եկող, սոցիալական, սեռային անհավասարությունը քննադատող մի շարք ստեղծագործություններում անգամ անդրադարձներ հայկական խնդիրներին հանդիպում են հազվադեպ, այն էլ հպանցիկ ու հաճախ անուղղակի: Թուրքական իրականության համար սա, միգուցե, արդարացում ուներ. պայմանները թույլ չէին տալիս կամ կարման անտեղյակության խնդիր: Ի դեպ, անտեղյակության խնդրին է անդրադառնում թուրք հայտնի ձախակողմյա գրող Վեդաթ Թուրքալին (ծնվ. 1919 թ.) Հրանտ Դինքի հետ գրույցում՝ պատասխանելով վերջինիս հարցին, թե ինչո՞ւ թուրքական ձախակողմյա շարժումը որևէ կերպ չի արձագանքել Հայկական հարցին. «Մեր սերունդը չգիտեր, թե ինչեր

² Գրաքննադատ Օմեր Թուրքեշը նշում է, որ ժամանակակից թուրք գրականության մեջ բացի թուրքերից մնացած ազգերը ներկայացվում են որպես թշնամի, ալսինքն՝ սա բացասական կերպար կերտելու ամենատարածված և ընկալելի ձևն է: St'ü Ertan O., Ermenileri "Ötekileştiren" edebiyat ve "Hayatta Kalanlar", Agos, 08.02.2008.

են եղել»³, - ասել է թուրք գրողը և հավելել. «Ես անձամբ Հայկական դեպքի մասին մի շարք մանրամասներ ավելի ուշ եմ իմացել»⁴: Այդ նույն հարցազրույցում Հրանտ Դինքը մի քննադատական հարց-եզրահանգում էլ է անում կապված թուրք հայտնի կոմունիստ բանաստեղծ Նազրմ Հիքմեթի հետ, ով երկար տարիներ՝ որպես վտարանդի, ապրել է Մոսկվայում: Ըստ Դինքի, չնայած այն հանգամանքին, որ Նազրմ Հիքմեթը Թուրքիայի ձախակողմյա շարժման մեջ ունեցել է հայազգի ընկերներ, ավելին՝ Մոսկվայում ապրելու ժամանակ ընկերություն է արել Խորհրդրդային Հայաստանից մի քանի հայ բանաստեղծների հետ, սակայն միևնույն է Հայոց ցեղասպանության թեմային որևէ կերպ չի անդրադարձել⁵: Ավելի ուշ խոսելով թուրք մտավորականների և ընդհանրապես հասարակության անտեղյակության մասին՝ Հրանտ Դինքն ամբողջացրել և մանրամասնել է իր մտքերը. «1915-ից հետո, իրականում, Թուրքիայի հասարակությունն իր գյուղացիներով, քաղաքացիներով շատ լավ գիտեր, թե այդ ժամանակաշրջանում ինչեր են տեղի ունեցել: Շատերը վկան են եղել տեղի ունեցածների, որոնք վատ և ցավալի էին ու դրա համար պետք էր լռել: Այս հարցում պետական դիրքորոշումն էլ լռությունը պաշտոնականացրեց: Այս թեման դարձավ տաբու: Ոչ միայն պահպանողականները, այլև իրենց հեղափոխական համարողներն էլ այս թեմայով երկու խոսք չկարողացան ասել: Նազրմ Հիքմեթի բանաստեղծություններում Հայկական հարցի վերաբերյալ լռի մեկ տող է տեղ գտել, այդքանը միայն»⁶:

Եվ այնուամենայնիվ, որոշ թուրք գրողների՝ հիմնականում ձախ կողմնորոշման, ստեղծագործություններում, տողերի արանքում երբեմն հանդիպում են մտքեր, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանությանը: Հարկ է նշել, որ 1923 թ. հիմնադրված Թուրքիայի Հանրապետությունում առաջ է եկել հողի խնդիր, ավելի կոնկրետ՝ լքված հայկական գույքի և հողերի խնդիրը, որը շատ հաճախ վերածվել է վեճի դրանց տիրացած մուսուլմանների միջև: Հողի մասնատման և բաժանման խնդրին

³ **Türkali V.**, Bizim kuşağımız neler olduğunu bilmiyordu, Agos, 28.05.2004, (Հրանտ Դինքի հարցազրույցը թուրք գրող Վեդաթ Թուրքալիի հետ):

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ **Kaplan S.**, 1915-te ne oldu?, İstanbul, 2005, 2-inci baskı, s. 77-78.

անդրադարձած թուրք գրողներից մի քանիսը երբեմն տողատակում խոսում են հայկական լքյալ գույքի, այդպիսով նաև Հայոց ցեղասպանության մասին:

Թուրք հայտնի գրող Քեմալ Թահիրը (1910-1973 թթ.) առաջիններից է, ով անդրադարձել է Հայոց ցեղասպանության խնդրին և «Գերված քաղաքը» եռագրության առաջին հատորում՝ «Գերված քաղաքի մարդիկ» (1956)՝ խոսելով Գալուստ Գյուլբենկյանի և նրան վաճառվող հողի մասին՝ Թահիրը թերևս առաջին անգամ թուրք գրականության մեջ կիրառում է «հայկական կոտորած» եզրը. «Գյուլբենկյան ազգանունով մեր մի քաղաքացու ես ծախելու հողը, ավելի ճիշտ կլինի ասել «մեր նախկին քաղաքացուն»: Մեր հայ քաղաքացիներից մեկն է այս Գյուլբենկյանը: Չեր հողը մի հային վաճառելով պատերազմի ժամանակ իրագործված հայկական կոտորածի (ընդգծումը մերն է Ռ. Մ.) մեղքից էլ մաքրված կլինեք»⁷: Քեմալ Թահիրի 1969 թ. տպագրված «Գայլային օրենք» գրքում ևս հանդիպում ենք հետաքրքիր տողերի. «Աբդուլ Համիդի ժամանակ հայկական կոտորածներում մեր հանցակիցները ռուսական ցարն ու անգլիական կառավարությունն էին: Հայկական կոտորածի գլխավոր մեղավորն էլ գերմանացիներն են»⁸: Թահիրն իր ստեղծագործություններում անդրադառնում է նաև հայկական գույքի թալանին և նկարագրելով իր հերոսներից մեկին՝ նա նշում է. «Ահա հենց այդ պահին հայկական ջարդը Հաջը Մուսթաֆային օգնության հասավ: Ոստիկանական տեղամասի կողքին գտնվող գյավուր Մկրտիչին պատկանող քարե խանութի դուռը հանգիստ բացեց՝ ասես վարձակալել էր և տեղավորվեց ներսում: Ամեն գիշեր փակոցափեղկերը փակելուց հետո, ճրագի լույսի տակ բոլոր կողմերը քանդում էր: Ի վերջո ոսկով լի երկու նավթի տարա գտավ»⁹: Քեմալ Թահիրի 1970 թ. հրատարակված «Խոշոր գույքը» գրքում ևս հայկական կոտորածների փաստի ընդունման մասին ակնարկ կա. «Հայկական կոտորածի մասին հարցրեց: Էհ, եղել է մի բան: Եթե չլիներ՝ լավ կլիներ, բայց դե եղել է»¹⁰:

⁷ **Tahir K.**, Esir şehrin insanları, İstanbul, 2007, 7-inci baskı, s.54.

⁸ **Tahir K.**, Kurt Kanunu, İstanbul, 2005, s. 226

⁹ **Tahir K.**, Damağası, İstanbul, 2007, 2-inci baskı, s.37-38.

¹⁰ **Tahir K.**, Büyük Mal, İstanbul, 1970, s.161.

20-րդ դարի ամենահայտնի և տաղանդավոր արձակագիրներից Օրհան Քեմալի (1914-1970 թթ.) «Արյունոտ հողեր» վեպում խոսվում է հայերի լքյալ հողերի մասին. «Ազգային ազատագրական պայքարից»¹¹ հետո, Տեր Աստված, ժողովուրդը թե ինչպես հարձակվեց հայերից, հույներից մնացած գույքերին՝ էլ մի ասա»¹²: Հայոց ցեղասպանության խնդրին անուղղակի անդրադարձների ենք հանդիպում նաև թուրքական արձակի մեկ այլ խոշոր ներկայացուցչի՝ Յաշար Քեմալի (1923-2015 թթ.) տարբեր ստեղծագործություններում: Օրինակ՝ «Աբչասագի աղաները» եռագրության կերպարներից մեկին՝ Մուալլիմ Ռուսթեմին, գրողը հետևյալ կերպ է ներկայացնում. «Նա էր, որ գիշերվա մթին մի արծվի պես իջնում էր հայերի վրա, որոնք փորձում էին փախչել ու փրկվել, բոլորին կտոր-կտոր անելով կամրջից նետելուց հետո խուրջիներով նրանց ոսկիները վերցնում և տանում տալիս էր Ադամայի փաշային»¹³: «Անձրևի թռչուն (քարանդը)» վեպում, խոսելով հայերի լքյալ հողերի մասին՝ Յաշար Քեմալը նկարագրում է գավառապետի պաշտոն ստացած Իսմայիլի և նրա մոր գրույցը պաշտոնավարման գավառ մեկնելուց առաջ. «Մայրը Իսմայիլ աղային այսպես էր խրատում. «Մեկ էլ քեզից խնդրանքս, որդիս, եթե գնաս այդ գյուղաքաղաք, հայերից մնացած տները, դաշտերը չվերցնես: Այն բնում, որի տերը փախել է, այլ թռչուն չի կարող ապաստան գտնել: Բույն քանդողը բույն չի ունենա: Բռնության դաշտում բռնություն է աճում»¹⁴:

Ինչպես վերը նշվեց, թուրք հայտնի կոմունիստ բանաստեղծ Նազըմ Հիքմետը (1902-1963 թթ.) ևս հայկական խնդրին հպանցիկ է անդրադարձել՝ մեկ-երկու տողով: Նրա «Կռնատ Իսմայիլը» բանաստեղծությունում հանդիպում ենք հետևյալ տողերին.

¹¹ Այս տերմինով է բնորոշվում Մուսթաֆա Քեմալի կողմից ղեկավարված շարժումը, որը և հանգեցրեց Թուրքիայի Հանրապետության հիմնադրմանը: Հայ պատմագիտության մեջ մեզ համար անընդունելի այս բնորոշման փոխարեն գործածվում է «քեմալական ազգայնամոլական շարժում» բառեզրը:

¹² **Çilingir O.**, Türk romanında 1915 ve örnek eserler (5), Agos, 01.02.2008.

¹³ Նույն տեղում:

¹⁴ **Kemal Y.**, Yağmurcuk Kuşu, İstanbul, 1980, 4-üncü basım, s. 95.

Իսմայիլին զորահավաքի ժամանակ,
Չնայած 16 տարեկան էր,
Բռնեցին բանակ ուղարկեցին,
Յոզղաթի կողմերը ոստիկան գնաց,
Եվ հայերին կոտորելիս
Մինչև պորտը արյան մեջ թաղվեց ¹⁵:

Նազըմ Հիքմեթի մեկ այլ՝ «Երեկոյան զբոսանք» բանաստեղծության մեջ խոսելով հայազգի նպարավաճառ Կարապետի մասին՝ նշում է.

Նպարավաճառ Կարապետի լույսերը վառվեցին,
Չներեց այս հայ քաղաքացին
Քրդական լեռներում հոր մորթվելը,
Սակայն սիրում է քեզ,
Քանի որ դու էլ չներեցիր
Այս սև բիծը
Թուրք ժողովրդի ճակատին քաղցների¹⁶ :

21-րդ դարի սկզբին թուրք գրականության մեջ և հատկապես արձակում տեղի ունեցավ որոշակի փոփոխություն. ձևավորվեց մի հոսանք, երբ գրականության թեմա է դառնում 1915-ին առևանգված կամ հրաշքով փրկված ու իսլամացված հայ կանանց հարցը: Տպագրվող գրքերում հատկապես աչքի է զարնում փաստագրական հիմքը: Իսլամացված հայերի խնդրի քննարկման հնարավորության մասին խոսելիս շատերը նշում են, օրինակ, Թուրքիայում եվրախնտեգրման ճանապարհին նկատվող որոշ ազատություններ, սակայն թեմայի հրապարակայնացման շարժիչ ուժը համարվում են իսլամացված հայերի սերունդները, ավելի կոնկրետ՝ թոռները ¹⁷ :

Արդեն հրապարակում կան մեկ տասնյակից ավել փաստագեղարվեստական ստեղծագործություններ, որոնց գլխավոր հերոսը բռնի իս-

¹⁵ **Berktaş H.**, “Nazım, Ermeni kıyımı, bir kolej hikayesi”, Taraf, January 12, 2008.

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ **Başyurt E.**, Ermeni Evlatlıklar: Saklı Kalmış Hayatlar, İstanbul, 2006, 2-inci baskı, s. 11.

լամնացված հայ կինն է՝ իր բարդ հոգեբանական աշխարհով: Չնայած իսլամացված հայ կանանց կերպարների միջև եղած որոշ տարբերություններին, կան նաև մի շարք ընդհանուր գծեր: Ուշադրություն է գրավում հատկապես այն հանգամանքը, որ ամբողջ կյանքում իրենց ուղեկցող տրավմատիկ հիշողությունների մասին այդ կանայք նախընտրել են բարձրաձայնել առավելապես կյանքի վերջում: Այսինքն՝ ամբողջ կյանքում թաքցրել են դա՝ վախենալով կամ գուցե չուզենալով ցավ պատճառել իրենց զավակներին: Կա նաև անցյալի ցավալի հուշերը թաքցնելու մեկ այլ կարևոր պատճառ, այն է՝ նրանք չեն գտել մի հարմար գրուցակից, ում կկարողանային վստահել իրենց գաղտնիքը: Նմանատիպ պատմությունների համար ընդհանրական է այն, որ պատմելով ամբողջ կյանքում թաքցրած տրավմատիկ հիշողությունների մասին՝ վերապրած հայուհիները, գուցե ենթագիտակցորեն ցանկացել են ազատվել այդ բեռից կամ թեթևացնել այն: Ուշագրավ է նաև այն, որ այդ տրավմատիկ հուշերի ունկնդիր թոռները ևս դառնում են տրավմայի յուրահատուկ կրող և արդեն իրենք են ձգտում ազատվել դրա բեռից:

Իսլամացված հայ կանանց վերաբերյալ գրքերում աչքի են զարնում տատ-թոռ հարաբերությունը, փոխադարձ կապվածությունն ու վստահությունը, ինչը, կարելի է ասել, այս թեմային բնորոշ կարևոր առանձնահատկություններից է: Տարբեր ժողովուրդների գրականությունների մեջ տարածված և գրականագիտության խնդիրներից մեկը հանդիսացող հայրեր-որդիներ խնդիրը թուրք գրականության մեջ իսլամացված հայ կանանց մասին պատմող ստեղծագործություններում վերածվել է յուրահատուկ՝ տատ-թոռ խնդրի: Թուրք գրաքննադատ Օմեր Թուրքեշը ցեղասպանության տրավմատիկ հիշողությունները համարում է յուրահատուկ ժառանգություն, որը տատերը թողնում են թոռներին:

Սկսած 2000-ական թվականների սկզբից թուրքական գրականության մեջ տպագրվեցին մի շարք գրքեր, որոնց գլխավոր հերոսուհին կամ հերոսուհիներից մեկը Հայոց ցեղասպանության տարիներին բռնի կրոնափոխ հայուհին է: 2004 թ.-ին թուրք գրող Քեմալ Յալչընի Գերմանիայում հրատարակված գրքում՝ «Սարը Գեփին» («Նորահարս»), հանդիպում ենք Ադըյամանի հայտնի Բերսումների (Պարսամ) տոհմից գեղեցկուհի Սիրանույշի պատմությանը, որին փրկել և այնուհետև նրա

հետ ամուսնացել էր շրջանի հայտնի քուրդ աղաներից մեկը՝ Նուրին։ Մինչ քրդի կինը դառնալը Սիրանույշը մի պայման էր դրել նրա առջև, համաձայն որի Նուրին պարտավորվում էր Սիրանույշի գերդաստանից փրկել տասը երեխայի և ահա հենց դրա շնորհիվ է, որ Բերսունների տոհմը շարունակվում է։ Յալչընի գրքում Նուրի աղայի և Սիրանույշի կրտսեր որդին՝ Մեհմեթ Նուրին դրվագներ է պատմում մոր կյանքից, որտեղ ցայտուն կերպով երևում է իսլամացված հայուհու ապրած տրավմատիկ առօրյան և հիշողությունները. «Մորս իսկական անունը Սիրանույշ էր, հորս հետ ամուսնանալուց հետո նրան Հանըմ էին ասում։ Մայրս երիտասարդ տարիքում հաճախ էր ինձ և ավագ եղբայրներիս ասում. «Ապա ինձ մի անգամ Սիրանույշ ասեք, լսեմ»։ Երբ նրան Սիրանույշ էի ասում, փաթաթվում էր ինձ, շարունակ համբուրում ու արտասվում։ Երեխա ժամանակ մորս արտասվելուն նայելով՝ ես էլ էի արտասվում, սակայն չգիտեի, թե մայրս ինչու է լալիս։ Մայրս երբեմն լեռների, թռչունների, քարերի, հողի, ծաղիկների հետ էր խոսում, գրուցում։ Ես չէի հասկանում այն լեզուն, որով նա խոսում էր։ Երբ հարցնում էի, շոյում էր գլուխս ու ասում. «Սա մորս, հորս լեզուն է, քո քեռիների լեզուն է, հայերի լեզուն է։ Հայերի լեզուն մորս արցունքների լեզուն էր»¹⁸։

Իսլամացված հայ կանանց թեմայով Թուրքիայում տպագրված առաջին ստեղծագործություններից է Իրֆան Փալալըի «Աքսորի երեխաները. տատս հայ է եղել» հուշագրական վեպը, որը հիմնված է փաստերի վրա, սակայն տարբեր նկատառումներով այստեղ հերոսների անունները փոխված են։ Այս գրքում տեսնում ենք տատի՝ իսլամացված հայ կին Ֆաթմայի և թոռան՝ Դեմիրի յուրահատուկ կապը, որի արդյունքում տատն առաջացած տարիքում հենց նրան է վստահում իր կյանքի գաղտնիքը։ Այս կինը, չնայած առաջացած տարիքին, ամենայն մանրամասնությամբ հիշում է իրենց կյանքը մինչև ցեղասպանությունը, արքայի ճանապարհը, կոտորածը, հոր սպանությունը և մոր մահը։ Այս բոլոր տեսարաններն ուղեկցել են նրան իր ողջ կյանքի ընթացքում։ Նրա հավաստմամբ, իրենց քարավանը սկզբում 80 հոգուց է բաղկացած եղել. «Վերջում միայն ես մնացի, կարծում եմ, և միգուցե ինձ նման փրկված

¹⁸ Yalçın K., Sarı Gelin, Bochum, 2004, s. 294.

մի քանի աղջիկ ևս»¹⁹: Նա հիշում է նաև իրենց քարավանի տղամարդկանց, այդ թվում և իր հոր սպանության պահը. «Քիչ անց հերթով բոլոր տղամարդկանց սպանեցին: Երկու մարդ նրանց բռնում էր, երրորդը՝ սպանում: Ամենավերջում հորս սպանեցին»²⁰: Մորից կտրվելու պահը, ինչպես նմանատիպ շատ հերոսների պարագայում, Ֆաթմա տատիկի մեջ ևս վառ է մնացել: Տղամարդկանց սպանելուց հետո քարավանի կանանց տարել են ծառերի մոտ՝ ամենայն հավանականությամբ բռնաբարելու. «Մայրս այդ կողմ գնալուց առաջ ինձ մոտ եկավ և ինչ-որ բաներ ասաց կամ շշմռաց, սակայն չեմ հիշում, թե ինչ ասաց, միայն հիշում եմ, որ ինձ համբուրեց: Դրանից հետո այլևս մորս հետ երբեք չգրկախառնվեցինք և չհամբուրվեցինք: Ինձ մոտ եկավ, ինձ համբուրեց, միայն դա գիտեմ: Պարզվում է, որ դա նրա վերջին համբույրն էր, որովհետև հաջորդ օրը մայրս ցրտից սառչելով, մահացավ»²¹: Ընդհանրապես նմանատիպ ստեղծագործություններում նկատելի է, որ իսլամացված հայ աղջիկ երեխաները հիշում են, որ ունեցել են բարեկեցիկ ընտանիքներ և շրջապատված եղել հոգատարությամբ, սակայն հետագայում, ճիշտ հակառակը, ենթարկվել են տարատեսակ ճնշումների, անարգանքի: Իրենց մանկությունից հուշ մնացած գուրգուրանքի կամ հոգածության մի նշույլ հիշողությունը պահել են, և գուցե դա է նրանց ուժ տվել դիմագրավելու փորձություններին:

Իր հարազատների սպանության տեսարանները խոր հետք են թողել Ֆաթմայի վրա, և նա ողջ կյանքում վախեցել է մահից: Այդ պատճառով էլ հետագայում նա նույնիսկ խուսափել է գնալ մերձավորների թաղմանը, քանի որ դա ծանր է եղել իր համար և հիվանդագին, սակայն այդ ամենի բացատրությունը թաքնված է հետևյալ պարզ և, միևնույն ժամանակ, խորիմաստ նախադասության մեջ. «Երբ մեկի մահվան մասին եմ լսում, հորս սպանությունն է աչքիս առաջ գալիս...»²²:

Յուրահատուկ կապվածությունը թոռներից որևէ մեկի հետ իսլամացված հայ կանայք դիտել են որպես հենման կետ, սակայն այդ կապ-

¹⁹ Palah İ., Tehcir Çocukları: Nenem bir Ermeniymiş, İstanbul, 2005, s.14-15.

²⁰ Նույն տեղում, էջ 16:

²¹ Նույն տեղում, էջ 16-17:

²² Նույն տեղում, էջ 41:

վաճության մեջ նրանք տեսել կամ ցանկացել են մմանություն տեսնել իրենց նախկին հայկական ընտանքի հետ: Օրինակ՝ Ֆաթմա տատիկը թոռանը՝ Դեմիրին, իրենց վերջին հեռախոսագրություն հորորում է շուտ գալ, որպեսզի նրան տեսնի և կարոտն առնի, միգրցե վերջին անգամ կրծքին սեղմի, քանի որ զգում է իր մոտալուտ մահը և ավելացնում. «Դու և՛ իմ զավակն ես, և՛ իմ հայրն ես: Դու գիտե՞ս, որ հայրս քեզ մման էր, միայն թե դու մի քիչ սև ես, մա ավելի բաց էր»²³:

Իսլամացված հայ կանանց թեմատիկայով է գրված ազգությամբ բուրդ Յուսուֆ Բաղիի (ծնվ. 1956 թ.) «Աղջիկ» հուշագրական վիպակը, որը կրկին հենված է ականատես վերապրողի պատմած հուշերի վրա և գրքի հենց սկզբում հեղինակը նշում է, որ ամեն ինչ իրականություն է և ոչ թե երևակայություն կամ գեղարվեստական հնարանք: Ֆաթմա վերանվանված Մարիամը տասնամյակներով թաքցրել է ապրած վիշտը և միայն առաջացած տարիքում է գտել մի վստահելի գրուցակցի՝ ի դեմս իր թոռան՝ գրքի հեղինակ Յուսուֆ Բաղիի, որին պատմել է իր հիշողությունները: Փոքր հասակում ցեղասպանության սարսափներն ապրած Մարիամը բավական լավ հիշել է իր ծննդավայրը՝ Էրզրումի մահաճգի Կարսքափը գյուղը, իրենց բարեկեցիկ և երջանիկ ընտանիքը, հորը, մորը, երկու եղբայրներին, որոնց բոլորին կորցրել է: Ինչպես գրում է գրքի հեղինակ Յուսուֆ Բաղին. «Ֆաթման իր ինքնության հետ կապված այս տեղեկությունները ոչ մեկի հետ չէր կարող կիսել, միայն ինձ էր վստահում, և երբ ես հարցեր էի տալիս, ինձ չէր մերժում և որոշ բաներ պատմում էր»²⁴: Սակայն, ըստ երևույթին, ապրած վախն է եղել պատճառը, որ մույնիսկ առաջացած տարիքում Մարիամը խնդրել է, որ պատմածը հրապարակվի միայն իր մահից հետո:

Նրա հիշողությունում վառ է մնացել իրենց ընտանիքի փախուստի նախապատրաստական փուլը: Ցեղասպանության ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ զգալով մոտալուտ վտանգը՝ հայերը որոշել են փախչել կամ թաքնվել և, որպեսզի լրացուցիչ դժվարություններ չձագեն, երբեմն թողել են մանկահասակ երեխաներին՝ մաս նրանց անվտանգությունից ելնելով: Մարիամը պատմում է, որ մի գիշեր հանկարծակի արթ-

²³ Նույն տեղում, էջ 122:

²⁴ **Bağı Y.**, Ermeni kızı. Ağçik, İstanbul, 2007, s. 7.

նանալով՝ տեսնում է տան անցուղարձը և փախուստի պատրաստվող իր ծնողներին: Տեղի տալով նրա արտասուքին՝ ծնողները որոշում են նրան նույնպես վերցնել իրենց հետ, սակայն քաքցնում են գյուղացիներից կազմված քարավանից, քանի որ արդեն պայմանավորվել էին երեխաներին չվերցնել: Մարիամը պատմում է, որ փախստական հայերի քարավանը ցերեկները թաքնվում էր, իսկ գիշերները քայլում: Ինչպես նշում է նա. «Մենք փախչում էինք և՛ կառավարությունից, և՛ հասարակ ժողովրդից»²⁵: Տասնհինգ օր տևած փախուստից հետո վերջանում է սննդամթերքը, ջուրը և բացի այդ պետության համար աշխատող որոշ քրդեր իմանում են փախստական հայերի մասին ու սկսում հետապնդել նրանց: Քարավանի առաջնորդները, այդ թվում և Մարիամի հայրը, որոշում են հեռանալ, որպեսզի ուտելիք հայթհայթեն և միգուցե կանխեն մոտալուտ վտանգը: Նրանց գնալուց հետո քարավանը շրջապատվում է ձիավոր զինվորների և քաղաքացիական հագուստով մարդկանց կողմից: Տղամարդկանց ձեռքերն անմիջապես ձեռքերը կապում են և ամբողջ քարավանին չորսական հոգի շարքի ձևով դասավորելով՝ հրամայում քայլել: Այդպես մի քանի օր քայլելուց հետո հասնում են Մարդիմում տեղակայված հավաքատեղի, ուր բերել էին տարբեր վայրերից աքսորյալ հայերի: Մի քանի օր այդ ճամբարում ահավոր պայմաններում մնալուց հետո մի առավոտ զինվորները սկսում են ճամբարից մոտ 60 մարդ առանձնացնել և կապկպելով տանել անհայտ ուղղությամբ: Քիչ հետո պարզվում է, որ այդ մարդկանց տանում էին սպանելու: Փոքրիկ Մարիամի մոտ վառ է մնացել իր ընտանիքի սպանդի տեսարանը. «Երեկոյան կողմ փոքր մի խումբ էինք մնացել, սպասում էինք, թե երբ են գալու մեզ վերցնելու: Գիտակցելով մահվան էինք գնում: Ես փոքր էի, չէի գիտակցում, սակայն քարավանի մյուս մարդիկ շատ լավ գիտեին, թե վերջը ինչ է լինելու: Հավաքատեղիից 500 մետրի չափ հեռացանք: Հավաքատեղին հսկող զինվորները մեզ հանձնեցին դահիճներին: Դահիճները ձեռքներին ունեին թրեր, իսկ գոտկատեղին՝ դաշույններ: Գոտիների տակի դաշույնների և թրերի վրայի արյունն աչքերիս դիպավ: Մեր խումբը վերցրած դահիճը քառասուն տարեկան, կարճահասակ, շավար

²⁵ Նույն տեղում, էջ 9:

և ժիլետ հագած, հաստ և սև ունքերով, մուգ մաշկով, սև բեղերով, գլխին համայիլով մի մարդ էր: Այդ մարդը իմ մորը և երկու եղբայրներին սպանեց»²⁶: Դահճի կերպարը ամենայն մանրամասնությամբ տպավորվել է Մարիամի հիշողությունում և ամբողջ կյանքում ուղեկցել նրան: Այդ ամենի պատճառով նա կյանքի տարբեր տարիներին խոր հոգեկան ապրումներ է ունեցել, սակայն դրանք թաքցրել է անգամ իր երեխաներից: «Եղբայրներիս աչքերիս առաջ թրով հարվածելով գլխներին՝ սպանեցին և մարմինն ու գլուխը իրարից բաժանելով նետեցին հորը: Մինչև սպանելը նրանց միայն մի հարց էին տալիս. «Իսկամ ընդունո՞ւմ եք»: Նրանց բացասական պատասխանից հետո դահիճը իջեցնում էր սուրը: Գլուխը մի կողմ, մարմինը մեկ այլ կողմ էին նետում: Այդ ընթացքում ես շարունակ լալիս էի, ինձ մորս գրկից վերցրին: Մորս և եղբայրներիս աչքիս առաջ սպանեցին: Ես շոկի ենթարկվեցի: Շարունակ լալիս էի, սակայն միայն ես չէի, որ լալիս էի: Հարյուրավոր հայեր իրենց մահվան հերթին սպասելիս մեկը պապանձվել էր, մեկը լացում էր: Մեկի եղբորը, մեկի հորը, մեկի սիրելիին նրանց աչքի առաջ գլխատում էին: Մարդ ինչպես կարող է չլացել, որդիս»²⁷: Նկատելի է, որ սպանության տեսարանը խոր հետք է թողել Մարիամի վրա, և նա բազմիցս դա կրկնում է: Փոքրահասակ աղջկա հիշողության մեջ տպավորվել է նաև այն հանգստությունը, որով դահիճները կատարում էին իրենց գործը: Հետևյալ տողերը լավագույնս ներկայացնում են ամբողջ տեսարանը. «Ես իմ այս ապրածների շոկի մեջ էի, երբ մի ձիավոր մեզ մոտ եկավ: Հորի մոտ գտնվող դահիճներին ասաց՝ «Գործերին հաջողություն», և դահճապետ Իբրահիմն ընդհատեց գործը, գնաց ձիավորի մոտ: Նստեցին, խոսեցին, հռչում էին, կարծես սպանդանոցում անասուն էին մորթում: Առանց վախենալու, ամաչելու պատմում էին իրենց արածները, ծիծաղում: Պարզվեց՝ այդ ձիավորն էլ է դահիճ և մի այլ հորի մոտ է աշխատում»²⁸: Այս ամենը տեղի է ունենում փոքրահասակ երեխաների աչքի առաջ, որոնք լալիս են և սպասում իրենց ճակատագրին: Մինչև դահիճները գրուցել են իրար հետ, նրանցից մեկը նկատել է փոքրիկ Մարիամին և հարցրել մյուսին.

²⁶ Նույն տեղում, էջ 11:

²⁷ Նույն տեղում, էջ 13:

²⁸ Նույն տեղում, էջ 14:

«Այս փոքրիկ աղջիկը ի՞նչ գործ ունի այստեղ»: Դահիճ Իբրահիմն էլ պատասխանել է. «Սալիհ, եթե ուզում ես, դու նրան քեզ վերցրու, իմ տանը լիքը կան սրանցից: Թե չես ուզում, ես կվերցնեմ»:²⁹ «Լավ, շատ սիրուն աղջիկ է, ես ինձ կվերցնեմ»²⁹: Ահա այսպես 7 տարեկան Մարիամը բաժին է հասնում դահիճ Սալիհին, որը նրան տանում է իր տուն, այնուհետև իսլամացնում և տալիս Ֆաթմա անունը: Սակայն երեխան երկար ժամանակ մղձավանջի մեջ է եղել իր տեսածների ազդեցությունից, գիշերները սարսափներ տեսել, չի կարողացել քնել, ինչպես ինքն է ասում՝ իր ընտանիքի դահիճ Իբրահիմի պատկերը չի հեռացել հիշողությունից: Հետաքրքիր է, որ դահիճն այն աստիճան է տպավորվել նրա մեջ, որ տարիներ անց էլ պատահաբար տեսնելով նրան՝ անմիջապես ճանաչել է և կրկին վերապրել այդ ամբողջ սարսափները: Սակայն կրկին իր մեջ է պահել ապրումները, այսինքն՝ ենթարկվել նոր տրավմաների և այդ մասին ոչ մեկին չի պատմել. «Իհարկե, ոչ մեկին չասացի, իմ մեջ մնաց: Եվ ոչ մեկն էլ չուների, որն ինձ գաղտնընկեր կլիներ, ես ոչ մեկին չէի վրստահում և գաղտնիքներս չէի ասում»³⁰: Դահիճի հետ հանդիպման մեկ այլ դրվագ էլ է ներկայացված գրքում, որտեղ միևնույն ժամանակ ի ցույց են հանվում Մարիամի հոգեկան տանջանքները: Մի օր Մարիամի հարևանի տանը հյուրեր են գալիս և նրանից խնդրում են օգնել սեղան պատրաստելու հարցում: Գնալով հարևանի տուն՝ Մարիամը տեսնում է, որ հյուրը իր ընտանիքի դահիճն է՝ Իբրահիմ Հոփանը, և Մարիամը կրկին վերապրում է մանկության սարսափները. «Երբ նայում էի հյուրի դեմքին, վերհիշում էի այն պահը, երբ կանգնել էր հորի գլխին: Երբ նա խոսում էր աչքիս առաջ էր գալիս այն պահը, թե ինչպես բարձր ձայնով բղավում էր մորս վրա: Երբ ժպտում էր հիշում էի այն պահը, երբ մյուս դահիճ՝ Սալիհի հետ նստած զրուցում էր: Երբ ծխախոտը բերանն էր դնում, միտքս էր գալիս այն պահը, երբ հորի մոտ գլխատեց իմ եղբայր Մեքլին: Դե հիմա արի ու ճաշ պատրաստիր ու կերակրիր այս մսագործին»³¹:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում, էջ 36:

³¹ Նույն տեղում:

Մարիամի գաղտնապահության մեջ կարևոր դեր է խաղում նաև միջավայրը, որտեղ հայ լինելը, մեղմ ասած, հարգի չէր, և ինչպես ասում է ինքը՝ Մարիամը. «Որևէ մեկին իմ վիշտը չէի կարող ասել, որովհետև եթե ասեի, ինձ կոչնչացնեին, կասեին՝ Ֆաթման դեռ հայ է»³² : Կյանքի վերջում բռնանը՝ Յուսուֆին պատմելով իր կրած տառապանքները՝ նա ասում է բնութագրական մտքեր, որոնք ցույց են տալիս թե՛ տրավմատիկ հիշողությունների առկայությունը, և թե՛ այն միջավայրի բացակայությունը, որը կօգներ ազատվել դրանցից. «Իմ ամենամեծ ցավը գիտե՞ս որն է, Յուսուֆ, տղաս: Ես այս գաղտնիքներն այսքան տարի թաքցրել եմ, քանի որ ոչ մի գաղտնիկեր չեմ կարողացել գտնել, ոչ մեկը չկար, որին վստահեի: Ես էլ ձգտեցի մոռանալ, սակայն սրանք մոռացվող դեպքեր չէին»³³:

Իսլամացված հայ կանանց թեմայով գրված ստեղծագործությունների շարքին է դասվում Գյուլչիչեք Գյունել Թեքինի «Սև պատանք» փաստագրական գիրքը, որտեղ հեղինակը հավաքել է իսլամացված մի քանի հայ կանանց պատմություններ: Գրքի ենթավերնագիրն արդեն խոսում է. «Իսլամացված հայ կանանց դրաման»: Գրքում առկա մի քանի պատմությունները ունեն որոշակի ընդհանրություններ, որոնք բնորոշ են թեմատիկային, ուստի կցանկանայինք անդրադառնալ այդ պատմություններից մեկին: Հատկապես ուշագրավ է Խարբերդի Քուլվենք գյուղից Վարթեր Թումաջանյանի պատմությունը. ցեղասպանությունից կարճ ժամանակ առաջ Վարթերի ավագ եղբայրը փախչում է Ռուսաստան, այնտեղից էլ՝ Ամերիկա, իսկ Վարթերի ամբողջ ընտանիքը, ինչպես նաև նրանց քարավանը կոտորվում է Հիզոլ կոչված գետի մոտ: Աքսորի ժամանակ Վարթերին փախցնում և մահից փրկում է դերսիմցի Ջաֆեր Թան անունով քուրդ զինվորը, որը լինում է հայերի քարավանները ուղեկցողների շարքում: Ջաֆեր Թանն ամուսնանում է Վարթերի հետ, փոխում նրա կրոնը, անունն էլ դարձնում է Ջեյմեփ: Ուշագրավ է հատկապես այն, որ որոշ ժամանակ անց Վարթերը և նրա ամուսինը, բնակություն են հաստատում ցեղասպանությունից առաջ բավական բարեկեցիկ կենցաղ ունեցող Վարթերի հայրական տանը, տեղ կանգ-

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, էջ 37:

նում այգուն, դաշտին, քանի որ Վարթերը մնացել էր Թումաշանյանների ընտանիքի միակ օրինական ժառանգը: Սակայն իսլամացված Վարթերի համար հարազատ գյուղ և տուն վերադառնալն ու ապրելը եղել է փոքրիկ սփոփանք և, միևնույն ժամանակ, տանջանք, ինչը ստեղծված պայմաններում ավելի նախընտրելի է եղել: Մի կողմից՝ այդ ամենը նրան շարունակ հիշեցրել է կորցրած ընտանիքի մասին, սակայն, մյուս կողմից, նրան կարոտն առնելու հնարավորություն տվել: Այս մասին հետագայում նա ասել է աղջկան՝ Շիրին Թանին. «Ամեն դաշտում, ամեն ծառի տակ, ամեն աղբյուրում, ամեն առվակում մորս, հորս, եղբայրներիս հետքը կար: Ամեն անգամ տուն մտնելիս պատկերացնում էի մորս, հորս, եղբայրներիս: Կարծես նրանց տեսնում էի, կարծես ձայներն ականջներիս ձայն էին տալիս»³⁴: Սակայն որոշ ժամանակ անց, երբ ստիպված են լինում լքել Վարթերի հայրական գյուղը և տունը, նա ապրում է երկրորդ տրավման: Ինչպես այլ հերոսներ, Վարթերը նույնպես կապ է պահպանել ճակատագրակից հայուհիների հետ, և անշուշտ, նրանց միավորողը իրենց անցյալի և ապրած սարսափների հետ կապված հիշողություններն էին: Ինչպես նշում է Շիրին Թանը, մայրը մտերիմ է եղել կրկին իսլամացված հայուհի Մելեքի հետ. «Երբեմն-երբեմն գրուցելիս նրանք լալիս էին: Մեկ օր անգամ մտքներովս չանցավ հարցնել, թե ինչո՞ւ էին լալիս»³⁵: Վարթեր Թանը, թեկուզ գաղտնի, ձգտել է պահպանել հայկական քրիստոնեական որոշ սովորույթների տարրեր՝ դրանք թաքցնելով անգամ երեխաներից և ամուսնուց: Այդպիսի մի սովորույթի տարրերից է եղել հաց թխելիս խմորի վրա խաչի գաղտնի նշան անելը: Սակայն մի օր ամուսինը, պատահաբար տեսնելով դա, բարկացել է և ծեծել նրան՝ ասելով. «Հայի աղջիկ, տարիներ անցան, սակայն դու դեռ քո հայությունից չես հրաժարվել»³⁶:

Տարիներ անց՝ 1955 թ. ԱՄՆ-ի Չիկագո քաղաքում հաստատված Վարթերի եղբայրը գտնում է քրոջ հետքը և նրան նամակ ուղարկում: Այդ նամակները ևս Վարթերի համար դառնում են թանկարժեք իրեր,

³⁴ Tekin G., Kara kefen, İstanbul, 2008, s. 12.

³⁵ Նույն տեղում, էջ 17:

³⁶ Նույն տեղում, էջ 19:

«անասելի երջանկության աղբյուր»³⁷ և իր նախկին ընտանիքի հետ կապող բարակ կամուրջ: Նրանց մեջ սկսվում է նամակագրություն և Վարթերի եղբայրը նրան հրավիրում է ԱՄՆ՝ հույս հայտնելով մինչև մահը հանդիպել. «Քո բոլոր ծախսերը ես կհոգամ, միայն թե դու արի, մինչև մահանալս թեկուզ մեկ անգամ քեզ տեսնեմ»³⁸, - գրում է եղբայրը: Սակայն Վարթերի ամուսինը կտրուկ դեմ է լինում ԱՄՆ այցելելու խնդրին և արգելում նրան: Սա Վարթերի համար լինում է ևս մեկ լուրջ տրավմա, որը կրկին թարմացնում է նրա նախկին տրավմաները: Ամուսինը, ըստ երևույթին, վախենում էր, որ այցելելով ԱՄՆ և վերագտնելով իր հարազատներին՝ Վարթերը այլևս չէր վերադառնա Թուրքիա: Ինչևէ, որոշ ժամանակ անց Վարթերի եղբայրը մահանում է, իսկ նրա ընտանիքի հետ կապն ընդհատվում:

Վարթերի այս միայնակ, չհասկացված և իր ստեղծած ներքին աշխարհում փակված մնալը տարիներ հետո պետք է ցավ պատճառներ նրա զավակներին, որոնք խղճի խայթ են զգում նրան չհասկանալու, կարեկից չլինելու, ցավերը չկիսելու համար: Ինչպես ասում է նրա դուստր Շիրինը. «Մենք նրան երբեք չկարողացանք հասկանալ, երբեք չկարողացանք ցավերը կիսել: Մայրս միշտ միայնակ էր և տառապում էր, և ոչ մեկն էլ նրա ցավով չէր հետաքրքրվում»³⁹: Ինքը՝ Վարթերը, կյանքի վերջում, որպես իր տառապանքների վկայություն, ասել և մահից առաջ իր երեխաներից խստորեն պահանջել է հետևյալը. «Ես օր ու արև չեմ ունեցել, իմ օրերը սև էին: Անընդհատ ցավեր եմ ապրել, կյանքս սև է եղել: Երբ մեռնեմ, իմ պատանքն էլ թող սև լինի: Գերեզմանս էլ չսարքեք, թող հարթ հող լինի»⁴⁰: Սև պատանքը, որը դարձել է նաև գրքի վերնագիր, խորհրդանշում է ոչ միայն Վարթերի, այլև նման ճակատագիր ունեցող իսլամացված շատ հայուհիների կյանքը:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ թուրքական գրականության մեջ Հայոց ցեղասպանության խնդիրը կամաց-կամաց սկսում է գրավել որոշակի տեղ և ունենալ տարատեսակ դրսևորումներ ինչպես թեմատիկ,

³⁷ Նույն տեղում, էջ 13:

³⁸ Նույն տեղում, էջ 14:

³⁹ Նույն տեղում, էջ 5.

⁴⁰ Նույն տեղում, էջ 21:

այնպես էլ ժանրային առումով: Այդ թեմայով գրված ստեղծագործությունները, միննույն ժամանակ, կարող են նպաստել թուրքական հասարակության մեջ Հայոց ցեղասպանության փաստի ընկալմանը և ճանաչմանը:

Мелконян Рубен, к.ф.н., доцент, Погосян Наира аспирант ЕГУ. ТЕМА ГЕНОЦИДА АРМЯН В СОВРЕМЕННОЙ ТУРЕЦКОЙ ЛИТЕРАТУРЕ. Известно, что в литературе всегда отражаются важные и актуальные для общества проблемы и развития. Вместе с тем атмосфера в стране и обществе также влияет на выбор литературных тем. В данном контексте надо отметить, что по отношению к ряду тем, запрещенных в Турции в 20-ом веке, турецкая литература приняла такую же позицию отрицания. Среди этих тем Геноцид Армян, ссылка, проблема насильственно исламизации. Можно отметить, что до последнего времени, за исключением редких обращений, турецкая литература не уделяла должного внимания Армянской тематике.

Melkonyan Ruben, PhD Associate prof., Poghosyan Naira, Researcher YSU; THE SUBJECT OF ARMENIAN GENOCIDE IN MODERN TURKISH LITERATURE. It is known that the literature mostly reflects the actual issues, which are urgent for society at the given moment. But at the same time the atmosphere in the country and in the society also influences the choice of the literature themes. In this respect we should state that the Turkish literature took the same stance in regard to the number of themes which had been considered taboo in the 20th century. Among those themes were the Armenian Genocide, exile, the issue of forcedly Islamized Armenians and one can state that despite some separate and skate allusion there had been no decent attention paid to Armenian subject in Turkish literature till recent times.

ՍԻՐԱՆՈՒՅՇ ԳԱԼՍՏՅԱՆ
ԵԹԿՊԻ, արվեստագիտ. քեկն, դոցենտ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԿԻՆՈՅՈՒՄ

Բանալի բառեր – զանգվածային ցեղասպանություն, ծրագրված ոճիր, օրինաչափ լռություն, եղեռնապարտում ֆիլմեր, վավերագրական նկարահանումներ, ճամբար-սպանդանոցներ, «հերիհշողություն»:

Ключевые слова: массовый геноцид, запланированное преступление, закономерное молчание, фильмы повествующие о геноциде, документальные кадры, лагерь смерти, «пост-память».

Key words: mass genocide, designful crime, regular silence, genocide narrating films, documentary scenes, camps of death, «postmemory».

«Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում մոտավորապես տասը միլիոն մարդ զրկվեց կյանքից: Հայերը տառապեցին թուրքերի ձեռքերով իրականացված գրեթե զանգվածային ցեղասպանությունից, իսկ գերմանական, ռուսական, ավստրոհունգարական և օսմանյան կայսրությունները փլուզվեցին»¹:

Սույն մեջբերումն արվում է համաշխարհային կինոյի պատմությանը նվիրված վերջին տարիների լավագույն գրքերից մեկից, որի հեղինակը շոտլանդացի հայտնի կինոգետ, Լոնդոնի «The Times»-ի թղթակից Մարկ Բուզինսն է: Տարօրինակ է, որ համր կինոյի նվաճումների դիտարկման գլխում, նշանակալից գործերի վերլուծությունների արանքում պատմական այս անդրադարձն անելով (ընդ որում՝ օգտագործելով

¹ **Mark Cousins**, *The Story of Film. A Worldwide History*. Thunder's Mouth Press, New York, 2004, p. 57.

հենց «almost mass genocide» արտահայտությունը), հաստատվոր աշխատության հեղինակը հետագայում չի անդրադառնում որևէ ֆիլմի, որտեղ իր արտահայտությունն է գտել հայոց ողբերգությունը: Այդ թվում, բավական մանրամասն անդրադառնալով կինոարվեստում մեծ վաստակ ունեցող՝ ծագումով հույն, ամերիկյան ռեժիսոր Էլիա Կազանի ճշմարիտ ռեալիստական բեմադրածին, Քուզինսն անգամ չի նշում վերջինիս «*Ամերիկա, Ամերիկա*» (1963) լայնակտավ ֆիլմը, որը ժամանակին արժանացել է «Օսկար» և «Ոսկե գլոբուս» մրցանակների և ներկայացված է եղել 11 այլ անվանակարգում: Այդպիսով՝ թերևս հասկանալի է ժամանակագրական կարգը խախտելու մեր պատճառը՝ Արևմուտքում ստեղծված եղեռնապատում ֆիլմերի մասին խոսքը սկսելիս:

Հիմնականում Հունաստանում և Թուրքիայի տարածքում նկարահանված ամերիկյան այս ֆիլմն սկսվում է անխռով լեռների մռայլ բնապատկերով, և հնչում է հեղինակի արտակադրային ձայնը. «Անատոլիա՝ հայերի և հույների հինավուրց երկիրը...»: Այնուհետև ներկայացվում է 1890-ականների կեսերի իրադրությունը. թուրք իշխանությունների տագնապը Կոստանդնուպոլսի բանկի միջադեպի հետ կապված, առ այն, որ հայերն ազգային վոքրամասնությունների մեջ «ամենավտանգավորն» ու «անհնազանդն» են և այլն: Դրան հետևում են հայկական ջարդերի, թուրքերին բնորոշ վայրագության տեսարաններ՝ եկեղեցում պատսպարված հայ կանանց, ծերերին ու երեխաներին հրկիզում են, կադրում ահագնացող հնչում է «Տէր, ողորմեան»...

Էլիա Կազանն իր հեղինակած «Անատոլիական ժպիտ» վեպի հիման վրա է ստեղծել այս հիրավի մեծ, համամարդկային ֆիլմը, ուր իր ընտանիքի կենսագրության միջոցով ոչ միայն ճշգրտորեն պատկերել է պատմական անողոր իրողությունը, թե ինչպես էին ապրում այդ հողի իսկական տերերը թուրքահպատակ դառնալուց հետո, այլև ստեղծել է կյանքի լայն, ընդգրկուն պատկեր՝ համոզիչ իր բոլոր շերտերով ու մանրամասներով, հակասություններով ու խորքով: Գլխավոր հերոս Ստավրոսը, որի նախատիպը ռեժիսորի հորեղբայրն է, ունենում է երկու հայ ընկեր՝ Վարդան և Հովհաննես: Վարդանն է նրան արժանապատվության դասեր տալիս և հուշում Ամերիկա գնալու միտքը՝ իբրև թուրքերի ստորացումներից խուսափելու միակ միջոց: Երբ Ստավրոսի վախվո-

րած ծնողները նախատում են նրան «վտանգավոր» հայի հետ մտերմության համար, պատանին վստահեցնում է, որ թուրքական հաջորդ տոնի ժամանակ հերթն իրենցը՝ հույներինը, կլինի... Մարդկային մեծ համակրանքով ու կարեկցանքով է ստեղծված և Հովհաննեսի ազնիվ կերպարը, որ նավով երկար ճամապարհ անցնելուց հետո, հասկանում է, որ հիվանդության պատճառով իրեն թույլ չեն տա ոտք դնել «նոր աշխարհ» և իրեն ջուրն է նետում՝ մեծ երազանքի շեմին կանգնած ընկերոջը թողնելով նրա իսկ նվիրած կոշիկները՝ մեջը դրված իր փաստաթղթերով, որ կդառնան Ստավրոսի փրկության միակ հնարը...

Որքան էլ հակիրճ կամենանք խոսել, գեղարվեստական այս ֆիլմում կա ևս մի պատմական արժանիք, որ հարկ է հիշատակել. այստեղ գրեթե վավերագրական հավաստիությամբ նկարահանված տեսարաններ կան, ուր պատկերված են թուրքերի կողմից ստեղծված առաջին համա-կենտրոնացման ճամբարները...

Այդպիսով, առաջին աշխարհամարտի հորձանուտում մեծ տերությունների կողմից անտեսված, իսկ գուցե և ծրագրված մի ոճիր... Այս մասին գրելն անասելի դժվար է, հետևաբար, ֆիլմ նկարահանելն՝ էլ ավելի բարդ խնդիր, քանի որ կինոպատկերի իրատեսական բնույթը գրեթե թույլ չի տալիս վերացարկվել ցավից: Սակայն կինոյի միջոցներով Հոլոքոստի բեմային անդրադարձի հազարավոր օրինակների գոյության փաստն ապացուցում է դրա անհրաժեշտությունը: Այնինչ, անցյալ դարի առաջին ցեղասպանության՝ հայոց Մեծ եղեռնի մասին պատմող ֆիլմերը կարելի է մատների վրա հաշվել...

Այսպես՝ հայտնի է, որ թուրքերի ոճրագործության վավերագրական նկարահանումներ կատարվել են ռուս, գերմանացի օպերատորների կողմից: Հետագայում այդ փաստագրության որոշ կադրեր, տեսարաններ անգլիացի քաղաքական գործիչ լորդ Ջեյմս Բրայսի (մեր ժողովրդի այս մեծ բարեկամի անունով ներկայումս փողոց կա Երևանում) միջոցով տեղ են գտել 1918 թ. նոյեմբերին ԱՄՆ-ում նկարահանված «*Հոգիների աճուրդ*» խաղարկային գեղարվեստական ֆիլմում բեմադրիչ՝ (Օսքար Ափֆել), որը հայտնի է նաև «Հռչակված Հայաստան», «Ավերված Հայաստան» և «Խաչված Հայաստան» անուններով, իսկ Եվրոպայում

ցուցադրվել է «*Հայուհին կամ մի նահապտակ ժողովուրդ*» վերնագրով: Ֆիլմի գլխավոր հերոսուհին և միաժամանակ դերակատարուհին եղեմնից փրկված Արշալույս Մարտիկանյանն է, որին անվանել են հայոց ժամնա դ'Արկ: Մինչ այդ՝ փետրվար-մարտ ամիսներին, ամերիկյան մամուլում լույս է տեսել Մարտիկանյանի կյանքի պատմությունը, որը նույն քվականին Նյու Յորքում սահմանափակ տպաքանակով հրատարակվել է անգլերեն և իսպաներեն՝ «Հռոտված Հայաստան» վերնագրով²:

1930-ին Փարիզում նկարահանված «*Հայաստանի մեղեդին*» (բեմադրիչ՝ Նիկոլայ Կորգանով) կինոնկարի առաջին մասում ներգրավվել են 1922 թ. թուրքերի ձեռքով հրկիզված քրիստոնեաբնակ Ջմյուռնիայի հրդեհը պատկերող ցնցող դրվագներ, որոնք նավերից, փրկության ձեռք մեկնելու փոխարեն, անտարբեր նկարահանել էին անգլիացիներն ու ամերիկացիները, օրինակ՝ կրակի մեջ կորած քաղաքից դեպի հունական կղզիները փախչող հայերին...³

Արծվի Բախչինյանն իր «Հայերը համաշխարհային կինոյում» մեծածավալ աշխատության մեջ բերում է կինոյի պատմության մեկ ուրիշ փաստ և՝ 1935-ին հայազգի ամերիկյան մեծանուն ռեժիսոր Ռուբեն Մամուլյանը «Մետրո Գոլդվին Մայեր» կինոստուդիայում պետք է էկրանավորեր Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, սակայն աշխատանքները կասեցվել են թուրքական կառավարության միջամտության պատճառով: Դրանից մոտ երեք տասնամյակ անց է ստեղծվել Էլիա Կազանի վերոհիշյալ կինոկտավը, որից հետո Արևմուտքը դարձյալ «մեծ լուրջում» է պահպանել:

Օրինաչափ այդ լուրջումը խախտեց հայազգի ֆրանսիական անվանի ռեժիսոր Անրի Վերնոյը (իսկական անունը՝ Աշոտ Մալաքյան) 1991 թ. իր «Մայրիկ» ֆիլմով, որը ֆրանսիական «Պարի մատչ» թերթը կոչեց «եվրոպական կինոյի ամենաթանկարժեք ստեղծագործություն»: Ֆիլմի գլխավոր դերակատարներն էին աշխարհահռչակ կինոաստղեր Կլաուդիա Կարդինալեն և Օմար Շարիֆը:

² Տե՛ս Արծվի Բախչինյան, *Հայերը համաշխարհային կինոյում*, Եր. 2004, էջ 42-51:

³ Նույն տեղում:

Ռեժիսորը մինչ այդ բեմադրել էր երեք տասնյակից ավելի ֆիլմեր, որոնցում նկարահանվել էին Ժան Գաբենը, Ֆերնանդելը, Ժան-Փոլ Բել-մոնդոն, Ալեն Դելոնը, Իվ Մոնտանը, Շառլ Ազնավուրը և ուրիշներ: Բնականաբար, նա իրեն ամենաշատ հուզող խնդրի մասին խոսեց կարիերայի մայրամուտին, երբ արդեն հայտնի էր աշխարհին:

Ինքը Վերնոյն այդ մասին ասել է. «Հինգ տարեկանից ես մոմ եմ բռնել հայկական եկեղեցիներում: Իսկ եկեղեցին ոչ միայն հավատ է, այլ նաև՝ մշակույթ: Ես երգել եմ մեր մեծ Կոմիտասի պատարագը: Ու եթե ես եկեղեցու զավակ եմ, ապա նաև հայ մշակույթի զավակ եմ»⁴:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Վերնոյը եղել է «Մարսելյոզ» քերթի լրագրող և, իբրև Թուրքիայից փախած հայ ընտանիքի զավակ, նա իհարկե մինչ այդ արդեն տեղյակ էր, որ համակենտրոնացման առաջին ճամբար-սպանդանոցները թուրքերն էին ստեղծել, և այնուհետև այդ «պրոֆեսիոնալ» ոճրագործները՝ փորձի փոխանակման նպատակով հրավեր էին ստացել Գերմանիայի նացիստական ղեկավարության կողմից⁵: 1940-ականներին ապագա ռեժիսորը հրապարակել է նաև հայոց Մեծ եղեռնին նվիրված մի շարք հոդվածներ: Այնուհետև սկսվել է նրա ռեժիսորական փայլուն կարիերան, իսկ 1984-ից՝ ռեժիսորական լուրջությունը: Նա այլևս չի նկարահանում ոչ մի ֆիլմ, այլ կենտրոնանալով անցյալի վրա, իր ընկերոջ՝ ծագումով դարձյալ հայ, ֆրանսիացի գրող Անրի Թրուայայի (իսկական անունը՝ Լևոն Թորոսյան) դրդմամբ, գրում է «Մայրիկ» ինքնակենսագրական վեպը: Թրուայան ասել էր նրան. «Դու հայկական թեմաներով հանդես եկած լրագրող ես:

⁴ Տե՛ս **Иосиф Вердиян**, *Тем, кто не кричал «МАЙРИК!»*, <http://2002.novayagazeta.ru/nomer/2002/14n/n14n-s26.shtml>

⁵ Պատահական չէ, որ Ա. Էզոյանի «Արարատ» ֆիլմում թուրք սպայի դերում հանդես եկած հունական ծագումով դերասան Էլիաս Կոտեասը խաղում է կինոֆիլմերում ավելի վաղ հայտնված նացիստ հերոսների ներկայացման ոճով: Ռեժիսորը միտումնավոր է դիմել այդօրինակ ոճավորման, ասես շեշտելու համար պատմական այն փաստը, որ նացիստների համար օրինակ են ծառայել թուրքերը, ուրիշ հարց, որ կինոյում դրանց կերպարներն ավելի ուշ են հայտնվել և հազվադեպ...

Քո հուշերն ու մանկական հիշողություններն ավելի շատ ուշադրության կարժանանան, քան բոլոր ահաբեկիչների ռումբերը...»⁶:

Հիրավի, այդպես էլ եղավ:

Այժմ Անրի Վերնոյի այս արժեքավոր գեղարվեստական կինոերկից անցում կատարենք երկու ֆիլմի, որոնք առնչվում են «ահաբեկիչների ռումբերի» հետ և ոչ միանշանակ, հակասական զգացումներ են առաջացնում դիտման ընթացքում: Խոսքը ֆրանսահայ ռեժիսոր Ռոբեր Քելիշյանի՝ Մյունխենի կինոփառատոնի «Մեծ հույսեր» մրցանակին արժանացած «*Արամ*» (2002) և ֆրանսիացի ռեժիսոր Լորան Թյոնի «*Փակ շրջան*» (2009, պրոդյուսեր Ալեն Թերգյան) դրամատիկ մարտաֆիլմերի մասին է: Առաջինում համդես են եկել հոյակապ ֆրանսահայ դերասաններ Սիմոն Աբգարյանը և Մերժ Ավետիքյանը, իսկ երկրորդում՝ Ժան Ռենոն:

Չմանրամասնելով այս ֆիլմերի սյուժեները՝ պարզապես փաստենք, որ հատկապես մերօրյա համատեքստում այնքան էլ խոհեմ չէ, անգամ վարկաբեկող է մեր ազգային ազատագրական շարժումը և Հայ դատը՝ ահաբեկչական կամ մաֆիայի կլանների գործողություններին ներհյուսված ներկայացնելը, եթե անգամ դրանք այդ ֆիլմերում պատմականորեն պատճառաբանված են թվում:

Այժմ մոտենցանք մեր մեծ ողբերգությունը վերհանող, վերջին տարիների ամենաաղմկահարույց երկու ֆիլմի՝ Ատոմ Էգոյանի «*Արարապ*» (2002) և Տավիանի եղբայրների «*Արյույրների ազարակը*» (2007) կինոնկարներին, որոնք ցուցադրվել են Բեռլինի ՄԿՓ ոչ մրցութային ծրագրում՝ այդուհանդերձ դառնալով Բեռլինալեի գլխավոր իրադարձություն:

Կանադահայ անվանի ռեժիսոր Ատոմ Էգոյանի «*Արարապ*» ֆիլմը նկարված է ամերիկյան բժիշկ Քլարենս Աշերի հուշերի հիման վրա, սակայն ինքը բեմադրիչը նույնպես «հուշեր» ունի, որ ժառանգել է ցեղապանությունը վերապրած նախնիներից... Իսկ այս ֆիլմն ստեղծելու որոշումը կայացվեց, երբ տասնամյա որդին՝ Արշիլը, ծնողներից՝ Ատո-

⁶ Տե՛ս **Иосиф Вердиян**, *Тем, кто не кричал «МАЙРИК!»*, <http://2002.novayagazeta.ru/nomer/2002/14n/n14n-s26.shtml>

մից և Արսիներից լսելով թուրքերի ոճրագործության մասին, հարց տվեց. «Իսկ նրանք ներողություն խնդրե՞լ են...»:

Էգոյանը հետամուտ չի եղել Էկրանին միայն վերակենդանացնել պատմական անցյալի ողբերգական դրվագները: Այդօրինակ միագիծ պատմություն է նրա ֆիլմում ռեժիսոր Սարոյանի (Շառլ Ազնավուր) կողմից նկարահանվող ֆիլմը, որը թույլ է տալիս Էգոյանին արդիականության և անցյալի զուգահեռ պատում անել՝ պարբերաբար հարաբերելով անցյալը և ներկան: Երբ այդ ֆիլմի խորհրդատուն՝ Անին (Արսինե Խանջյան) Սարոյանին դիտողություն է անում, թե՛ «Վանից Արարատը չի երևում», վերջինս պատասխանում է. «Արարատը պետք է լինի ֆիլմում, քանի որ հայ ազգի խորհրդանիշն է և այն ամենի, ինչ կորսվել է ցեղասպանության հետևանքով...»: Ի դեպ, Ազնավուրի ներկայությունը ֆիլմում նույնքան խորհրդանշական է, որքան որ ֆիլմի առանցքային կերպարներից մեկի՝ ցեղասպանությունը վերապրած և նրա կենդանի գոհր մնացած մեծ նկարիչ Արշիլ Գորկու...

Սակայն «Արարատը» ոչ միայն անցյալի և ներկայի փոխհարաբերությունների մասին է, այլև առանց մոռանալու, առանց արժանապատվությունը կորցնելու՝ այդ ցավը հասկանալու և հաղթահարելու հնարավոր ուղիների մասին:

Ամբողջական կյանքի մոդել ստեղծելու նպատակով որպես սյուժեի կազմակերպման եղանակ հանդես է գալիս բազմապլան, միաժամանակ, մի քանի հարթություններում ծավալվող գործողությունը, որ Էգոյանական հղկված, կառուցիկ ռեժիսորական ձեռագրի ամենահատկանշական գծերից մեկն է: Այդ բազմաշերտ, պոլիֆոնիկ դիպաշարը ռեժիսորին թույլ է տալիս պատկերել կյանքի անտեսանելի կողմը, տեսանելի դարձնել այն թելերը, որոնցով ականա կապված են նույն երկնքի տակ ապրող մարդիկ:

Կենտրոնական Լանքշիրի (Մեծ Բրիտանիա) համալսարանի պրոֆեսոր, լեհ կինոգետ Եվա Մազյերսկան, ով 11 մենագրությունների և բազմաթիվ հոդվածների հեղինակ է, իր՝ «*Եվրոպական կինոն և միջ-դեքստրալությունը. Պարմություն, հիշողություն և քաղաքականություն*» աշխատության առաջաբանը վերնագրել է «*Արդյո՞ք անցյալը օտար երկիր է*» (*Is the Past Foreign Country?*): Օգտվելով Մարիաննա

Հիրշի կողմից Հոլոքոստի առնչությամբ սահմանված և շրջանառության մեջ դրված «հետհիշողություն» (postmemory) հասկացությունից⁷, որն էապես տարբեր է գուտ հիշողությունից, կինոգեոմ Ատոմ Էգոյանի «*Արարար*» ֆիլմի վերլուծության մեջ առաջ է քաշում հետմորդ-տարագիրներ (post-emigrants) հասկացությունը: Նա այդպես է անվանում ցեղասպանությունը վերապրած տարագիրներին հաջորդած սերունդը՝ «հետհիշողության սերունդը», այսինքն՝ նրանց հետմորդներին, ովքեր, նույն Մ. Հիրշի խոսքերով ասած, մեծացել են այն պատմությունների ազդեցության տակ, որոնք նախորդել են իրենց ծննդյանը... Ելնելով Հիրշի դիտարկումից՝ Ե. Մազյերսկան գրում է. «*Հերիհիշողությունը* պարզապես *հիշողություն* չի նշանակում, այլ բառի ուղղակի իմաստով. *հերիհիշողությունը* ենթադրում է փորձառության փոխանցման հնարավորություն հաջորդ սերնդին»⁸: Իր գրքի առաջին գլխում, որ վերնագրված է՝ «*Անցյալի բեռը և ներկայի թեթևությունը. Ֆիլմի միջոցով շփում պատմական տրավմայի հետ*» (The Burden of the past and the Lightness of the Present: Dealing with Historic Trauma through Film), Մազյերսկան դիտարկում է երեք ֆիլմ՝ Ժան-Լյուկ Գոդարի «*Փառաքանելով սերը*» (2001), Ատոմ Էգոյանի «*Արարար*» (2002) և Վոյցեք Մարչևսկու «*Ուեյզեր*» (2000):

Հետաքրքրական է, որ Էգոյանի ֆիլմը, հատկապես, ռեժիսորի կամերային ոճին խորթ էպիկական տեսարանները, որոնք առկա են նրա ֆիլմում նկարահանվող ֆիլմի մեջ, շատ տարբեր կերպ են ընկալվում հայկական միջավայրում և նրանից դուրս: Մեզ մոտ շատերը դրանք խիստ քննադատեցին, իսկ օրինակ ֆրանսիացի կինոգետ և լրագրող Ժան-Սիշել Ֆրոդոնը՝ 2002-ին քննադատելով Ռոման Պոլանսկուն «Դաշնակահարը» ֆիլմում պատերազմի ավանդական ներկայացման համար, այդ նկարը համեմատել է «Արարատի» հետ, նշելով, որ «այն շատ ավելի անհատական է, չնայած՝ Պոլանսկին գիտի պատերազմն

⁷ **Marianne Hirsch**, *Family Frames: Photography Narrative and Postmemory* (Cambridge, MA: Harvard University Press, 1997).

⁸ **Ewa Mazierska**, *European Cinema and Intertextuality: History, Memory and Politics*. Basingstoke/ London, 2011, p. 23.

անճնական փորձով, այն դեպքում, երբ Էգոյանն այն գիտի միայն փոխանցված՝ այլոց ներկայացրածի հիման վրա»:⁹²

Մեծանուն իտալացի ռեժիսորներ Պաոլո և Վիտորիո Տավիանիների «Արտույտների ագարակը» ֆիլմ-վիպերգությունը նկարահանվեց 2007-ին հայկական ծագումով իտալացի գրող և գրականագետ Անտոնիա Արսլանի 2004 թ. լույս տեսած և 12 լեզվով թարգմանված համանուն վեպի հիման վրա: Գնահատելով մարդկային հիշողությունն արժևորող այս ֆիլմը՝ «Boston Globe», ինչպես նաև գերմանական «Spiegel» և «Die Welt» պարբերականները դժգոհություն հայտնեցին Բեռլինալեի մրցույթում չընդգրկվելու կապակցությամբ, կարծիք հայտնելով, որ այս ֆիլմը, հնարավոր է, տարվա լավագույն ֆիլմն է: Իհարկե, փառատոնի կազմակերպիչներն այդ կերպ խուսափեցին տարաձայնություններից, մանավանդ որ, ցուցադրությունը տեղի էր ունենալու Հրանտ Դինքի սպանությունից հետո:

«Մենք ոչինչ չէինք ուզում թաքցնել: Ամենդ քաղաքացիների կոտորածը պատմության մի մասն է և արվեստին պատկանում է նույնքան, որքան հին հունական ողբերգությունները», - ասել էր Պաոլո Տավիանին:

Զնայած առկա սահմանեցուցիչ տեսարաններին՝ «Արտույտների ագարակը» հեռու է պերսոնաժների միակողմանի, սխեմատիկ մեկնաբանումից, առավել ևս, վայրագության ինքնանպատակ պատկերումից: Գեղարվեստական միջոցներով՝ կերպարների օգնությամբ ցեղասպանության պատճառների հանգամանալից բացահայտումը մեկտեղվում է նրա հետևանքների հետազոտման հետ: Տավիանի եղբայրներից մեկը՝ Պաոլոն, Երևանում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց, որ իրենք «ձգտել են մասնավորից գնալ դեպի ընդհանուրը, այլ ոչ թե՝ հակառակը: Ավելին՝ դա ֆիլմ է մարդկային, սիրո, դավաճանության ու զոջման մասին»: Վիպական ասքին հատուկ եղանակով մի գերդաստանի եղերապատումն էկրանին ընթանում է միահյուսված բարդ սյուժետային գծերի միջոցով: Դրանցից մեկում երիտասարդ Նունիկի (Պազ Վեզա) հանդեպ սիրային զգացմունքներ տաժող թուրք զինվորական Յուսուֆը (Մորից Բլեյբերու), լսելով հրամանը, հուսահատ բարձրաց-

⁹ Ewa Mazierska, Roman Polanski: The Cinema of a Cultural Traveller. London, 2007, p. 89.

նում է տուրը և սպանում հայ օրիորդին, որպեսզի վերջինս չընկնի մյուսների ձեռքը և խոշտանգվի: Այդպես, նա մահվան աչքերին անվախ նայող աղջկան տրված խոստումն է կատարում, իսկ չորս տարի անց, դատավարության ժամանակ Յուսուֆը դատապարտում է հայ ժողովրդի հանդեպ բուրքերի գործած ոճիրը և ինքն իրեն մեղավոր ճանաչում սիրած կնոջ սպանության մեջ: Ֆիլմը վկայում է, որ առաջին դատավճիռներն օդում կախված մնացին, իսկ հետագա դատավարությունները կասեցվեցին: Այդպիսով՝ կինոնկարն ուղերձ է մարդկությանը՝ մինչ օրս արդարության սպասող մի ժողովրդի ողբերգության, դրա ուղղակի և անուղղակի հետևանքների մասին խորհելու: Ռեժիսորներն այն նկարել են, հավատացած, որ անցյալի այս ողբերգության մեջ են թաքնված մերօրյա սարսափելի իրադարձությունների արմատները՝ այն ամենը, ինչ տեղի է ունեցել Կոստվոյում, Ռուսոնոյայում, Սուլանում կամ մեկ ուրիշ տեղ: «Այն, ինչ կազմում է իմ անցյալը՝ ողջ մարդկության անցյալն է, իսկ անցյալը պատկանում է ապագային», - Բեռլինում ասել է ֆիլմի հեղուստիներից մեկին մարմնավորած Արսինե Խանջյանը: Այս կինոկտավում նկարահանվել են նաև մի շարք այլ հայտնի դերասաններ:

Գրեթե միշտ ինչ-որ հուզիչ մարդկային պատմություն հանգամանորեն ներկայացնել ձգտող ռեժիսորների՝ հայոց Մեծ եղեռնին անդրադարձը նաև անձնական մոտիվ ուներ: Տավիանիներն օր ծերության այն նկարեցին, սրտում միշտ կրած լինելով մի հիշատակ՝ ցեղասպանությունը վերապրած իրենց հայ դայակ Մելանիայի կերպարը...

Այսպիսով՝ բուրքերի կողմից՝ մարդկության առաջ գործած ոճրագործության մասին էկրանին մեկ դար տիրող «մեծ լռությունը» խախտվել է մեծ ընդիստումներով և, որպես կանոն, այդ ողբերգության հետ անձնական՝ անմիջական կամ միջնորդավորված առնչություն ունեցող անձանց կողմից՝ սկսած եղեռնի «կենդանի» գոհ Արշալույս Մարտիկանյանից մինչև իտալացի Տավիանի եղբայրներ:

Այս տարի Վենետիկի ՄԿՓ գլխավոր իրադարձությունը բավական հայտնի գերմանաբնակ բուրք ռեժիսոր Ֆաթիհ Աքինի «Սպին» (2014) ֆիլմի ցուցադրությունն էր: Հայաստանում այն դեռևս չի ներկայացվել, իսկ համացանցում առայժմ հասանելի է միայն թրեյլերը, որ թույլ է տալիս որոշ պատկերացում կազմել ֆիլմի պատկերակարգի մասին: Հենվե-

լով այդ տպավորության վրա և ծանոթանալով կինոգեոցներ Քերրին Բրեյլի և Անտոն Դոլինի վերլուծական հոդվածներին՝ կարելի է ենթադրել, որ ֆիլմը հազիվ թե դրամատիկ կամ բարոյական գոհացում բերի: Սակայն հարկ է գնահատել ինքնին երևույթը՝ այն, որ «մեծ լռությունն» այս անգամ խախտել է էթնիկ թուրքը, թեկուզ Գերմանիայում ապրող: Դա թույլ է տալիս հուսալ, որ սառույցը կոտրվել է, ու եկել է ժամանակը, որ հայերի ցեղասպանության մասին խոսի ոչ թե տուժած, այլ՝ ոճրագործ կողմը և, իհարկե, մնացած մարդկությունը...

Ժամանակն է, որ խոսի աշխարհի խիղճը:

Галстян Сирануш, канд. искусствоведения, доцент ЕГИТК, Тема геноцида армян в западном кино. Данная статья исследует фильмы о Геноциде армян, которые были сняты в западном кино в течение 100 лет с того времени, как это произошло. Их было очень мало. В основном мир хранил молчание, которое нарушалось большими перерывами и, в основном, авторы этих фильмов так или иначе имели некое отношение к этой неопишуемой человеческой трагедии. Существует «пост-память». Настала пора, чтобы об этом запланированном преступлении заговорила всемирная совесть.

Galstyan Siranush, PhD, associate professor, YSITC, The Theme of Armenian Genocide in Western Cinema. The article examines those rare movies about the Armenian genocide that have been filmed in Western cinema since its execution hundred years ago. The silence about issue has been intermittently broken by authors who somehow have had a relation to this indescribable human tragedy. «Postmemory» exists. Now it is time for the conscience of the world to speak on this planned extermination.

НАТАЛИ ГОНЧАР-ХАНДЖЯН

ЕГУ, к.ф.н.,доцент

АРМЕНИЯ И АРМЯНСКИЙ ВОПРОС В ОСВЕЩЕНИИ АЛЕКСАНДРА АМФИТЕАТРОВА

Ключевые слова: *геноцид армян в Турции, державы, Россия, дипломатия, политика.*

Key words: *Armenian Genocide in Turkey, World Powers, Russia, Diplomacy, Politics*

Բանալի բառեր – *հայերի ցեղասպանությունը Թուրքիայում, գերպետություններ, Ռուսաստան, դիվանագիտություն, քաղաքականություն:*

В 1915 году, то есть в разгар мировой войны, правящие силы Османской Турции – союзника развязавших эту войну государств – решили навсегда покончить с болезненным для них «армянским вопросом», покончив с самими армянами на территории Турции. Младотурки взялись завершить в разное время и в разных (вплоть до огромных) масштабов практиковавшееся их предшественниками истребление армян. Организаторы на сей раз уже чудовищного геноцида, они имели целью окончательно стереть армян с лица той земли, которая издавна была им родной, была им домом, земли, в которую они пустили очень и очень глубокие исторические корни.

В том же 1915 году в Петрограде вышло в свет отдельным изданием историческое сочинение Александра Амфитеатрова «Армения и Рим», а уже в следующем 1916-ом оно пришло к общественности, к читателям России как 33-ий том 37-томного собрания сочинений писателя, пользовавшегося самой широкой известностью по всей стране.

В культурно-читательской среде и Армении, и России многие сегодня хорошо знают о двух фундаментальных изданиях, появившихся в 1916-ом в Москве, осуществленных в армяно-русском сотрудничестве, дабы по свежим следам пережитой армянским народом трагедии привлечь внимание к нему, к его истории, к созданной им высокой культуре, к его судьбам во временах прошлых и в настоящем. Это знаменитая брюсовская антология «Поэзия Армении с древнейших времен до наших дней» и это «Сборник армянской литературы» под редакцией Горького.

Но на долгие годы, вернее сказать – на все советские десятилетия ушли в тень, преданы были забвению живейший интерес и внимание, проявленные к Армении и армянам, к трагическому положению этого народа Александром Амфитеатовым. То есть еще одним крупным представителем русской культуры, литературы, общественной мысли этого времени. Амфитеатовым, который в целом ряде страниц своей всегда смелой, острой и талантливой публицистики призывал к необходимости глубокого понимания и справедливого решения «армянского вопроса». Как он сам себя называл, «литератор без выдумки», популярнейший писатель, блестящий публицист, автор исторических трудов, демократ и гуманист во всех областях своей деятельности и творчества, Амфитеатов покинул Советскую Россию в 1921 году. Продолжая писать в эмиграции (умер он в Италии в 1938-ом), Амфитеатов не раз подвергал критике большевистский режим. Понятно, что при этом его имя, его фигура, его творчество подлежали забвению. Времена, слава Богу, изменились. С конца восьмидесятых прошлого века Россия стала восстанавливать и восстановила свою культурную память, в свои права вступило и наследие Амфитеатрова, его снова читают, издают и переиздают.

Предстоящая столетняя годовщина геноцида армян дает повод и нам обратиться памятью к замечательному русскому писателю, к сохранившимся в его наследии «армянским страницам», тем более, что среди них есть очень актуальные и сегодня.

Уже названное историческое сочинение «Армения и Рим», изданное, что само по себе знаменательно, в 1915-ом и 1916-ом, Амфитеа-

ров создал, изучая историю Армении по многочисленным арменоведческим источникам того времени, освоив, можно сказать, целую библиотеку книг, притом на разных языках. При знакомстве с этим трудом Амфитеатрова нельзя не поразиться широте исторической и, в частности, арменоведческой эрудиции автора, возможной, конечно же, по тем, а не сегодняшним, временам. Главное, на что стоит сейчас обратить внимание в этом сочинении, это то, что целым рядом ремарок автор актуализирует историю, перебрасывает наш взгляд из истории в современность, в настоящий день. Приведу лишь две цитаты. Первая: «На первом плане грандиозного театра военных и дипломатических действий, столь решительных, как мы видели, для судеб античного мира и столь важных по конечному результату своему в общем процессе культуры Старого Света – у рампы его, так сказать, – перебывали кратковременно и по очереди едва ли не все малоазиатские государства. Наконец роль первой актрисы в тягостной трагедии этой досталась Армении и осталась за нею надолго – не на десятки, а на сотни лет». И вторая цитата: «Эти условия сделали Армению в глазах всего античного мира как бы ключом к «восточному вопросу», тревожному для древних не менее, чем в наши дни». Трудно не заметить, насколько отзываются такие столетней давности суждения, ремарки и в наши уже дни с их нынешним «театром военных и дипломатических действий».

Проявленный Амфитеатровым интерес к истории Армении античного периода, к трагической роли, которая досталась ей тогда и осталась за ней надолго, был далеко не случаен. Он имел свою предысторию. Амфитеатров был одним из немногих русских журналистов, которые в 1896 году поехали в Константинополь и с места рассказали об ужасах развернутой султаном Абдул-Гамидом резни. Впоследствии, как отмечает он сам в предисловии к своей книге 1907 года «В моих скитаниях», он написал «три довольно большие статьи по «Армянскому вопросу» - результат газетной кампании pro Armenia, которую вел я в 1905 и 1906 гг. в нескольких русских периодических изданиях». Две из этих статей вышли в свет Петербурге отдельным изданием в 1906 году.

В своих статьях Амфитеатров прежде всего засвидетельствовал ужасы, по его же словам, «истребления беззащитных людей вооружен-

ным и организованным негодяйством», творившим свои зверства при политически-дипломатическом нейтралитете, а значит, попросту попустительстве так называемых «держав». Вот как передает он слова стамбульского европейца, подчеркнув, что это был – цитата – «даже туркофил, до глубины коммерческого сердца своего благодарный оттоманскому правительству за капитал, нажитый под его эгидою»: «Это звери, синьор Алессандро... это сущие дикие звери! Их надо держать в клетках на цепи... О! как раскается когда-нибудь – и, поверьте скоро! – Россия, что позволила им ослабить свои цепи и выглянуть из клеток!». Далее читаем о настроении, которое наблюдал Амфитеатров уже после произошедшего:

«На русских кораблях офицеры дипломатничали, играя в молчанку, но прорывались хмурыми фразами недовольства и недоумения, зачем международная эскадра опоздала к страшным дням, когда могла прийти вовремя? Зачем «Донец» простоял молча... когда малейшей демонстрацией могли быть предотвращены тысячи жертв? Было трудно сдерживать на борту матросов, потому что они видели и слышали, что творилось на берегу, и рвались к вмешательству... Самым страшным эпизодом бойни было ночное опустошение армянского квартала... Здесь работали уже не «сволочные люди», как выражался о хулиганстве наш юридический язык в 17 веке, но войска местного гарнизона ... Когда убийство утомилось брызгать кровью и мозгами человеческими, полиция стала топить и живых людей».

Приводя еще и другие подробности, Амфитеатров завершает картину их так: «Нейтралитет держав, в том числе и нашего отечества, был соблюден с такою строгостью, что некоторые армяне, все-таки ускользнувшие от потопления, не были приняты на европейские шлюпки и, настигнутые преследователями, погибали на глазах у тех, у кого напрасно молили защиты...».

Потрясенный тем, что открылось ему в абдугамидовском Константинополе 1896 года, Амфитеатров и пишет свои статьи по «армянскому вопросу», подробно анализируя историю этого вопроса, коварную политику Абдул-Гамида и непоследовательную, переменчиво-беспринципную политику в этом вопросе правительств и европейских держав, и

самой России. С присущей ему как публицисту остротой он говорит об ошибках русской дипломатии в «армянском вопросе» как таковом, но еще и расширяет тему – критикуя как неверную и даже «бездарную» политику в отношении армян в русском же Закавказье, не учитывающую того значения, какое имеет для самой России тяга и обращенность к ней этого деятельного, культурного христианского народа.

В статьях Амфитеатрова умно и убедительно высказано многое о фактах и проблемах, об ошибках политики и дипломатии начала прошлого века, о неумении различать друзей и врагов. Сказано и о том, что круто заваренную на Кавказе кашу еще придется расхлебывать в будущем, и о необходимости при этом правильных выборов.

Для самого Амфитеатрова надежные друзья русских – армяне, им он сострадает, за них болеет, высоко ценит их культуру, их разносторонне-полезное участие в жизни России, ведь всюду, - говорит он, называя многие имена, - годы и годы – цитата - «показывают нам талантливых армян... работающих – каждый по-своему - на русской общественной ниве с таким усердием и любовью, каких дай Бог природным русским».

Освещение «армянского вопроса» Амфитеатовым представляет интерес отнюдь не только как факт исторический. Написанное им актуально отзывается в контексте международно-политической проблематики наших дней и может подсказать немало полезного.

Գոնչար-Խանջյան Նատալի, ք.գ.թ. դոցենտ, ԵՊՀ, Հայաստանը և հայկական հարցն Ալեքսանդր Ամֆիտեատրովի լուսաբանմամբ - Ուս գրականության և հասարակական մտքի խոշոր ներկայացուցիչ, հեղինակավոր հրապարակախոս Ալեքսանդր Ամֆիտեատրովը, անձամբ տպավորված լինելով 1890-ականներին Թուրքիայում և մասնավորապես Ստամբուլում հայերի զանգվածային կոտորածներից, մասնակից է դարձել "Pro Armenia" հայտնի հասարակական շարժմանը: Ամֆովիելով իր հոդվածները 1906 թ. հրատարակված «Հայկական հարցը» գրքում՝ ուշադրություն է հրավիրել նշյալ «հարցի» ճշմարիտ ընկալման ու արդարացի լուծման անհրաժեշտությանը:

Մեծ Եղեռնի տարիներին Ամֆիտեատրովի հրատարակված «Հայաստանը և Հոռմը» (1915, 1916) պատմագիտական աշխատությունը մի անգամ ևս գրա-

վել է լայն հասարակության ուշադրությունը հայ ժողովրդի, նրա անցյալի և ներկայի, նրա ճակատագրի խնդիրների վրա:

Gonchar-Khandjian Nataly, PhD, Associate prof. YSU, Armenia and Armenian Question in Alexander Amfiteatrov's works. Alexander Amfiteatrov, one of the most influential people in the fields of Russian literature and public mind, in 1890s was struck by the massacre of Armenians in Turkey and especially in Istanbul. He became a participant of a famous public movement called "Pro Armenia". In 1906 Amfiteatrov published a book called "Armenian Question", where he combined and summarized his articles. In this book he once again emphasized the importance of the understanding of the above mentioned "question" and finding a righteous solution for it.

During the years of Armenian Genocide (1915, 1916), Amfiteatrov publish "Armenia and Rome" historical analysis, a book which yet once again turned the attention of large masses to Armenians, their past and present, and their fate.

ՎԱՀԵ ԱՐՄԵՆՅԱՆ

ԵՊՀ, ք. գ. ք., դոցենտ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՖԵԹՀԻՅԵ ՉԵԹԻՆԻ «ՄԵՃ ՄԱՅՐՍ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր – *ցեղասպանություն, բուրբ, հայ, ազգային պատկանելություն, ցեղասպանությունը վերապրածներ:*

Ключевые слова: *геноцид, турки, армяне, национальная принадлежность, пережившие геноцид.*

Key words: *genocide, Turk, Armenian, national identity, genocide survivors.*

Հայաստանում վերջին տասնամյակում բազմաթիվ բարձարժեք գեղարվեստական գրքեր են տպագրվել, որոնց առանցքային թեման Հայոց ցեղասպանությունն է: Դրանցից են՝ Նենսի Գրիգորյանի «Զաբեւը» (2007), Պիթեր Նաջարյանի «Ուղևորություններ. Վերջին Հայը» (2010), Փիթեր Սուրյանի «Դարպասը» (2011), Մարսելա Փոլեյնի «Աշխարհի եզրը» (2014), Քրիս Բոջալյանի «Ավագն ամրոցի աղջիկները» (2014), Ալան Ուայթհորնի «Վերադարձ դեպի Հայաստանը» (2012): Սակայն, գիտաժողովի քննարկման առարկա ենք ուզում դարձնել ոչ թե օտարալեզու հայ ստեղծագործողի վեպ, այլ՝ ազգությամբ բուրբ հեղինակի, որն իր պատումը կառուցում է ոչ թե ցեղասպանված ազգի ներկայացուցչի հոգեբանությամբ, այլ ճիշտ հակառակը:

Ֆեթիյե Չեթինի «Մեժ մայրս» վեպն անկարելի է կարդալ առանց հուզմունքի, և անհնար է հեռու վանել սեփական ապահով ես-ից կարոտի ու կորստի, անդառնալի անցյալ դարձած և մշուշի միջից մի կերպ ուրվագծվող իրականության զգացումը, որ խորապես ապրում են գրքի հերոսն ու նրա ազգականները: Գիրքը թուրքիայում վերահրատարակ-

վել է վեց անգամ, իսկ Հայաստանում ունեցել է երկու հրատարակություն՝ Ռուբեն Մելքոնյանի թարգմանությամբ: Փաստագրական այս վեպը յուրահատուկ գոյաբանական կամուրջ է, վկայություն, որ ճշմարտությունն ու հիշողություն-ձեռագրերը չեն այրվում՝ անկախ գործի դրված չարիքի մասշտաբներից և դաժանությունից: Վեպում ցեղասպանությունից փրկվածը ոչ միայն «Մեծ մայրն է»՝ Հերանուշ Կատարյանը, այլ հենց հեղինակը՝ Ֆեթիյե Չեթինը, և բոլոր նրանք, հատկապես ազգությամբ թուրքերը, որ այս գրքով են առերեսվելու պատմական ճշմարտությանը: Նշեմ նաև, որ վեպի հեղինակը փաստորեն դեռ տևող ցեղասպանության մեկ այլ գոհի՝ երջանկահիշատակ Հրանտ Դինքի փաստաբանն ու մտերիմ ընկերն է եղել:

Ֆեթիյե Չեթինի «Մեծ մայրս» վեպը մեր օրերում ամենահրատապ գրքերից է ոչ միայն մեզ՝ հայերիս համար, որ սրանով հաղորդակցվում ենք անմարդկային վախի գրկում գտնվող, միաժամանակ վերմարդկային համառության և կամքի տեր հայրենակիցների հետ, այլև համայն աշխարհի ազգերի՝ հասկանալու համար, որ մարդ-կարեկցանքը և ճշմարտությունն ազգություն չեն ճանաչում:

Վեպն արժեքավոր է նաև նրանով, որ դրա հերոսներին՝ թե՛ ազգությամբ թուրքերին, և թե՛ հայերին պատկերողը մահմեդական կրոնի դավանողն է, կյանք է մտել և դրա մեծամասնությունն ապրել վստահ լինելով, որ ինքը «զտարյուն» թուրք է, մեծացել է Թուրքիայում, թուրքական միջավայրում, Թուրքիայի քաղաքացի է և կրում է թուրքական անուն-ազգանուն: Ֆեթիյե Չեթինի մտքով անգամ չի անցել, որ իր երակներով հայի արյուն է հոսում, այդ մասին նա տեղեկացել է մոտավորապես քսանհինգ տարեկան հասակում, երբ արդեն հասում և կայացած կին էր, և ինչն ամենակարևորն է, Ֆեթիյեն երբեք մտադրություն չի ունեցել փոխելու կրոնը կամ ազգությունը: Հետևաբար, Ֆեթիյեի դիտարկումները, մտահոգություններն ու քննադատությունը դուրս են ազգային պատկանելության և աստելության նեղ շրջանակներից. վեպը Թուրքիայի քաղաքացի-անհատի վերաբերմունքն է հանդեպ Մեծ եղեռնը, հանդեպ Թուրքիան և թուրքերը՝ հենց ներսից և ներսի աչքերով: Գրքի սկզբնամասում, փոքրիկ Ֆեթիյեն մանկան սուր զգայարաններով քննում է աշխարհը և իրեն շրջապատող մարդկանց: Մանուկի յուրահատուկ ընկալումներով

փորձում վերծանել և գնահատել իր շուրջը ծավալվող իրականությունը: Ահա, թե ինչպես է նա հիշում իր թուրք պապին. «Պապս, որ աշխատել ընդհանրապես չէր սիրում, տարիքը լրացնելուն պես՝ թոշակի անցավ»¹, կամ՝ «Նրա կյանքի գերագույն հաճույքը ուտելն էր: Պապիս համար չափի միավորը դրամը չէր՝ միսն էր: Նա բացի մսից ամեն ինչի գինը որոշում էր և հաշվում մսի գնի համեմատ»²: Եվ քանի որ թուրք պապը ծույլ էր և տկարության աստիճանի հասնող պարզամիտ, տան և դրսի գործի ամբողջ ծանրությունն ընկնում է Ֆեթհիյեի հայազգի տատիկի՝ Սեհերի (իսկական անունը՝ Հերանուշ Կատարյան) ուսերին. «Քանի որ ինչպես այս, այնպես էլ շատ այլ հարցերում տատս նախաձեռնող, կարգավորող և եռանդուն էր, պապս այսպիսի դեպքերում հիացմունքը համեմունք էր հեզմանից ծաղրով ու տատիս կոչում՝ «Սեհեր չավուշ»: Իսկ մայրս (Ֆեթհիյեի մայրը - Վ. Ա.)՝ բնորոշելու համար տատիս արագաշարժությունն ու աշխատասիրությունը, նրան «փոթորիկ խոջա» մականունն էր կացրել: Թվում էր, թե գործ չկար, որ նրա ձեռքից չգար: Նրան կարելի էր տեսնել մեկ՝ պապիս ծխախոտները փաթաթելիս և արծաթե ծխախոտատուփի մեջ շարելիս, մեկ՝ մրսածության դեմ պապիս քիկունքին բաժակ գցելիս, մեկ՝ մարդկանց համար, ովքեր կասկած ունեին, թե իրենց աչքով են տվել, կապար թափելիս, մեկ՝ հնամաշ գործվածքների կտորներն ըստ գույն ու տեսքի ներդաշնակ իրար կցելով՝ ծածկոցներ, աղոթագրեր պատրաստելիս, մեկ՝ հինգ շյուղով գուլպա կամ ձեռնոց գործելիս: Տատիս կերակուրներն էլ էին շատ հայտնի»³: Այս ամենը Ֆեթհիյեն տեսել և գիտակցել է ոչ թե իր հայկական ծագման մասին տեղեկություններ ստանալուց հետո, այլ դրանից շատ առաջ: Ինչը, վստահ ենք, ավելի քան կարևոր է: Երիտասարդ աղջկա ուղեղի մեջ չի տեղավորվել նաև մզկիթի խոջայի այն պնդումը, թե մանդոլին նվագելը մեղք է, որ երեխային «մանդոլինի պարապմունքի փոխարեն պետք է Դուրանի դասընթացի ուղարկել»: Տարօրինակ չէ «մեծ մոր» պատասխանը. «Սատկի այդ խոջան: Ապա պապիս հանդիմանեց. - Այդ տգետ խոջա-

¹ **Ֆեթհիյե Զեֆին**, Մեծ Մայրս, «Պարույր Սևակ» հրատ., Երևան, 2008թ, էջ 23:

² Նույն տեղում, էջ 23:

³ Նույն տեղում, էջ 26:

ների տխմար խոսքերն այս տուն մի բեր»⁴: Հերանուշ Կատարյանը շատ է տարբերվել իր համերկրացիներից. հիշենք այն դրվագը, որտեղ այս կինը հաղթահարում է ջրհեղեղն ու ոստիկանների արգելքը և հասնելով իր թոռներին, նրանց անվնաս տուն հասցնում: Հերանուշն իր շրջապատում հայտնի էր նաև որպես աներևակայելի մաքրասեր ու մարդասեր անձնավորություն. «Մի առավոտ տատիկիս փնտրեցինք, սակայն չգտանք: Տան անկյուն չմնաց, որ չփնտրեինք, իսկ տատս նախ հարցերից խուսափում էր, սակայն շատ չանցած ստիպված էր խոստովանել: Նույն թաղամասում ապրող աղքատ այրի մի կին կար: Նախորդ գիշերը տատիս այցելած այս կինը բողոքելով, որ ինքն էլ է աչքերից խեղճ, տատիս ակնոցները փորձելու համար դրել է ու ասել. – Մեներ քույրիկ, այս ակնոցներն ինձ շատ հարմար են: Եվ այս պատճառով տատս ակնոցները տուփով հանդերձ հարևան կնոջն էր տվել: Տատիս մեկնաբանությունը կարճ էր ու հստակ. «Ես ի վիճակի եմ նորը առնելու, սակայն նա չի կարող: Թող բարով գործածի: Ուրիշ ոչինչ չասաց, և թեման այնպես փակեց, որ այլևս այդ մասին չխոսվի»⁵: Եղեռն տեսած և սարսափները մանրամասն հիշող մարդը որչափ մարդասեր և բարի պետք է լինի, որպեսզի թուրք կնոջը նվիրի իր միակ ակնոցը և երկար ժամանակ առանց ակնոց մնա. «Տատս, թեկուզ մինչև առավոտ անքուն մնար, կարիք ունեցողներին օգնության էր հասնում, նպաստում վեճ ու կռիվների լուծմանը»⁶: Ահա, թե ինչու է հեղինակն իր գիրքը վերնագրել «Մեծ մայրս»: Հիշալի «Մեծ» մարդը կարող էր թուրքական ջարդերից մազապուրծ փրկվելով, ականատեսը դառնալով բազմաթիվ վայրագությունների, ճաշակելով կորստի ցավը՝ շարունակել ապրել, կազմել ընտանիք, ստիպողաբար կրոնափոխվելով, շարունակել գործել «սիրիի մերձավորիդ» քրիստոնեական կարգախոսով, և այսբանից հետո, ապրելով թուրքերի մեջ, թուրք ամուսնու կողքին, շրջապատված թուրք հարսներով և նրանց երեխաներով, այնքան հայ մնար, որ հաջող էր թռանը՝ Ֆեթիհյե Չեթինին հոգով և սրտով լիարժեք կարեկից մարդ դարձնել, բացի այդ,

⁴ **Ֆեթիհյե Չեթին**, Մեծ Մայրս, «Պարույր Սևակ» հրատ., Երևան, 2008թ, էջ 35:

⁵ Նույն տեղում, էջ 47:

⁶ Նույն տեղում, էջ 46:

մրան անխզելիորեն կապեր իր համար այդպես էլ անհասանելի մնացած հայ բարեկամների հետ:

Եվ ահա մի օր, երբ տատիկը նկատում է, որ Ֆեֆիյեն արդեն ի գործում է զարհուրելի ճշմարտությունն իմանալու, որոշում է ամենը պատմել թոռնուհուն, պատմել ճշմարտությունը: Ինչպես ընթերցողի հետ կիսվում է Ֆեֆիյեն. «Հետո մի օր զգացի, որ նա ուզում է պատմել, միաժամանակ նկատեցի, որ իրեն թվում է, թե վտանգավոր կլիներ ինձ համար մինչ այդ օրը ավելին իմանալը: Ինձ խնայում էր»⁷: Մանուկ Ֆեֆիյեն դառնում է ճշմարտության ունկնդիրը և ջոխյան հանրահայտ տերմինով ասած՝ «պայծառացում» է ապրում: Պայծառացում, որ ճակատագրական է դառնում նրա հետագա ամբողջ կյանքի համար: Իսկ ճշմարտությունը հետևյալն էր. «- Հարսբույրիկիս, քանի որ հիվանդ էր և չէր կարողանում քայլել, ոստիկանները սվիններով սպանել էին ու դիակն էլ ճամփի եզրին նետել: - Հարսբույրիկդ հորեղբորդ կի՞նն էր տատիկ: - Ո՛չ քեռուս կինն էր, հղի էր: Ճանապարհին ոստիկանները տարեցներին, հիվանդներին, նրանց ովքեր չէին կարողանում քայլել, սվինահարում էին և թողնում նույն տեղում, բաց երկնքի տակ: Լեռներում գայլերին և գիշատիչ թռչուններին կերակուր էին դառնում»⁸: Եվ կրկին Հերանուշ Կատարյանի հիշողություններից. «Մադենի կամուրջն անցնելուց հետո Հավլերում հայրական տատս իր երկու թոռանը ջուրը նետեց: Այդ երեխաները հորեղբայրներիս աղջիկներն էին: Նրանց մայրերն էլ, հայրերն էլ սպանվել էին, իրենք էլ չէին կարողանում քայլել: Երեխաներից մեկն անմիջապես սուզվեց, սակայն մյուսը գլուխը ջրից հանեց: Հայրական տատս երեխայի գլուխը ջրի մեջ հրեց: Երեխան մորից գլուխը ջրից հանեց և մի վերջին անգամ էլ տեսավ աշխարհի լույսը, հայրական տատս նրան կրկին հրեց... Ապա ինքն էլ նետվեց խնթորեն ալիքավոր ջրերի մեջ և աչքից կորավ»⁹: Այս դժոխքի ականատեսը դառնալով՝ փոքրիկ Հերանուշը հրաշքով փրկվում է մի թուրք սպայի կողմից, ավելի ուշ տեղեկանում, որ

⁷ **Ֆեֆիյե Չեֆին**, Մեծ Մայրս, «Պարույր Սևակ» հրատ., Երևան, 2008 թ., էջ 59:

⁸ Նույն տեղում, էջ 60:

⁹ Նույն տեղում, էջ 61:

մայրիկին և իր մյուս մտերիմներին Սիվերեքի կողմն են տարել. «Այդ օրվանից ամեն օր նայում էի Սիվերեքի լեռներին ու լաց լինում»¹⁰:

Հենց այս պահին է տեղի ունենում դպրոցական Ֆեթիիյեի «պայծառացումը», որի հիմքերը ոչ ազգայնական են, ոչ պարտադրված-ուղղորդված, ոչ կրոնական, ոչ էլ առավել ևս՝ քաղաքական, դրանք զուտ մարդկային ծագում ունեն. «Դռան զանգը հնչեց, մարդ եկավ: Տատս պատմելն ընդմիջեց: Առանց այդ էլ ես արդեն ավելին լսելու ուժ չունեի: Ինձ հազիվ էի գսպում, որ փողոց չնետվեմ ու ձայնս գլուխս գցած չլացեմ: Եթե այս ամենը պատմողը տատս չլիներ, չէի կարողանա հավատալ:

Այն ինչ լսեցի, ընդհանրապես չէր համապատասխանում իմ իմացածներին: Մինչ այդ օրը իմ ունեցած գիտելիքները տակնուվրա էին լինում, արժեքներս լսածներիս հետ բախվելով փշուր-փշուր էին լինում, ներքին սարսափելի խառնաշփոթից ուղեղս պայթում էր, սաստիկ ցավում. մի վախ էր պատում ինձ, կարծես ներսումս կուտակվածը դուրս էր հորդելու և ամեն ինչ ու բոլորին իր տակն առնելու:

Երևակայությանս մեջ կենդանացած մի քանի տեսիլքներ աչքերս բաց լինեին, թե փակ, միևնույն է առջևիցս չէին հեռանում. եկեղեցու գավթում սպասող ամբոխի, հատկապես երեխաների աչքերը, ջուրը նետված մանուկները և նրանց՝ ապրելու բնագործ ջրից հանած գլուխները, Հերանուշին մորից խլելու պահը.... Սրանց զուգահեռ, ակամայից ինձ էի վերհիշում՝ ամեն տոն օրերին դպրոցում բանաստեղծություն արտասանելիս: Քանի որ ես ամենալավ սովորողներից մեկն էի, ուսուցիչներս ամեն տոնին հերոսական բանաստեղծություններն ինձ էին կարդալ տալիս: Սրտաբուխ բացականչություններով արտասանածս «փառավոր անցյալի» մասին բանաստեղծությունները բախվելով վախից չռված մանկական աչքերին, ջրում կորած երեխաների գլուխներին, օրեր շարունակ կարմիր արյուն հոսած գետի ջրերին փշուր-փշուր էին լինում»¹¹: Ճիշտ է, երբեմն ամենադժվարը ճշմարտությանը հավատալն է, քանզի այն արդեն անցյալ է և անհնար է այն փոխարինել մեկ ուրիշ անցյալով: Ֆեթիիյեն երբեք չի մոռանա եղեռնի զարհուրելի-անմարդկային

¹⁰ **Ֆեթիիյե Չեթին**, Մեծ Մայրս, «Պարույր Մևակ» հրատ., Երևան, 2008 թ., էջ 62:

¹¹ Նույն տեղում, էջ 63:

տեսարանները, չնայած դրանց երբեք ականատես չի եղել, փոխարենը լսել-կարեկցել է մարդկային բնագործ և վերածել չափազանց արժեքավոր գրքի:

«Սրից պրծածներ»՝ այսպես էին թուրքերը կոչում կենդանի մնացած և, բնականաբար, կրոնափոխված ու թրքացման ուղին ստիպողաբար բռնած հայերին, սակայն այս կերպ արտահայտվողները հաշվի չեն առել, որ «սրից պրծածն» ի գորու կլինի վերափոխելու շատերի գիտակցությունը, նրան ցեղասպանամեծ թուրքից վերածելու կարեկից թուրքի, վերածելու՝ մարդու:

Հերանուշ Կատարյանին վիճակված չէր հանդիպել եղբորը (հանդիպելուն ու նամակագրական կապի հաստատմանը ընդդիմանում են Հերանուշի թուրք բարեկամները, իսկ երբ Ֆեթիհյեհին, ի վերջո, հաջողվում է հեռախոսային կապ հաստատել իր հայ բարեկամների հետ, Հերանուշի եղբայրը՝ Խորենը, մահանում է կաթվածից), սակայն Ֆեթիհյեհին հաջողվում է վերջապես գտնել իրական բարեկամներին՝ ապացուցելով, որ դահիճների միջավայրում արցունքն աչքին և հայացքը Սիվերեքի լեռներին հառած Հերանուշի ապրած կյանքն իզուր չի անցել. «Տառիս մահից մի քանի ամիս էր անցել, երբ մի օր «Ալօս»-ից Հրանտ Դինքը զանգահարեց. – Կարո՞ղ ես խմբագրատուն գալ: Ամերիկայից ազգականներդ քեզ են փնտրում: Երբ Հրանտը զանգահարեց, փողոցում էի, անձրև էր տեղում: Դրանից հետո չեմ հիշում, թե ինչեր ենք խոսել, հեռախոսն ինչպես եմ անջատել, այնտեղ փողոցի մեջտեղում, հենց այդպես կանգնած մնացի»¹²:

Խոսքս ցանկանում եմ ավարտել Հերանուշի քրոջորդի Ռիչարդի խոսքերով, ով կարողանում է լուսահոգի արքեպիսկոպոս Մեսրոպ Աշյանի օգնությամբ գտնել Ֆեթիհյեհին. «Կոտորածի մասին առաջին պատմությունները ես իմացա, երբ չորս-հինգ տարեկան փոքր երեխա էի: Իմ ողջ կյանքում թուրքերից շատ եմ վախեցել, նրանց հանդեպ խորը ատելություն եմ տածել: Կոտորածի ժխտումն ամեն ինչ է՛լ ավելի վատացրեց: Հետո իմացա, որ դուք (խոսքը Ֆեթիհյե Զեթինի մասին է - Վ. Ա.) նույնպես թուրք եք, սակայն միևնույն ժամանակ մեր ընտանիքի մի

¹² **Ֆեթիհյե Զեթին**, Մեծ Մայրս, «Պարույր Սևակ» հրատ., Երևան, 2008 թ., էջ 93:

մասնիկն էր: Հիմա ես այս մեծ ընտանիքը սիրում եմ՝ իր բոլոր ճյուղերով, և տենչում եմ ծանոթանալ իմ մյուս զարմիկների հետ և նույնիսկ նրանց հետ նվագել: Սակայն կոտորածը ժխտողներին շարունակում եմ ատել և նրանց երբեք չեմ ներելու»¹³:

Арсенян Ваге, к.ф.н., доцент, ЕГУ, Тема Геноцида в романе Фетхие Четин “Моя бабушка”- Данная статья исследует автобиографический роман турецкой писательницы, в котором молодая девушка рассказывает об ужасающей правде про геноциде армян в османской Турции. Основной акцент делается на национальную принадлежность автора романа, что делает события, разворачивающиеся в романе, заслуживающими большего доверия.

Arsenyan Vahe, PhD, associate professor, YSU, The Theme of Genocide in Fethiye Cetin’s “My Grandmother”-The article studies the autobiographic novel of the Turkish writer, which is about the young girl who tells about the dreadful truth she has discovered about the Armenian genocide. The fact of the Turkish identity of the author is emphasized, which makes the events she describes even more trustworthy.

¹³ **Ֆեթիյե Չեթին**, Մեծ Մայրս, «Պարույր Սևակ» հրատ., Երևան, 2008 թ., էջ 128:

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՅՈՒՆՄԸ
Գ. Է. ԳՈՒԱՐԶԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՀՄԱԾԱՆ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր – *ցեղասպանություն, ոճրագործություն, բռնություն, ծագում, անվտանգություն, միջազգային իրավունք, ականալիտի հուշագրություններ:*

Ключевые слова: *геноцид, преступление, насилие, происхождение, безопасность, международное право, мемуары очевидца.*

Key words: *genocide, crime, violence, ancestry, security, international law, memoirs of eye-witness.*

«Յեղասպանությունը», որպես իրավաբանական եզրույթ, պատմական առումով բավականին նոր երևույթ է: Յեղասպանությունը առաջին անգամ սահմանում է ստացել 1944 թ., լեհական հրեա փաստաբան Ռաֆայել Լեմկինի կողմից¹, մարդ, ով կորցրել է իր ընտանիքը Հոլոքոստի ժամանակ: Լեմկինը ստեղծում է այս նոր եզրույթը, որպեսզի արտահայտի ցեղի, տոհմի, ազգի դեմ ուղղված մի հնավանդ և դատապարտելի սովորույթ՝ իր նոր զարգացման մեջ: Բառը կազմված է հին հունարեն GENOS (ցեղ, ազգ, տոհմ) և լատիներեն CIDE (սպանություն) բառերից: Յեղասպանություն եզրույթը հետագայում ձեռք բերեց օրենսդրական գործածություն: 1948 թ. ՄԱԿ-ը գործի դրեց ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժման Կոնվենցիան, որը ուժի մեջ մտավ 1951 թ.² սահմանելով ցեղասպանությունը դատապարտող միջազգային

¹ Լեմկին Ռաֆայել (1900-1959), իր ուսումնասիրություններում Հայոց Մեծ եղեռնը դասում է այն հանցագործությունների շարքին, որոնք որակավորվում են որպես ցեղասպանություն:

իրավունքը ոչ միայն պատերազմի, այլև խաղաղ ժամանակներում: Ըստ Կոնվենցիայի, ցեղասպանությունը սահմանվում է որպես գործողություն, որի նպատակն է ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնել ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբ, ինչպես նաև՝

ա. սպանել խմբի անդամներին,

բ. խմբի անդամներին մարմնական կամ հոգեբանական լուրջ վնաս պատճառել,

գ. ամբողջական կամ մասամբ ոչնչացման նպատակով դիտավորյալ վնաս պատճառել նրա կյանքի պայմաններին,

դ. ազդեցիկ միջոցներով ծնելիության կանխումը խմբում,

է. խմբի երեխաների բռնի տեղափոխում մեկ այլ խումբ²:

Այսուհետ ցեղասպանության մասին խոսելիս պետք է հիշենք, որ դա ոչ միայն ողբերգություն է, այլև հանցագործություն՝ հանցագործություն մարդկության դեմ: Ողբերգությունը բարոյական կատեգորա է և ոչ միշտ է դատապարտելի իրավական նորմի տեսակետից, միչդեռ հանցագործությունը, հաշվի առնելով նաև բարոյական գործոնը, իրավաբանական կատեգորիա է և դատապարտելի է օրենքով: Այսպիսով՝ Հայոց Մեծ եղեռնի՝ ցեղասպանության ճանաչման-չճանաչման հարցը ոչ միայն բարոյականության հարց է, այլ նաև իրավաբանական:

Այսօր, իրեն համարելով Օսմանյան կայսրության ժառանգորդ, Թուրքիան ոչ միայն չի ճանաչում, այլև ժխտում է ցեղասպանության փաստը: Հայ ժողովուրդը (Հայաստանի Հանրապետությունը, Սփյուռք և միջազգային բոլոր հայկական կազմակերպությունները) շարունակում է իր պայքարը հանուն այդ ոճրագործության ճանաչման՝ հիմնվելով միջազգային իրավունքի նորմերի վրա:

Սակայն պետք է նշենք, որ Հայոց ցեղասպանության հարցն արձագանք է ստացել արդեն կատարման ընթացքում: Այս առումով բավական է նշել Մորգենթաուի, Լեփսիուսի, Ֆիլբյուխերի, Վեգների փաստական հիշողությունները և եղեռնի շրջանում լույս տեսած այլ հրատարակություններ: Հարկ է նշել նաև, որ այս ոճրագործությունը արտացոլվեց

² <http://www.hrweb.org/legal/genocide.html> 22.05. 2015

նաև արվեստում: Հիշենք, մասնավորապես, Ֆրանց Վերֆրեյի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը:

Այս ավանդույթը հետագայում շարունակեցին բազմաթիվ գրողներ: Դրանցից մեկն է Գ. Է. Գուարչը: Գոնսալո Էրնանդես Գուարչը իսպանացի ճարտարապետ-ուրբանիստ է, ով իր ստեղծագործությունները նվիրել է ջարդեր տեսած ազգերին և այս թվում՝ հայերին: Հայոց ցեղասպանությանը նվիրված է եռագրություն, որի մեջ մտնում են «Հայկական տոհմաձառը», «Հայկական կտակը» և «Սպիտակ լեռը» վեպերը:

«Հայաստանի ձայնի» լրագրող Ջառա Գևորգյանի հետ հարցազրույցի ժամանակ գրողն իրեն տրված այն հարցին, քե «Ինչո՞ւ իսպանացի գրողը վերցրեց մեծ պատասխանատվություն՝ գրել Հայոց ցեղասպանության մասին»³, պատասխանում է. «Ավելի քան կես դար առաջ մայրս, ով մոլի կարդացող է, տվեց ինձ ընթերցելու իրեն դուր եկած մի քանի ստեղծագործություն»⁴: Խոսքը Վիլյամ Սարոյանի ստեղծագործությունների մասին է: Պատանի Գուարչը կարդում է Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը: Իսկ 90-ական թվականներին արդեն հռչակ վայելող գրողը Ժմուսն հանդիպում է Թերեզա Հակոբյանին, որը ցույց է տալիս նրան իր ընտանիքի փաստաթղթերն ու նկարները: Եվ բացի այդ, գրողը ծանոթանում է Հենրի Մորգենթաուի հուշագրություններին (ի դեպ, «Հայկական տոհմաձառը» վեպը նվիրված է հենց Հենրի Մորգենթաուի հիշատակին): Բացի այդ, իր դերը ունեցավ Մովսիսյանների ընտանիքը, որոնց հետ հեղինակը կապված է բարեկամական կապով: Այսպես հեղինակը սկսեց ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը ու ծնունդ առավ եռագրությունը՝ նվիրված հայ ժողովրդի պատմության ողբերգական էջերին:

Հարկ է նշել, որ չնայած այն փաստին, որ Գուարչը պարզևատրվել է «Մովսես Խորենացի» պետական շքանշանով, նա այնքան էլ հայտնի չէ հայ ընթերցողին: Ավելացնենք նաև, որ և՛ արտասահմանյան, և՛ հայ գրականագիտությունը չի անդրադարձել տվյալ ստեղծագործություններին: Մույն հոդվածի նպատակն է և՛ ծանոթացնել, և՛ փորձել սկիզբ դնել

³ <http://www.yerkramas.org/2013/06/27/gonsalo-guarch-ya-dolzhen-byl-rasskazat> 15.11.2014

⁴ Նույն տեղում:

այս վեպերի, մասնավորապես «Հայկական տոհմաժառ» վեպի մուտքին հայ գրականագիտության մեջ:

Գուարչի «Հայկական տոհմաժառ» վեպը իրենից ներկայացնում է ցեղասպանության ականատեսների հուշագրությունները: «Այնպես որ ես՝ Դարոն Նահուդյանը, արեցի մեկ բան՝ հավաքեցի քամուց ցրված տերևները»⁵: Վեպն ունի փաստագրական բնույթ և ավելի մոտ է արխիվային հետազոտությանը: Նա ցեղասպանություն անցած հայուհու՝ Մարի Նահուդյանի և թուրք սպա՝ Քեմալ Համիդի որդին է: Դարոնի մանկությունն անցել է լռության մթնոլորտում: Մարին ուներ հոգեբանական խնդիրներ: Նա ինքնամփոփ մարդ էր: Դա պայմանավորված է նրանով, որ նա չէր ցանկանում փոխանցել ծանր հիշողությունները: Նա ամեն կերպ հեռու էր պահում Դարոնին. «Մայրս չէր ցանկանում պատմել ինձ որևէ բան: Նա խուսափում էր խոսել դրա մասին: Կարծես թե այդ հիշողությունները ցավ էին պատճառում նրան»⁶:

Գրքի մեջ կան բազում վկայություններ՝ Ալիկ Նահուդյանի, Հովհանես Նահուդյանի, Մարի Նահուդյանի, Էժեն Ուորչի, Մոհամեդ փաշայի, Ֆատիմայի և այլոց: Դրանք օրագրերի կամ մամուլների տեսքով են հասնում հերոսին: Բացի դրանից, նա լինում է Լոնդոնի և Ստամբուլի արխիվներում:

Պատմություններից մենք իմանում ենք, որ այն մարդիկ, ովքեր կարողացել են փրկվել, այսօր ապրում են Կահիրեում, Փարիզում, իսկ ավելի կրտսեր սերունդը՝ ԱՄՆ-ում: Սփռվածության աշխարհագրությունը բավականին լայն է: Այդ մարդիկ ստիպված էին լքել հայրենիքը, իսկ նրանց որդիները՝ ծնվել ոչ իրենց հայրենի հողի վրա: Դա խոսում է սեփական պատմամշակութային դաշտից վտարման մասին, որը չի կարող չազդել ազգային դիմագծի, ազգային ինքնագիտակցության վրա: Դա մարդու հեռացումն է իր ծագումնաբանական արմատներից:

«...Դեղեյանների ընտանիքը ասում էր ինձ, որ Ռիզե քաղաքում հայերն ունեցան մույն ճակատագիրը, ինչ Թուրքիայի մյուս հատվածներում»⁷, - ասում է Հովհաննես Նահուդյանը: «Դա այնքան տհաճ է, որ

⁵ Գուարչ Գ., Армянское древо, Москва 2008, с. 36.

⁶ Նույն տեղում, էջ 38:

⁷ Գուարչ Գ., Армянское древо, Москва 2008, с. 194.

սրտխառնոց է առաջացնում: Ինչպե՞ս կարելի է մարդկանց հետ վարվել այդ կերպ այն պատճառով, որ նրանք հայ են»⁸: «Իսկ տղամարդի՞կ: Որտե՞ղ են հայ տղամարդիկ: Ես քեզ կպատասխանեմ, սերժանտը պատմեց ինձ: Հայ զինվորները գնդակահարվել են առանց խղճի խայթի: Տղամարդկանց բռնում էին և բոլոր դեպքերում սպանում: Երիտասարդներին քարկոծում էին՝ հասցնելով մահվան: Բոլորի՞ն»⁹: «Դա քաղաքի՞ն չէր: Դրանք ուրվականներ էին: Համարյա բոլորը կանայք և փոքր երեխաներ էին ... Ոմանք, ակնհայտ էր, բռնաբարված էին¹⁰»: Եվ այսպիսի նկարագրությունները եզակի չեն վեպում: Եվ այս ամենը տեղի է ունենում բարձր ատյանների հրամանով: «Ես բացեցի հեռագիրը և կարդացի. «Արևելյան գավառների բոլոր հայերը պիտի ոչնչացվեն՝ պահպանելով գաղտնիություն և զգուշություն»: Ստորագրություն՝ «Աբդուլ Համիդ Նոուրի»¹¹, - ասում է Հալիլ-Բեյը: Հայ տղամարդկանց սպանում էին, որպեսզի չլինի դիմադրություն և, ամենակարևորը, սերունդ շարունակողը: Կանանց բռնաբարում էին, պահում էին իրեց հարեմներում, վաճառում էին քրդերին: Նույն ճակատագրին էին արժանանում երախաները:

«Միանգամից ես անհրաժեշտություն զգացի իմանալու ավելին՝ տեսնել ոչ միայն պատճառները, այլև ցեղասպանության առաջացման գործընթացը»¹², - ասում է Դարոնը: Եվ մեր աչքի առջև բացվում են XIX դ. վերջի, XX դարի սկզբի իրադարձությունները՝ Հայոց հարցը¹³: Ինքը՝ վեպը, սկսվում է 1894-1896 թ. համիդյան ջարդերից, որոնք սզբունքորեն մնացին անպատիժ (Ազատուհի Նազարյանի պատմությունը¹⁴):

Այդ առիթով կցանկանայինք ուշադրություն դարձնել այս վեպում անձնավորված թուրք ոճրագործների անուններին: Օսման Համիդ՝

⁸ Նույն տեղում, էջ 357:

⁹ Նույն տեղում, էջ 358:

¹⁰ Նույն տեղում, էջ 357:

¹¹ Նույն տեղում, էջ 356:

¹² Նույն տեղում, էջ 88:

¹³ Հայոց հարց՝ 19-րդ դ. առաջին կեսերում Թուրքիան պարտավորվում է բարեփոխումներ անցկացնել երկրի ներսում, իրավունքներ տալ քրիստոնյա ազգերին: Արդեն 1878 թ. այս հարցի շրջանակներում ծագում է Հայոց հարցը: Դա տեղի է ունենում Բեռլինի կոնգրեսի ժամանակ:

¹⁴ **Гуарч Г.**, Армянское древо, Москва 2008, с. 46-54.

մարդ, որը մասնակցում էր 1894-1896 թ. ջարդերին: Լի էր ատելությամբ հայերի նկատմամբ: Նա առևանգում է Ազատուհուն Ուրֆա քաղաքում: Բռնաբարության արդյունքում ծնվում է Մարի Նահուդյանը, Քեմալ Համիդ Օսման Համիդի որդին: Նա արդեն ցեղասպանության մասնակից է: Մարի Նահուդյանին ստանում է Օսման Համիդից որպես ընծա: Բռնաբարության հետևանքով ծնվում է Դարոն Նահուդյանը: Այս կոնտեքստում ասենք, որ Քեմալ Համիդը բռնությամբ տիրանում է մաս Մարի Նահուդյանի բրոջը՝ Ալիկ Նահուդյանին (հարազատ են մոր կողմից, Մարիի Նահուդյան ազգանունը Ազատուհու հայ ամուսնու ազգանունն է), որի հետևանքով ծնվում է Կրիկոր Նահուդյանը (հետագայում Գերմանիայում անվանափոխ է լինում՝ դառնալով Վոլֆ):

«Օսմանը հրեշ է ստեղծում: Բավական չէ ինքն է ստոր և տականք՝ նա ծնում է Քեմալին: Մարդ, որը գերազանցեց նրան իր ստորությամբ և տականքությամբ»¹⁵: Այստեղ, անունների մակարդակում, մենք տեսնում ենք ալյուզիաներ (ակնարկներ)՝ Օսման/օսմանյան կայսրություն, Քեմալ (Թուրքիա), Կրիկոր-Վոլֆ (Գերմանիա): Օսմանյան կայսրությունն իր ջարդերի քաղաքանությանը ատելություն սերմանելով՝ ծնունդ է տալիս ցեղասպան կայսրության մոր ձևավորմանը, որը կապված է Թուրքիայի հետ (ոճրագործության ժխտումը հանցակցություն է): Իսկ Քեմալը, մնալով չդատապարտված, ծնում է Վոլֆ- Գերմանիային՝ Հոլոքոստը (հիշենք, որ «Վոլֆ» գերմաներենով «գայլ» է մշանակում: Գայլը թուրքերը համարում են իրենց տոտեմ կենդանին): Այսպիսով՝ բառ-անուն իմաստի մակարդակի վրա տեսնում ենք ցեղասպանության ծագումնաբանությունը: Գուարչը ցեղասպանությունը դիտարկում է որպես մարդկության դեմ չարիք, որի մի նախադեպը ծնում է հաջորդը:

Բացի այդ, մենք տեսնում ենք Աբդուլ Համիդ II-ի և կայսր Վիլհելմ II-ի կապը: Բարձրաստիճան սպաներ ֆոն դեր Գույրը և Շերմեր-Ռիխտերը կայսեր հրամանով գտնվում են սուլթանի մոտ: Նրանք բերում են Նիցշեի գերմարդու գաղափարը, դը Բուլենբիլեի՝¹⁶ իշխող ռասայի գաղա-

¹⁵ Գյարչ Դ., Армянское древо, Москва 2008, с. 92.

¹⁶ Բուլենբիլե Անրի դը (1658-1722)՝ ֆրանսիացի պատմաբան, քաղաքական գործիչ: «Կառավարման հին ձևի պատմությունը Ֆրանսիայում» իր աշխատության մեջ նկարագրել է Ֆրանկերի դոմինանտությունը գալլերի նկատմամբ և ֆրանկերի դերակատարու-

փարը, Գոբինոյի¹⁷ մտքերը՝ տալով թուրքական ֆանատիզմին փիլիսոփայական հիմքեր: Դրա համար արդեն կար պարարտ հող՝ հանձին Նազիմ բեյի՝ «...այդ երկերեսանի հրեաները, որոնք իրենց հայերի նման են պահում... Ես մտածում եմ, որ այստեղ՝ Գերմանիայում նրանք իրենցից ներկայացնում են այն, ինչ հայերը՝ Թուրքիայում»¹⁸: Սա է Հումանների, Ռորբախների, Նազիմ-բեյերի, Թալեսթների և մյուսների դիրքորոշումը:

Սուլթանի հարեմի գլխավոր ներքինի՝ Սելիմ բեյը, երիտթուրքերի հեղաշրջման մախօրեին կանչում է իր մոտ սուլթանական պաժ Հալիլ բեյին: Նա պատմում է Հալիլ բեյին. «Հալիլ, ես ու դու ծնունդով հայեր ենք... Քեզ գողացել են, քո ծնողներին սպանել են, հարազատներին ոչնչացրել են»:¹⁹ Եվ շարունակելով իր միտքը՝ ասում է. «Մի ժամանակ մենք հայեր էինք այնպես, ինչպես մեր պապերը և ծնողները երկար դարեր շարունակ: Մենք պատկանում էինք ուրիշ աշխարհի...»²⁰: Եվ դա սովորական երևույթ էր: Թուրքերի մոտ ավանդույթ էր ամեն մի արշավից իրենց հետ բերել փոքր երեխաների (հիշենք յեմիչերիներին, որոնք ծագմամբ քրիստոնյա ազգերից էին: «Յեմի չերի» նշանակում է «նոր արյուն»):

Ամբողջ ստեղծագործությունով անցնում են բռնաբարված կանայք, երեխաներ, սպանված տղամարդիք: Եվ, ինչպես տեսնում ենք, դա սկսվել է ավելի վաղ ժամանակներից: Հեղինակը վեպն ավարտում է հետևյալ բառերով. «Օղանավը թեթև վայրէջք կատարեց Բաքվի օդանավակայանում: Տարիներ շարունակ այս քաղաքով անցել են շատ հայեր: Թռիչքային ուղու մոտ ես տեսա մի քանի ծառ: Դրանցից մեկը, անկաս-

թյունը ֆրանսիական ազնվականության ձևավորման գործընթացում՝ շեշտելով ռասսայական հատկանիշները:

¹⁷ **Գոբինո ժոզեֆ Արտյուր դը** (1816-1882)՝ ֆրանսիացի գրող-վիպասան, սոցիոլոգ, արիական ռասայի տեսության հեղինակ: Անընդունելի էր համարում հավասարության գաղափարը: Էլիտիզմի և հիերարխիայի կողմնակից, որը տարածեց ռասաների վրա. արիացիներին համարում էր բարձ և դոմինանտ ռասա: Հիմնական աշխատությունն է «Էսսե ռասաների անհավասարության վերաբերյալ»:

¹⁸ **Դյարս Դ.**, Армянское древо, Москва 2008, с. 69.

¹⁹ Նույն տեղում, էջ 308-309:

²⁰ Նույն տեղում, էջ 310:

կաձ, հայկական տոհմաճառն է²¹»։ Այս ամենը ցույց է տալիս, թե ինչպիսի խորը ուսումնասիրություն է կատարել Գ. Գուարչը և հասկացել այն իրադարձությունների փոխկապակցվածությունը և հետևանքները, որը բերում է Թուրքիայի կողմից ցեղասպանության ժխտում- չճանաչումը։

Бадалян Карен, Магистр ЕГУ, Отражение Армянского геноцида в романе Г. Э. Гуарча “Армянское Древо”.- Автор данной статьи рассматривает тему отражения Армянского геноцида в романе Г. Э. Гуарча “Армянское древо”. Для раскрытия темы в статье приводится определение геноцида принятого ООН. Автор, следуя пунктам определения геноцида, шаг за шагом, показывает их отражение в романе.

Badalyan Karen, YSU, MA student - The reflexion of Armenian Genocide in G.H. Guarch’s novel “The Armenian Tree”.- The author of given articles presents the reflexion of Armenian Genocide in the Spanish writer G. H. Guarch’s novel, “The Armenian Tree”. Firstly the Definition of Genocide following the UN is given in article. After the author follows to points of Definition of Genocide step by step showing them in the novel.

²¹ Գуарч Г., Армянское древо, Москва 2008, с. 396.

ՍԿԱՆԴԻՆԱՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ

Բանալի բառեր – Հայոց ցեղասպանության ծրագիր, սկանդինավյան արշագանք, երիրթուրքեր, ժխտում, սկանդինավյան գրականություն:

Ключевые слова: Программа Геноцида армян, скандинавская реакция, младотурки, отрицание, скандинавская литература.

Key words: The plan of Armenian Genocide, Scandinavian reaction, Young Turks, rejection, Scandinavian literature.

Մեծ եղեռնը ոչ միայն Հայաստանի, այլև մարդկության նորագույն պատմության ամենաողբերգական էջերից է: Սակայն հայոց Մեծ եղեռնն ունի նաև մյուս՝ հերոսապատումի էջը: Հակառակ թուրքական պետության կողմից ամենայն բռնադատությամբ նախապատրաստված ցեղասպանության ծրագրի, այնուամենայնիվ Արևմտյան Հայաստանում և կայսրության որոշ հայկական բնակավայրերում ջարդարարները հանդիպեցին ուժգին դիմադրության: Վանում, Շապին Գարահիսարում, Մուսա լեռան վրա, Ուրֆայում և այլուր դիմադրական մարտերի արդյունքն այն եղավ, որ տասնյակ հազարավոր հայեր փրկվեցին մահից: Ձեռքի դիմած հայերն իրենց գիտակցված մահով փրկում և սրբագործում էին հայ ցեղի արժանապատվությունը:

Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում պատմության չավարտված գլուխն է, քանի դեռ ոճրագործն ըստ արժանվույն չի դատապարտվել, իսկ հայերը հատուցում չեն ստացել: Եթե հրեաների դեպքում փոխհատուցումը նյութական էր, որն այսօր էլ իրա-

կանացվում է Գերմանիայի կողմից, ապա հայերի համար բռնազավթված և հայաթափված հայրենիքի վերադարձի խնդիրը դեռևս մնում է չլուծված:

ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունները կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայում և միջազգային մի շարք այլ փաստաթղթերում սահմանված է, որ այդօրինակ հանցագործությունները վաղեմության ժամկետ չունեն և ցեղասպանություն իրագործած յուրաքանչյուր պետություն հատուկ իրավական պատասխանատվություն է կրում, անկախ այն բանից, թե կգտնվեն ու պատժի կենթարկվե՞ն ոճրագործությունների անմիջական կազմակերպիչները, թե՛ ոչ: Ուշագրավ է, որ վերջին տասնամյակներում լուրջ քայլեր են կատարվում Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման ուղղությամբ: Դրան նպաստեցին մի շարք այլ գործոններ, առաջին՝ 1965 թ. ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի մի շարք երկրներում լայնորեն նշվեց Մեծ եղեռնի 50-ամյակը, երկրորդ՝ ԱՍԱԼԱ-ի և սփյուռքահայ ընդհատակյա այլ կազմակերպությունների զինական գործողությունները, երրորդ՝ Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում և այլուր գործող մարդու իրավապաշտական կազմակերպությունների աճող ճնշումը կառավարությունների վրա՝ հայերի ցեղասպանությունը ճանաչելու պահանջով: Այս բոլորը տվեցին իրենց դրական արդյունքը. Միջազգային շատ հեղինակավոր կազմակերպություններ, պետական պաշտոնական շրջանակներ սկսեցին քննարկել Հայոց ցեղասպանության դատապարտման խնդիրը:

1965 թ. Հելսինկիում կայացած խաղաղության համաշխարհային վեհաժողովի երկրորդ ենթահանձնաժողովը, ապա վեհաժողովի եզրափակիչ նիստը միաձայն ընդունեց բանաձև, որով ճանաչվում և դատապարտվում էր 1915 թ. Հայոց ցեղասպանությունը:

20-րդ դարում բազմաթիվ մտավորականներ իրենց ձայնը բարձրացրին ի պաշտպանություն հայ ժողովրդի, որոնց մեջ էին Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Յան Ռայնիսը, Անատոլ Ֆրանսը, Ռոմեն Ռոլանը, Էմիլ Վերհարնը, Ջոն Ռիդը, Յոզեֆ Մարկվարտը, Յոհաննես Լեփսիուսը, Ժակ դը Մորգանը, Անտուան Մեյեն, Ֆրիտյոֆ Նանսենը, Հեր-

բերտ Աղամա Գիրբոնսը, Արմին Վեգները, Ջեյմս Բրայսը, Առնոլդ Թոյն-բին, Հենրի Մորգենթաուն, Ֆայեզ Ղոսեյնը և շատ ուրիշներ: Հետագայում էլ երբեք չլրեց առաջադեմ մարդկության խղճի ու մտքի ծայրը:

Այսօր մի շարք երկրներ արդեն ընդունել են Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև ընդունել օրենքներ, որոնք քրեականորեն դատապարտում են դրա մերժումն ու ժխտումը: Այս հողվածում մասնավորապես ներկայացված է սկանդինավյան երկրների արձագանքը Հայոց Եղեռնին, ինչպես նաև անդրադարձը գրականության մեջ և արվեստում:

2000 թվականին Շվեդիան հաստատեց հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև: Այս բանաձևի ընդունման համար համառորեն պայքարում էր շվեդ քաղաքական գործիչ Գորան Գյունները, ով 2012 թվականին Հայաստան կատարած այցի ժամանակ ներկայացրեց իր «Հայոց Ցեղասպանությունը շվեդների աչքերով» գիրք-հետազոտությունը, որում ցեղասպանության մասին փաստեր են պատմում շվեդ ակադեմիկոսները:¹

Գորան Գյուները շվեդական եկեղեցական հետազոտությունների բաժնի գլխաշխատող և Ուփսալայի համալսարանի պրոֆեսոր է: Նա հեղինակել է կրոնի ազատության և մարդու իրավունքների հարցերին առնչվող մի շարք աշխատություններ:

Գիրքը բաղկացած է ներածությունից և ինը գլուխներից: Գ. Գյուներն առանձին գլուխներով անդրադառնում է համիդյան կոտորածներին, երիտթուրքերի վարչակարգի կողմից ծրագրած և իրագործած Հայոց ցեղասպանությանը, քեմալականների կողմից 1919-1922 թթ. հայ ժողովրդի հանդեպ իրագործած կոտորածներին: Հեղինակը Հայոց ցեղասպանությունը որակում է որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Աշխատությունն արժեքավոր է նրանով, որ հեղինակն օգտագործել է մեծ թվով շվեդական դիվանագիտական գեկուցագրեր, ակադեմիկոսների վկայություններ և մամուլի հրապարակումներ: Իններորդ գլխում Գ. Գյուները ներկայացնում է Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ շվեդական պառլամենտական քննարկումները և շվեդ հասարակության դիրքորոշումը: Հենց այդ գլխում է, որ նաև ներկայաց-

¹ Gunner G., Genocide of Armenians. Through Swedish Eyes, Yerevan, 2013.

ված է ցեղասպանությունների վերաբերյալ ուսումնասիրություն կատարող Սվեն Հեդինի հոդվածներից մեկը, որում նա նշում է. «Թուրքերը սարսափելի վայրագություններ են արել, որ բնաջնջեն հայերին»: Իսկ շվեդ քաղաքական գործիչ Հյալմար Բրենսինգն իր հոդվածում օգտագործել է անգամ «ցեղասպանություն» բառը: Գիրքն առաջին անգամ հրատարակվել է Շվեդիայում, շվեդերեն լեզվով, 2012 թ.:

Գորան Գյունների «Հայոց ցեղասպանությունը շվեդների աչքերով» գիրքը մանրամասնորեն նկարագրում է երիտթուրքերի սարսափազդու վայրագությունները, ինչպես նաև հարձակումները հայկական բնակավայրերի վրա: Այստեղ պատկերված են հայերի անտառների տառապանքներն ու անասելի զգացողությունները, որոնք ի չիք դարձրեցին յուրաքանչյուր տեղահանվող հայի վերջին հույսերն ու ապագայի տեսլականները: Գյունները հայերի նկատմամբ կատարված չարագործությունները ոչ միայն եղեռնագործություն է որակում, այլ նաև այս երևույթը ձևակերպում որպես էվակուացիա: Ընդհանուր առմամբ այս գիրքն ընթերցողին հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել այն արյունալի իրադարձությունների մասին, որ կատարվել են Թուրքիայում 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի առաջին տասնամյակներին: Գյուններն առանձին գլուխներում ներկայացնում է Համիդյան ջարդերը և երիտթուրքերի կողմից վաղօրոք ծրագրված հայոց ցեղասպանությունը: Նա նաև նկարագրում է այդ գործողությունների հետագա ընթացքը 1912-1922 թվականներին:

Հետաքրքիր է նաև Գյունների այն համարձակ դիրքորոշումը, որը հնչեցվել է «Հայերի ցեղասպանությունը և սկանդինավյան արձագանքը» գիտաժողովի ընթացքում: Գյունները նշում է. «Թուրքերի այն փորձը, որ ցանկանում են քննարկել հայերի ցեղասպանության գործը պատմաբանների հետ, հնարավոր է հասկանալ: Այդ ամենով նրանք փորձում են միջազգային հանրության առջև մաքուր պահել իրենց դեմքը: Սակայն եղեռնագործությունն այն հարցը չէ, որը հնարավորություն կընձեռի հարաբերություններ շտկել և չդատապարտվել: Նման հանցագործությունները առաջին հերթին պետք է դատապարտվեն և հետո նոր ուսումնասիրվեն պատմաբանների կողմից: Այս հարցը նախ քաղաքական է, և

շատ պետություններ, որոնք Թուրքիայի հետ տնտեսական կապեր ունեն, փակում են իրենց աչքերը՝ մարդկության հանդեպ կատարած նման հանցագործությունը չդատապարտելու նպատակով»:²

Այս գիրքն արժեքավոր է հատկապես նրանով, որ հեղինակն օգտագործում է մեծ թվով շվեդական սկզբնաղբյուրներ՝ դիվանագիտական զեկուցագրեր, ակամատեսների վկայություններ, մամուլի հրապարակումներ: Գրքում տեղ են գտել տեղեկություններ, որոնք հեղինակին են տրամադրել ժամանակակից շվեդ դիվանագետները, միսիոներները, ճանապարհորդները, քաղաքական գործիչներն ու մշակութային գործիչները, ովքեր կապեր են ունեցել հայերի հետ և նկարագրել են 1915-1916 թթ. տեղի ունեցած զագրելի իրադարձությունները, ինչպես նաև մեծ դեր են ունեցել 1894-1896 թթ. շվեդ փրկարարները, ովքեր ջանում էին ամեն կերպ փրկել փախստականներին ոճրագործ թուրքերի ճիրաններից: Շվեդ փրկարարները այդ իրադարձությունները որակել են որպես «հայ ազգի ոչնչացում և հայերի իրական բնաջնջում»³:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար սկզբնաղբյուրային մեծ արժեք ունեն նաև ակամատես միսիոներների վկայությունները: Այս շարքը համարվել է շվեդուհի միսիոներ Ալմա Յոհանսոնի «Աքսորյալ ժողովուրդ. մի տարի հայոց պատմությունից» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հուշագրությամբ:

Իր գրքում Ալմա Յոհանսոնը պատմում է. «Պատուհանից մենք կարողանում էինք հետևել, թե ինչ է կատարվում դրսում: Հայերը վախենում էին և տներից դուրս չէին գալիս: Նրանք օրերով հանդուրժողականությամբ մնում էին իրենց տներում: Սակայն դա էլ չէր փրկում նրանց: Թուրք զինվորները ստիպում էին հայերին դուրս գալ իրենց տներից, իսկ վերջիններս փորձում էին որքան հնարավոր է պաշտպանել իրենց: Հաջորդ օրը մենք տեսանք, որ զինվորները փողոցներով ստիպելով տանում էին արյունահոսող և վիրավոր կանանց ու երեխաներին: Նրանք մեկը մյուսի կողմից ընկնում էին գետնին, իսկ զինվորները խարազանով ծե-

² Armenpress, April 20 2011 “Swedish Professor says many states prefer economic ties with Turkey to condemnation of the Genocide”.

³ **Gunner G.**, Genocide of Armenians. Through Swedish Eyes, Yerevan, 2013.

ծում էին ընկած վիրավորներին՝ ստիպելով ամեն կերպ ոտքի կանգնել: Ես երբեք չեմ մոռանա այդ տեսարանը»:⁴

Լիներով օտարերկրացի ականատես՝ հեղինակն անաչառորեն ներկայացրել է 1915 թ. իրադարձությունները Մուշում, որտեղ գտնվել է 1901-1915 թթ.: Նրա հուշերը հայերեն և ռուսերեն հրատարակվում են առաջին անգամ:

Հաջորդ մեծարժեք ստեղծագործությունը սկանդինավյան գրականության մեջ, որն անդրադառնում է Հայոց Ցեղասպանությանը, Հենրիետտե Լուսինդե Քոլինի «Մեծ Ցավը» պատմվածաշարն է: Գրողը ազգությամբ հայ է. նրա ընտանիքը բախտի քմահաճությամբ հայտնվում է Դանիայում, օգնություն ստանում և հաստատվում այնտեղ: Իննսուննեկ տարի անց հայերեն առաջին անգամ լույս է ընծայվում դանիացի գրող, հասարակական գործիչ Ինգա Նալբանդյանի հայոց Մեծ եղեռնի մասին պատմող «Մեծ ցավը» պատմվածաշարը:

Հեղինակը ծնվել է հայտնի մանկագիր Հ. Ք. Անդերսենի հետ արյունակցական կապ ունեցող ազնվատոհմիկ ընտանիքում: Ինգա Նալբանդյանը՝ օրիորդական անունը Հենրիետտե Լուսինդե Քոլին, ծնվել է 1879 թվականին դանիական Սոլերոդ քաղաքում՝ ազնվատոհմ Յոնաս Սիգիզմունդ Քոլինի ընտանիքում: Ծննդավայրում կրթությունը ստանալուց հետո մեկնում է Շվեյցարիա՝ ֆրանսերենի դասեր առնելու: Այնտեղ էլ հանդիպում է ապագա ամուսնուն՝ Պաուլ Նալբանդյանին: 1904 թվականին նրանք ամուսնանում են: 1909 թվականին ամուսնու հետ ճամփորդում է Կոստանդնուպոլիս: Ամուսինը ստանձնում է հայկական գիմնազիայի տնօրինությունը, իսկ Ինգան աշխատանքի է անցնում տեղի հայկական հիվանդանոցում: Սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը և երիտթուրքերը սանձազերծում են հայերի կոտորածները: Ինգայի ամուսինը ծանր հիվանդանում է և շուտով մահանում: Ինգա Նալբանդյանին ոչինչ չի մնում անելու, քան վրկել երեխաներին: Նա վերադառնում է հայրենիք և հաստատվում Կոպենհագենում, որտեղ էլ 1929 թվականին հեռանում է կյանքից: Ինգա Նալբանդյանն ունի հարուստ հրատարակչական կենսագրություն, բազմաթիվ ստեղծագործություններ:

⁴ **Յոհանսոն Ա.**, «Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից», Երևան, 2008:

րի հեղինակ է: 1916 թվականին մազապուրծ հասնելով Դանիա, նա ձեռնամուխ է լինում թղթին հանձնելու իր տեսածն ու լսածը: Երեք տարում գրում է պատմվածքների մի ամբողջ շարք և եռագրությունը, որը եվրոպական հասարակության համար հանդիսացավ Հայոց ցեղասպանության մասին գրելու առաջին փորձը: Ինգայի գրքերը թարգմանվել են շվեդերեն, անգլերեն, ֆլամանդերեն և ֆրանսերեն: Ավելի ուշ Ինգան սկսում է համագործակցել Ազգերի լիգայում Դանիայի պատվիրակ Հեննի Ֆորչհամերի հետ՝ ի պաշտպանություն Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած փախստականների իրավունքների:

«Մեծ ցավը» գիրքը բաղկացած է մի քանի պատմվածքներից, որոնք բոլորն էլ պատմում են հայերի կրած գրկանքների և ցավերի մասին՝ պատմվածքները պատելով Գարեգին Էֆենդու և Մարիամ հերոսների անձերի շուրջը: Այս գրքում բոլոր կերպարները հանդիսանում են եղեռնից մազապուրծ եղած անձեր, ովքեր իրենց մեջ կրում են փախուստի և գոյատևման գաղափարները: Այս գիրքը տարբերվում է մյուս գրքերից նրանով, որ այստեղ ցավի կողքին նաև ներկայացված է հայ մարդու հոգու լույսը, նրա անսպառ սերն իր ազգի ու երկրի հանդեպ: Գարեգին Էֆենդին, ով կտրված է իր հողից ու արմատից, երագում է, որ գոնե մի պահ կտրվի իրականությունից: Նա բաղձում է մոռանալ, որ չկան իր բոլոր ընկերները, աշխատակիցները, քաղաքական գործիչները, Ազգային ժողովի անդամները, խմբագիրները, պրոֆեսորները, բոլոր մտավորականները. բոլորն էլ տարագրվեցին ու կախվեցին, լավագույնս գնդակահարվեցին Փոքր Ասիայի խորքերում. Պատրիարքարանները փակ են, խմբագրությունները՝ բռնագրավված:⁵ Նա թախծում է, քանի որ երկրի վրա այլևս չի ապրում ու չի երգում Կոմիտասը: Սակայն այս ամենի հետ մեկտեղ Գարեգին Էֆենդին հիվանդանոցի իր անձնակազմի հետ նշում է Վարդավառը՝ փորձելով պահպանել հայկական ավանդույթները, ինչպես նաև մի փոքր յուրահատկություններ մտցնել տխուր օրերի շարանի մեջ: Նրանք իրար վրա ջուր են ցողում, որը կարող ենք համեմատել նոր կյանքի և նոր ցողերի հետ, որոնք կաթիլ առ կաթիլ սփռվելու են աշխարհով մեկ: Այս մարդկանց հոգում անպատմելի վիշտ է ապրում, սակայն

⁵ Ինգա Նալբանդյան, Մեծ Ցավը, Վանաձոր, 2008, էջ 63:

մրանք չեն մոռանում նշել հայ եկեղեցու տոներն ու ուրախանալ թեկուզ մի քանի լուսանկարով: Եվ անգամ հիվանդանոցում աշխատող ֆրանսիացի բժիշկն է նկատում մրանք ուրախությունը և ասում Գարեգին Էֆենդյուն. «Տեսե՛ք, ինչպես են եռանդուն հավաքվում իրար գլխի. բակը լցնում հավատով ապագայի հանդեպ: Օ՛, դա կիրակնօրյա երգն են երգում: Այն երգը, որ ես սիրում եմ այն երեկոյից ի վեր, որ դուք ինձ մրա թարգմանությունը տվեցիք: Իսկ այդ թուրք հրեշներն ունակ են ամեն բան անելու»:⁶ Բայց Գարեգին Էֆենդին իր գրադարանային ցույց է տալիս հայի այն տեսակը, որ անգամ ունակ է օգնելու իր թշնամուն և ոչ մի կերպ հրեշի զազրագործությունից չի փոխվում. նա վիրավոր թուրքին օգնում է և ոտքի կանգնեցնում: Մինչդեռ թուրքը՝ սոված երեխային կտտանքների է ենթարկում, և իր արյան պահանջի քաղցը հագեցնում:

Հայերը համակված են անհազ վրեժի գաղափարով, որը անգամ բույն է դրել թուրքերից հազիվ փրկված փոքրիկ Օնիկի մեջ, ով իր ցեղի գեղեցկության ոչ մի նշանը չունի, բայց նա իր արյան մեջ, հոգում ունի մրա սև աչքերը: Եվ իր ցեղի միտքն ունի էության ու ամենօրյա կեցվածքի մեջ: Բայց նաև ունի մրա անսահման հնազանդության ունակությունը՝ գրված իր դեռ լրիվ մանկական ու հարթ ճակատին:⁷

Գրքի տողերի լավատեսությունն ու հոգևոր հավաստի լույսը, վերջին տողերի մեջ ամփոփված երեխայի պսակում ժպիտն ամմիջապես փոխանցվում են ընթերցողին, ով ինքն էլ ժպտում է՝ ենթադրելով, որ հայի ուժն ու հոգևոր լույսը երբեք չի մարում, և որքան փորձեն կոտրել իրեն, այնքան անկոտրուն է նա:

Գրքում անընդմեջ կրկնվող աղոթքով էլ ավարտենք այս.

Փառք Քեզ, Տեր Աստված մեր ու թանկագին պահապան մեր,

Դու, որ մեզ լավ օրերը պարգևեցիր ու հիմա՝ վատ օրերը,

Տեսանք գիշերվա գալն ու գիշերը չի անցել դեռ:

Տե՛ր, մաքրիր մեր հայրերի հողը ոտխի վայրագություններից.

Տե՛ր , տուր խաղաղություն աշխարհին: Թող եղբայրությունն հարատևի,

⁶ Ինգա Նալբանդյան, Մեծ Ցավը, Վանաձոր, 2008, էջ 79:

⁷ Նույն տեղում, էջ 111:

Առ քն զիրկը մեր մահատակներին ու մահատակվող հայերին:
Տեսանք զիշերվա գալն ու զիշերը դեռ չի անցել:
Տուր մեզ ուժ, համբերություն, հասցրու մեզ հաղթանակի:

Брян Армине, соискатель ЕГУ, Литературная рецензия ответ скандинавских стран на Геноцид армян- Геноцид армян не только боль армянской нации, но и всемирное горе. Геноцид армян— Великое Злодеяние был организован и осуществлён в 1915 г. (по мнению некоторых источников, продлился до 1923г.) на территориях, контролируемых властями **Османской империи и Турецкой Республики**, с применением физического уничтожения и депортации, включая перемещение **гражданского населения** в условиях, приводящих к неминуемой смерти. Геноцид армян является первым геноцидом XX века. Турция традиционно отвергает обвинения в массовом истреблении более полутора миллиона армян в годы. В статье были изучены книги Горана Гуннера “Геноцид армян глазами шведов” и Инги Налбандян “Большая боль”. Книга “Геноцид армян глазами шведов” впервые была издана в Швеции в 2012 году. В книге отображены позиция и свидетельства шведских миссионеров о трагических событиях начала двадцатого века. Работа ценна тем, что автор использовал множество шведских дипломатических докладов, свидетельства очевидцев и публикации прессы. В 9-й главе Г. Гюннер представляет обсуждения вопроса признания Геноцида армян парламентом Швеции и позиции общества по данному вопросу. А книга Инги Налбандян “Большая боль” рассказывает о боли армян не только в трагическом ракурсе, но и она не забывает описать их надежду и любовь к жизни.

Bryan Armine, senior researcher YSU, The Literary Reaction of Scandinavian Countries to Armenian Genocide- Armenian Genocide is the most tragic part of humans history. The first genocide of the 20th Century, occurred when two million Armenians living in Turkey were eliminated from their historic homeland through forced deportations and massacres between 1915-1918. The article is devoted to illustration of the Scandinavian literary reference to Armenian Genocide. Thus, here at is studied Swedish author Goran Gunner’s research “Genocide of Armenians through the Swedish eyes”. The book consists of an introduction and 9 chapters. In separate chapters Gunner represents the Hamidian massacres, the Armenian Genocide, planned and implemented by the regime of Young Turks, and the massacres of the Armenians carried out by Kemalists in 1919-1922. The author depicts the Armenian Genocide as the first genocide of the 20th

century. The volume is valuable as the author uses a number of reports of Swedish diplomats, eyewitness accounts and press reports. In Chapter 9 Gunner demonstrates the parliamentary debates on the recognition issue of the Armenian Genocide and the position of the Swedish society on this of the issue. The article also presents Danish author Inga Nalbandyan's book- "Great Pain". In this book the author, who was an Armenian byerigin, was a witness of Genocide and presented the whole pain and sufferings of Armenians, who has never lost their hope and love towards life.

**ԱՎԱՏՐՈՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԱՐԽԻՎՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

*(պատմաբան Արտեմ Օհանջանյանի գիրական վաստակի
գնահատման փորձ)*

Բանալի բառեր – ցեղասպանություն, ավարտապետական և գերմանական պետական արխիվներ, պատմական ճշմարտություն, հայկական հարց, Եդեմի մեղսակիցներ, հայ փախստականներ:

Ключевые слова: *Геноцид, Архивные документы Австро-Венгрии и Германии, историческая правда, Армянский вопрос, совиновники геноцида.*

Key words: *Genocide, Archival documents of Austro-Hungary and Germany, the historical truth, the Armenian issue, , the perpetrators of genocide.*

Վիեննայի համալսարանի դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, Հայոց ցեղասպանության և Հայկական հարցն ուսումնասիրող և լուսաբանող հայագի եվրոպացին՝ Արտեմ Սեդրակի Օհանջանյանը, իր մի շարք գրքերի նախաբանում համեստորեն նշում է, որ իր աշխատություններում փորձել է իրադարձությունների օբյեկտիվ պատկերը ներկայացնել: Եվ սա, թերևս, սեփական ազգի ցեղասպանության հարցով զբաղվող գիտնականի համար այն կարևոր չափանիշն է, որին ոչ բոլոր գիտնականները և առհասարակ ստեղծագործ անհատներն են կարողանում համապատասխանել: Հայկական հարցի մեկնաբանության տեսանկյունից բացառիկ գիտական արժեք են ներկայացնում Ա. Օհանջանյանի գիտական և գեղարվեստական աշխատանքները: Պատմագիտական գործունեությունից զատ նա զբաղվում է նաև կինոարվեստով:

Օհանջանյանի սցենարով ստեղծվել են 70 վավերագրական և գեղարվեստական ֆիլմեր (1-ին մրցանակներ՝ 1972՝ Մադրիդ, 1988՝ Վիեննա), որոնց մի զգալի մասը վերաբերում է Հայոց ցեղասպանությանը, հատկանշական է նաև «Սերգեյ Փարաջանով. Իմն է աշխարհը գեղեցիկ» գեղարվեստավավերագրական ֆիլմը (2-րդ մրցանակ՝ 200՝, Չիկագո):

Մեր պատմության՝ դարասկզբի ողբերգական ընթացքը կինոյի լեզվով արտահայտելու փաստավավերագրողի ներքին մղումը Օհանջանյան-պատմաբանին տարիներ առաջ ուղղորդում է Վիեննայի պետական արխիվների ուսումնասիրության, որտեղ հայկական ցեղասպանությունն ապացուցող բացառիկ փաստաթղթերի մեջ որքան թափանցում-խորանում, այնքան դժվար էր դառնում դուրս գալը: Տասներեք տարիների դժվարին աշխատանքի արդյունքում նա վեր է հանում օտար արխիվներում պահվող հսկայական նյութ՝ Հայոց ցեղասպանության իրողությունը իրապես հաստատող: Օհանջանյանը հեղինակ է «Հայաստան, թաքուն ցեղասպանություն», «1915. Անհերքելի վկայություններ», «Հայկական հարցը և Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան», «Հայերի ցեղասպանություն» (ավստրիական արխիվային փաստաթղթերի երկհատորյակ, 1988), «Ավստրիա-Հայաստան» չորսհատոր (1995), «Ավստրիա-Հայաստան 1872-1936», տասներկու հատոր (1995): Նա հայկական խնդիրների մասին բազմաթիվ հոդվածներ է հրապարակել ավստրիական մամուլում, իսկ Ավստրիայի պետական հեռուստատեսությունում աշխատելու տարիներին, ամեն ապրիլի 24-ին ցուցադրվում էին Հայոց ցեղասպանությանը նվիրված վավերագրական ֆիլմեր:

Ավստրիայում և գերմանախոս այլ երկրներում Օհանջանյանի վերոնշյալ գործունեության և մասնավորապես հրատարակված գրքերի շնորհիվ հասարակությունը իրազեկվում է Հայոց ցեղասպանությանը, դրա հետևանքներին և հարցի ներկա վիճակին¹: 1998-99-ից սկսած պատմաբանն աշխատանք է տանում՝ Հայոց ցեղասպանության հարցը ներքաշելու ավստրիական կառավարության քննարկումների մեջ: Բազմաթիվ էջեր կազմող փաստական նյութերը, որոնք գիտնականի ու քաղաքական գործիչների կողմից տրամադրվում էին ավստրիական իշխանություններին, երկարհաջողություններ չէին ունենում: Այս տարի, սա-

¹ «Ազգ» օրաթերթ, նոյեմբեր 17, 2012, 205 (5057):

կայն, ցեղասպանության 100-ամյա տարելիցին, Ավստրիան, ի վերջո, ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև: Անկասկած, դա նաև Արտեմ Օհանջանյանի երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն է: Բազմաձևատակ գիտնականը հայամաստ գործունեություն է ծավալել նաև ԱՄՆ-ում, Պարսկաստանում:

Արտեմ Օհանջանյանի գիտական հետաքրքրությունները, ինչպես դա երևում է նրա աշխատությունների վերը հրապարակված ցանկից, գլխավորապես կապված են Հայկական հարցի և Հայոց Մեծ եղեռնի խնդրի լուսաբանման հետ, որի նպատակով նա, իբրև հիմք, վերցնում է ավստրո-հունգարական և գերմանական արխիվների առավել քան հարուստ նյութերը: Այդ աշխատություններից յուրաքանչյուրը, բնականաբար, ունի ստեղծման իր պատմությունը և թելադրված է ինչպես գիտական, այնպես էլ պատմաքաղաքական որոշակի հանգամանքներից: Դրանք բացահայտում են պատմաբանի հիմնական թեմայի առանձին մեկ կամ մի քանի գծեր՝ իրենց նպաստը բերելով վերջինիս ամբողջականության ապահովմանը: Այս առումով, կարևորում ենք «1915 թվական: Անհերքելի վկայություններ» աշխատությունը, որը մեր կարծիքով ամփոփում է գիտնականի խոսքը խնդրի մասին և դառնում նրա գիտական վաստակի ամբողջական վկայությունը: Ուստի Հայկական հարցի և Եղեռնի մասին խոսելու դեպքում իբրև օրինակ կարելի է վերցնել հենց այդ գիրքը:

Գիրքն ունի հանրագիտարանային կառուցվածք և ընդգրկում: Մեր պատմության ամենաողբերգական էջի՝ 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի իրական պատկերն Ա. Օհանջանյանը ներկայացնում է համակողմանիորեն՝ տնտեսական, քաղաքական և բարոյական կյանքի փաստարկված տվյալներով: Հիմնական նպատակ ունենալով տալ Ավստրո-հունգարիայի և մասամբ նաև Գերմանիայի արխիվների՝ Հայոց Մեծ եղեռնի հետ կապված փաստաթղթերի քննությունն ու մեկնաբանությունը, Ա. Օհանջանյանը, այդուամենայնիվ, դրսևորում է լայն հայացք և ազգային ողբերգությունը դիտարկում է իր շարունակության մեջ՝ Թուրքիայում Հայկական հարցի ձևավորման ժամանակներից (1878 թ.) մինչև թուրքերի Կովկասյան ինտերվենցիան (1918-1920 թթ.): Խոսում են գրքի ենթավերնագրերը՝ «Հայկական հարց», «Երիտթուրքերը», «Առա-

ջին աշխարհամարտը և հայերը», «Եղեռնը» և այլն, որոնք ներկայացնում են պատմական դեպքերի ընթացքը:

Արտեմ Օհանջանյանն, իբրև պատմաբան, ունի իր յուրահատուկ դեմքը: Պատմական իրադարձությունների մեկնաբանության մեջ նա ընդհանուր առմամբ շրջանառության մեջ է դնում կարևոր փաստաթղթեր ու նյութեր: Հայկական եղեռնի արմատները նա տեսնում է թուրքերի ավանդական ներքին քաղաքականության մեջ: Իր աշխատությունը հիմնականում կառուցելով արխիվային փաստաթղթերի (հիմնականում առաջին անգամ հրապարակվող) հիման վրա, պատմաբանը լայնորեն օգտվում է նաև դիվանագետների, հայագետների, գրողների մամուլներից, հաղորդագրություններից, հիշողություններից, բացի այդ վկայաբերում է նաև այդ ժամանակաշրջանի մամուլը:

Ա. Օհանջանյանի պատմագիտական հայացքի մեջ ակնհայտորեն առանձնանում է երկու գիծ: Առաջին՝ փաստարկման բարձր մակարդակը և երկրորդ՝ գիտականից տրամաբանությունից զատ նաև հայկական ոգու մշտական առկայությունը: Աշխատանքում մի առանձին գլուխ նվիրված է մեր ողբերգության համար պատասխանատուներին: Բայց նա հավասարապես մեղադրում է նաև հայ գործիչներին և վկայակոչում նրանց ճակատագրական սխալները:

Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Վոլֆդիթեր Բիլը նշում է, որ Օհանջանյանը մատնացույց է անում գրեթե բոլոր եվրոպական գերտերությունների մեղսակցությունը 19-րդ դարի հայկական ցեղասպանությանը և հատկապես կարևորում պատմաբանի խոսքի հիմնավորվածությունը փաստաթղթերով՝ ըստ որոնց եվրոպական պետություններից առավել մեծ մեղքը բաժին է ընկնում Մեծ Բրիտանիային²:

Ըստ Օհանջանյանի՝ ցեղասպանությունից առաջ չկար հայ-թուրքական ավանդական թշնամություն, ընդհակառակը, մինչև 19-րդ դարը հայերը կոչվում էին «միլիթարիստիկա» (հավատարիմ ազգ): Ողբալի իրադարձությունները սկսվեցին այն օրվանից, երբ Օսմանյան կայսրությունը բալկանյան ժողովուրդներին ստիպված էր ազատություն տալ, և հայերն իրենց կրոնական ինքնավարությունը փոխեցին քաղաքական

² **Artem Ohandjanian**, Armenien 1915, Österreichisch-Ungarische Botschaftsberichte beweisen das Genozid, S. 11.

ինքնավարության համար պայքարով: Այդ պատճառով էլ Թուրքիան իր հողատարածքների կորստի վտանգ զգաց: Հզոր երկրների՝ ամերիկյան և եվրոպական քարոզչության շնորհիվ հայերին հույսեր ներշնչեցին, որի արդյունքը բացասական էր: «Նման ծրագիր ունեցող հայ փոքրամասնությունը Օսմանյան կայսրությունում դրվեց բնաջնջման սպառնալիքի տակ»:³

Բազմաթիվ վիճահարույց խնդիրները գրքում ստանում են իրենց համակողմանի բացատրությունն ու գնահատականը: Այդ խնդիրներից են 19-ի վերջերին և 20-ի սկզբների Թուրքիայի հնարավոր մասնատման, երիտթուրքերի և մաստնականության կապերի, հայկական ռեֆորմների տապալման, հայկական Առաջին հանրապետության ստեղծման և դրժվարությունների հաղթահարման, հայ փախստականների օգնության և նմանատիպ բազմաթիվ հարցեր: Մեկ ամբողջ ենթագլուխ Ա. Օհանջանյանն, օրինակ, նվիրում է եղեռնի զոհերի քանակին:

Համատեղելով փաստերը և արխիվների բազմաթիվ նյութերը՝ Ա. Օհանջանյանը մերժում է թուրքամետ պատմաբանների կեղծ կարծիքները և փորձում տալ եղեռնի զոհերի առավել հավաստի պատկերը: Արդեն 1915 թ. դեկտեմբերին, ըստ պատմաբանի, զոհերի թիվը հասնում էր մոտ մեկ միլիոնի⁴:

Օհանջանյանի անհերքելի վկայություններում պարզորեն երևում է, թե ինչպիսին էր գերմանացիների և ավստրոհունգարացիների պահվածքը հայերի հալածանքների հանդեպ: Աղբյուրները հայտնում են, որ գերմանական և ավստրո-հունգարական դիվանագետները պատերազմի սկզբում, համոզված էին, որ հայկական ընդհանուր ապստամբության դեմ օսմանյան կառավարությունը պետք է բռնություն գործադրի: Մինչև 1917 թվականը նրանք շարունակում էին գործել թուրքերից փոխառված այդ սկզբունքով: Պոլսի գերմանական դիվանագետների պահվածքի մասին, որոնք ջանում էին օգնություն մատուցել Թուրքիային նրա հակահայկական գործերում, արդեն գրվել և վերլուծության է ենթարկվել

³ **Wolfdieter Bihl**, Die Kaukasus-Politik der Mittelmächte. Teil 1 (Wien-Graz-Köln 1975), S. 166-181.

⁴ **Արսեն Օհանջանյան**. «1915 թվական: Անհերքելի վկայություններ (Ավստրիական վաճառականները հայոց ցեղասպանության մասին)», էջ 110:

Լեփսիուսի կողմից: Ավստրոհունգարիայի դիվանագետները ևս հավատում էին թուրքերի կողմից իրենց ներշնչվող այն գաղափարին, որ հայերն ըմբոստանում են և բռնել են թշնամության ուղին: Նրանք դեմ չէին թուրքական այն քայլերին, որ կատարվում էին օսմանյան իշխանությունների դեմ հանդես եկող հայերին: Բայց նրանք դեմ էին հայազգի, մանավանդ կանանց և երեխաների հանդեպ հալածանքներին:

1915 թ. մայիսի 1-ին Ավստրոհունգարիայի դեսպանը Թալեաթին նախագծուշացնում է, որ հայ կանանց և երեխաների հալածանքները կնպաստեն Թուրքիայի թշնամիների հակաթուրքական քարոզչությանը: Նրա գեկույցից պարզ երևում է, որ շատ զգույշ էր խոսում թուրքերի հետ այդ մասին, որպեսզի չվիրավորի նրանց զգացմունքները:

«Տղամարդկանց կոտորելը, իսկ կանանց ու երեխաներին հեռավոր շրջաններ արտաքսելը... ոչ միայն չի կարելի արդարացնել, այլև դա ընդմիշտ անարգանքի բիծ կմնա թուրքական կառավարության վրա», - գրում է Պալավիչինին 1917-ի մարտի 24-ին ⁵: Եվ այդուհանդերձ պնդում են, թե հայերի պլանավորած ջարդեր չեն եղել և թե այդ մասին փաստաթղթեր չկան: Սակայն միայն ավստրիական պետության արխիվներում կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնց հեղինակներն են ավստրոհունգարական հյուպատոսներ Պալավիչինին, Թրաուքմանսդորֆը, Նադանեցկին, ավստրոհունգարական կցորդ Պոմյանկովսկին, գործակալները, լրագրողները, Պապի նվիրակը և շատ ուրիշներ: Նրանք բոլորը հաղորդումներ են արել Վիեննա՝ Թուրքիայում հայերի հալածանքների մասին:

Օհանջանյանի կարևոր եզրահանգումներից մեկն էլ հենց այն է, որ հայերի վիճակը ծանրանում է նրանով, որ 1916 թվականի ամռանն արդեն Հայաստանը դարձավ քաղաքական օբյեկտ երկու հզոր երկրների համար. Ռուսաստանի, որը Հայաստանին ինքնավարություն էր խոստացել, և Ֆրանսիայի:

Օհանջանյան-պատմաբանը՝ գիտնականի իր կոչումին հարիր, արձանագրում է իր ազգի, իր պատմական հայրենիքի ցավալի անցյալի դեռևս ոչ մեկի կողմից չբացահայտված մութ էջերը: Տարիների գիտա-

⁵ Արսեն Օհանջանյան. «1915 թվական: Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին)», էջ 234-235:

կան դժվարին աշխատանքով Օհանջանյանը թերևս մի նպատակ է հետապնդել, որ մարդիկ, գուցեև ամբողջ ազգը, սովորի դասեր քաղել անցյալից: Այսօր ես եմ իր հոդվածներում և հրապակախոսության մեջ շատ սուր գնահատականներ է տալիս անկախ Հայաստանի կառավարության գործունեությանը բազմափորձ գիտնականի իր այն իրավունքով, որը Հայաստանում չընդունվել չի կարող, բայց և չի բարձրաձայնվում: Այս է պատճառը, որ Հայոց ցեղասպանությունը եվրոպական արխիվներով և եվրոպացու մեղքը կոտորածներում հաստատվող Օհանջանյանի - ծավալուն աշխատությունների առաջ եվրոպացին գլուխը մի պահ խոնարհում է, պարսիկը թարգմանում և հրատարակում է մեծ տպաքանակով, որպեսզի իր ազգի ներկայացուցիչները պատմական փորձով տեսնեն, թե ով է թուրքը, ով՝ եվրոպացին, իսկ ի՞նչ ենք անում մենք...

Սեզ համար ուսանելի է նաև գրքի վերջաբանը, որով պատմաբանը փորձ է անում հաղթահարել անցյալի անարդարությունն ու սխալները, ինչ-որ չափով միմյանց մոտեցնել հայերին ու թուրքերին այն նկատառումով, որ «Ապագան կերտելու համար հարկավոր է հաղթահարել անցյալը»:

Галстян Сона, аспирант ЕГУ. **Неоспоримые доказательства Геноцида армян австрийского и немецкого архива.** В статье мы показываем научные заслуги знаменитого историка, одного из современных исследователей текущего Армянского вопроса Артема Оганджяна.

Galstyan Sona, post-graduate student of YSU. **Conclusive evidence of the Armenian Genocide of the Austrian and German archives.** In this article, we show the scientific merits of the famous historian, one of the researchers of current Armenian issue Artem Ohanjanyan.

ՄԱՐԻԱՄ ՄՈՒՂԴՈՒՍՅԱՆ
*Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա,
գեղանկարի բաժին, մագիստրանտ*

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՄՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏՈՒՄ

Բանալի բառեր – *Անսելմո Ֆրանչեսկոնի, Հայոց ցեղասպանություն, ճանաչում, դատապարտում, արվեստ, Իրժի Նոսեկ, Արշիլ Գորկի, Ժան Ժանսեմ, գեղանկարչություն, արվեստագետ, «Կոտորածը»:*

Ключевые слова: *Ансельмо Францисconi, признание и осуждение Геноцида армян, искусство, Иржи Носек, Аршил Горки, Жан Жансем, искусство, художник, "Резня".*

Key words: *Anselmo Francecconi, Armenian Genocide recognition and condemnation, art, Jiri Nosek, Arshile Gorky, Jean Jansem, Artist, "Massacre".*

Ցեղասպանությունը պատկերող կերպարվեստի գործեր հայտնի են դեռ վաղ ժամանակներից. այն ստեղծագործելու նյութ է դարձել այնպիսի հանճարեղ գեղանկարիչների համար, ինչպես, օրինակ, Ուկելլոն («Սան Ռոմանոյի ջարդերը»՝ 1438-1440 թթ.), Բրեյգելը («Ամմեդների կոտորածը»՝ 1565 թ.), Ռուբենսը («Ամմեդների կոտորածը»՝ 1612 թ.), Դելակրուան («Քիոսյան կոտորածը»՝ 1822 թ.) և շատ ուրիշներ: 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո այդ թեմայով աշխատանքների թիվը կտրուկ ավելացավ հատկապես հայկական կերպարվեստում: Առհասարակ, արվեստագետին է տրված պատմել այն, ինչ հաճախ չես կարող գտնել դասագրքերում կամ մամուլի էջերում, ու հենց այդ արվեստագետներից ոմանք էլ 1915 թվականի դեպքերը մեկնեցին ու պատմեցին յուրովի՝ կտավի ու վրձնի անմիջական, համամարդկային լեզվով այն

Ժամանակ, երբ չէր խոսվում այդ մասին, իսկ կոտրված ողնաշարով հայրենիքում՝ Հայաստանում աղաղակող անարդարությունն ու ողբը լռության էին մատնված: Ճշմարիտ արվեստագետը չի կարող անհատորդ լինել այս ողբերգությանը, ու սա է պատճառը, որ Հայոց ցեղասպանության թեման գտել է իր արտացոլանքը նաև արևմտյան կերպարվեստում թե՛ ծագումով հայ նկարիչների, և թե՛ օտարազգի նկարիչների շնորհիվ: Սույն աշխատանքում կխոսեն Անսելմո Ֆրանչեսկոնիի (Իտալիա՝ 1921-2004 թթ.), Իրմի Նոսեկի (Չեխիա՝ 1924-2005 թթ.), Արշիլ Գորկու (ԱՄՆ՝ 1902-4-1948 թթ.) և Ժան Ժանսենի (Ֆրանսիա՝ 1920-2013 թթ.) աշխատանքների մասին՝ դրանք դիտարկելով որպես Ցեղասպանության թեմայի արտացոլումներ Արևմտյան կերպարվեստում՝ հատկապես շեշտադրելով հենց օտարազգի նկարիչների աշխատանքները: Գորկին և Ժանսենը ծագումով հայեր են, սակայն ներկայացնում են համապատասխանաբար ֆրանսիական և ամերիկյան կերպարվեստը: Այս չորս արվեստագետներին, ովքեր ապրել և ստեղծագործել են տարբեր երկրներում, միավորում է մեկ ընհանուր գիծ. նրանք բոլորն էլ անդրադարձել են Հայոց ցեղասպանությանը, այն եղել է նրանց արվեստի առանցքային թեմաներից մեկը, բացի դա, նրանք բոլորն էլ գրեթե սերնդակիցներ են (բացառություն է Գորկին, վերջինս, սակայն, կարևորագույն տեղ է զբաղեցնում ամերիկյան կերպարվեստում, այդ պատճառով ընդգրկել ենք նաև նրա ստեղծագործությունները):

Արշիլ Գորկի

Վերացական էքսպրեսիոնիզմի հիմնադիրներից Արշիլ Գորկին՝ ամերիկյան կերպարվեստի ամենավառ ներկայացուցիչներից մեկը, անձամբ է զգացել ու տեսել Ցեղասպանության ողջ արհավիրքը: Ծնվել է 1902 (1904) թ.-ի Արևմտյան Հայաստանում, Վան օսմանյան Խորհրդ գյուղում: Կենսագրական որոշ տվյալներ խիստ կարևոր են՝ հասկանալու Գորկու արվեստը, քանի որ այն ամբողջովին ներծծված է հայրենի գյուղի ու մանկության հիշողություններով: 1914 թվականին մոր և քրոջ՝ Վարդուշի հետ հասել են Հայաստան: 1919 թվականին մահանում է նկարչի մայրը նկարչի և նրա քրոջ ձեռքերում, և այս դրվագը զգայական խորն ազդեցություն է ունենում Գորկու վրա: 1920 թվականին նա քրոջ

հետ մեկնում է ԱՄՆ, որտեղ էլ սկսվում է դժվարին ուղին դեպի համաշխարհային կերպարվեստի Օլիմպոս: Կյանքի վերջին տասնամյակը շրջադարձային է նրա համար: Հենց այս շրջանում են ստեղծվել նրա որոշ գլուխգործոցներ, որոնք նախանշել են նրա ուղին դեպի համաշխարհային կերպարվեստի բարձունքներ: Նրա ամենահայտնի գործերից է «Նկարիչն ու իր մայրը» կտավը: Գույնով և կոմպոզիցիոն կառուցվածքով նկարչի մոր կերպարը հիշեցնում է սրբապատկեր, և նրա ու մեր՝ նկարը դիտողներիս միջև անսահման տարածություն է գոյանում: «Մեր հայկական աչքերը ավելի շուտ են խոսում, քան շուրթերը կշարժվեն և դեռ շարունակում են խոսել, երբ շուրթերն արդեն դադարել են խոսել»¹, - քերևս հենց այս լուռ նկարի մասին են մասն հեղինակի խոսքերը:

«Հոգեվարք» է կոչվում Գորկու կյանքի վերջին տարիներին արված աշխատանքներից մեկը. կարմիրի առատությունն ու սևի հետ զուգորդումները ողբերգության խորը շերտեր են ենթադրում: Երազը, ծննդավայրի ու մանկության հուշերը կազմում են նրա ողջ ստեղծագործական կյանքի թեման: Այս համատեքստում, այո, ամերիկյան կերպարվեստում Գորկու արվեստն է այն արտացոլքը, որում նկարագրվում է 1915 թվականի ողբերգությունը, որտեղ թեև չկան հենց ջարդերի տեսարաններ, սակայն նրա ողջ արվեստը հենց այդ ողբերգության վերապրման, կորուստների գերզգացմունքային արտահայտությունն է: Գորկին մահացել է 1948 թվականին՝ ինքնասպանություն գործելով: Նրա հրաժեշտի նամակում գրված էր. «Մնաք բարով, սիրելիներս»:

Ժանսեմ-Հովհաննես Սեմերջյան (1920-2013)

Ի տարբերություն Գորկու՝ Ժան Ժանսեմը՝ Հովհաննես Սեմերջյանը, շատ է անդրադարձել հենց Յեղասպանության թեմային. կոտորածի տեսարաններ, գաղթ, կախաղան հանված մարդկային ֆիգուրներ, թռչվառություն, արհավիրք, ողբ

«Հանց կտրած ծաղիկներ» կտավում, օրինակ, մարդկային ոսկորների բլուր է, որոնք, ի հակադրություն այդ սոսկալի իրադարձության, պատկերված են մուրբ գույներով, այնքան քնքուշ տրամադրությամբ, որ

¹ «Նամակներ», «Գրաբեր», Երևան, 2005, Պրինտինֆո, էջ 98:

իսկապես սրատված ծաղիկներ են հիշեցնում: Մեկ այլ՝ «Ջարդի տեսարան» կտավում անողոր ջարդերին հաջորդող տեսարանն է՝ մարդկային տառապանքի ու դաժանության անհավանական իրապատում:

Անսահման թախիծ ու ողբ կա նրա ստեղծած կերպարներում, խորը դրամատիզմ, միաժամանակ՝ նրբություն, անսահման սեր, կարծես հուշիկ քայք սիրելիների գերեզմանոցում: Ահա այն զգացումները, որ փոխանցում են նրա կտավները դիտողին: «Կապույտ կոտորած», «Մորթի էպիզոդ», «Փախստականները», «Մորթ», «Ռեքվիեմ»... Սրանք այն հիշողություններն են, որ, ի թիվս այլ վերապրումների, փոխանցել են նկարչին մաս նրա մայրը, որին նահատակվելուց փրկել էր անձանոթ մեկը Դեր Ջորում: Նուրբ, կապույտ գունագծերով էլ հենց շղարշված են ժանսեմի գրեթե բոլոր աշխատանքները՝ իբրև հիշողության ուժով վերծանված պատմություն...

Յեղասպանությունը պատկերող մոտ 40 աշխատանք նկարիչը նվիրել է Հայոց ցեղասպանության թանգարանին Հայաստան այցելության ժամանակ:

Անսելմո Ֆրանչեսկոնի (1921-2005)

Հայոց ցեղասպանության թեման կարևոր տեղ է զբաղեցնում իտալացի անվանի գեղանկարիչ, քանդակագործ Անսելմո Ֆրանչեսկոնիի արվեստում:

Նկարչին հայոց ցեղասպանության մասին պատմել է նրա հայագրի կինը՝ Մարգարիտա Թովմասյանը, իսկ Յեղասպանությանը նվիրված նրա մեծածավալ աշխատանքներն սկսելու համար հիմք է հանդիսացել Թալեաթի հեռագիրը Հալեպի նահանգապետին: Դրանում հրահանգ է եղել առանց խղճի խայթի կոտորել բոլոր հայերին, հատկապես՝ երեխաներին²:

Անսելմոն այս հեռագրից խորապես ցնցվել է և թողնելով քանդակագործությունը՝ 4 տարի տքնաջան աշխատել է այս շարքի վրա՝ ստեղծելով գրաֆիկական ոճով ու բանաստեղծական խորը ենթաշերտերով մի շարք աշխատանքներ՝ “Il Massacre” («Կոտորածը») խորագ-

² Հայկական սովետական հանրագիտարան, Հատոր 7, Երևան, 1981, էջ 429:

րով. «Թալեաթի հեռագիրը», «Գաղթը», «Բաժանում», «Արտաքսում», «Ջարդը», «Կանանց կոտորած», «Երեխաների կոտորածը», «Ռեքվիեմ» և այլն... Ահա 47 նկարներից՝ լիտոգրաֆիայի ու գուաշի աշխատանքներից մի քանիսի խորագրերը, որոնք ամփոփված են “Massacre” շարքում:

«Հեռագիր» է կոչվում Անսելմոյի՝ 1965 թվականին արված մեծածավալ աշխատանքներից մեկը. նկարի կենտրոնում պատկերված է ձիավոր, ու թեև առանձին պատկերներ չես կարող զանազանել, գծերի ու պատկերների ուղղությունները՝ կենտրոնից դեպի աջ ու ձախ կողմեր, փոխանցում են ընթացքի զգացողությունը, անհանգստությունը. ձիավորը շտապում է հասցնատիրոջը հասցնել հեռագիրը: Ուշագրավ աշխատանք է նաև «Երեխաների կոտորածը» (1966)՝ սարսափի ու արյան սոսկալի տեսարան. այստեղ արդեն ավելի դյուրին որոշակիորեն զանազանել կոնկրետ գործողություններ է, կարելի է տեսնել սպանվող մանուկներին, նույնիսկ կարելի է զգալ ջարդն իրականացնողների բնավորությունը, իսկ կիսատ մնացած պատկերները ստեղծում են ջարդի անվերջանալի տպավորություն: Շշմարիտ է նկատում «Մոռացված պատմություն» հոդվածում իտալացի արվեստաբան Ելենա Պոնտիգիան, երբ գուգահեռներ է անցկացնում Վերադննդի ժամանակ արված «Ամենեղների կոտորածը» աշխատանքը «Երեխաների կոտորածը» աշխատանքի հետ³:

Ընդհանրապես, շարքի բոլոր աշխատանքները կարծես Թալեաթի հեռագրին հաջորդած գործողությունները նկարագրող ընդհանուր պատկերներ լինեն. տանջահար գաղթականներ, արտաքսում, ձիավորներ, բաժանում, սպանվող մանուկներ, խառնիխուռն ամբոխ, արյուն, մարդկային զանգվածներ, կոտորած...

Անսելմոյի այս աշխատանքները ցուցադրվել են տարբեր երկրներում, այդ թվում՝ Շվեյցարիայում: Կարելի է պատկերացնել, թե ինչ նշանակություն է ունեցել այն ժամանակ սփյուռքահայ մեր հայրենակիցների համար տեսնել օտարազգի գեղանկարչի աշխատանքները՝ նվիրված

³ Il massacre-2005, Tadeh-barth publication, Yerevan, Armenia, 18 page 3.

Հայոց ցեղասպանության թեմային⁴: Անսելմոյի «Կոտորածը» աշխատանքները ցուցադրվել են Իտալիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Պարսկաստանում և միայն 2010 թվականին՝ Հայաստանում...

Անսելմոյի կտավները գույնով, սյուժետային զարգացմամբ, միմյանց հյուսված պատկերներով ու ծավալով իսկապես ազդրում են, սակայն դրանց ծավալը, կամ գույնի պարզունակ ընկալումը չէ, որ ստեղծում է այդ տպավորությունը: Համարձակ գծերի ու գույների հարաբերությունն ու հակադրությունը դիտողին են փոխանցում սոսկումի զգացումը, աղետի տրամադրությունը, հատկապես երբ ընկալում ես դրանց նշանակությունը՝ կոտորած:

Հետաքրքրական է, որ 1960-ական թվականներից սկսած Անսելմոյի այս աշխատանքները ցուցադրվել են տարբեր երկրներում, Հայաստանում նրա աշխատանքները ցուցադրվել են միայն 2010 թվականին, նրա կնոջ՝ Մարգարիտա Թովմասյանի նախաձեռնությամբ: Նա ամուսնու՝ Հայոց ցեղասպանության թեմային նվիրված 10 աշխատանքներ նվիրել է Հայաստանի ազգային պատկերասրահին, որտեղ էլ և գտնվում են մինչ այժմ:

Իրժի Նոսեկ (1924-2004)

Իրժի Նոսեկն ազգությամբ չեխ գեղանկարիչ է, ապրել և ստեղծագործել է Չեխիայում, ունեցել է ավելի քան 50 անհատական ցուցահանդես, որոնցից շատերը նվիրված են եղել Հայաստանին:

Իր մեծ սերը հայ ժողովրդի ու Հայաստանի նկատմամբ Իրժի Նոսեկն արտահայտել է գեղանկարչական աշխատանքների միջոցով, որոնցից մի քանիսն այսօր իրենց վերջնական հանգրվանն են գտել Հայաստանում՝ Հայաստանի ազգային պատկերասրահում: Նոսեկը բազմիցս եղել է Երևանում, ունեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ՝ ներկայացնելով իր այցելությունների ընթացքում ծնված կտավները: Նրա սերն ու հիացմունքը Հայաստանի նկատմամբ հայտնի է դառնում ոչ միայն կտավներից, այլև նրա հեռուստառադիոհաղորդում-

⁴ Ժմն, «Այբ» օրաթերթ, 23.05.1968-ի համար:

ներից, դասախոսություններից: Նոսեկը ցուցադրվել է մաս Չեխոսլովակիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և այլ երկրներում: Բոլոր ցուցահանդեսներում եղել են Հայաստանին նվիրված թեմաներ: Նոսեկի աշխատանքները Խորհրդային Հայաստանին են նվիրված՝ արևային, երջանիկ, խաղաղ ու կայուն. «Հայրիկ Հայաստան», «Հայկական արև» և շատ այլ կտավներում հենց արևային ու հաղթանակած էլ պատկերված է Հայաստանը:

Սակայն 1970-80-ականներին Հայկական արևն արդեն այլևս ուրիշ խորհուրդ ունի, գրաֆիկական ոճով արված բնապատկերներում նկատվում է դրամատիկ երանգ: 1973 թվականին արված «Դարերի վկայություն» գործի աջ կողմում պատկերված են խաչքարեր: Դրանց դիրքը՝ թեքված և հողին հակված, մատնում են հնամենի լինելը: Խաչքարերին հաղորդված է կենդանություն. դրանց վրա երևացող հավերժության խորհրդանիշը վկայում է, որ նրանք լուռ դիտորդներն են պատմության և դարեր հետո էլ հայկական հողի դարավոր վկայությունը կարող են տալ: Կտավից դիտողին փոխանցվող լռության զգացումը և խաչքարերից հաղորդվող թախիժն ամեն դեպքում կարող են պատմել մաս հայոց պատմության տխուր էջերի մասին:

Այդպիսի տխուր, դարակազմիկ ողբերգության մի պատմության վկայություն է մաս 1983 թվականին արված «Ծաղիկներ երկու միլիոնին» կտավը, որտեղ շատ ուղղակիորեն պատմվում է Հայոց ցեղասպանության մասին. Ծիծեռնակաբերդն է, ֆոնին՝ Արարատ լեռը, երկնականարն արևային է: Սակայն մեկնելով խորհուրդը՝ երկինքն այլևս ոչ թե արևոտ, այլ արյունոտ է թվում, պատկերվում է Հայաստանի արյունոտ էջի խորհրդանիշը, իսկ աշխատանքի առջևի հատվածում երևացող ծաղիկներն այլևս պայծառ ու հրդեհող Հայաստանի խորհրդանիշը չեն. դրանք այժմ դրված են հուշակոթողին՝ որպես հարգանքի տուրք, որպես անմար հիշողության արձագանք, որպես ոգեկոչում 1915 թվականին ցեղասպանված երկու միլիոն հայերի: Խորհուրդներով հարուստ այս աշխատանքը կարծես ճանապարհ է գաղթի՝ անվերջ երկարող վերջին հանգրվան, ուխտատեղի, արևը՝ որպես անմար կրակ:

Նոսեկի աշխատանքներից 5-ը հեղինակն ինքն է նվիրել Հայաստանի ազգային պատկերասրահին 1988 թվականին:

Եզրակացություն

Լինելով չափազանց ընդգրկուն՝ Հայոց ցեղասպանության թեման իր արտացոլումն է գտել ոչ միայն հայկական, այլև արևմտյան կերպարվեստում, սակայն արևմտյան կերպարվեստում այս թեմայով ստեղծագործել են հիմնականում ծագումով հայ գեղանկարիչներ. Ժան Ժանսեն, Արշիլ Գորկի, Քերո Անթոյան, Առաքել Պատրիկ, Գառգու, Լևոն Թութունջյան և այլք:

Այդուհանդերձ, եվրոպացի գեղանկարիչներից ոմանք նույնպես անդրադարձել են թեմային: Այս իմաստով Իրժի Նոսենկը և Անսելմո Ֆրանչեսկոնին իսկապես առանձնանում են, նրանք մաս մեծ դերակատարում են ունեցել Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցում: Թեև Իրժի Նոսենկն իրականացրել է հայանպաստ գործունեություն, իսկ այնուհետև մաս ուղիղ ակնարկներ արել Ցեղասպանության կապակցությամբ, սակայն մախ նրա այդ ստեղծագործությունները հիմնականում մնացել են ԽՍՀՄ սահմաններում, և բացի դա, Ցեղասպանության թեման Նոսենկի արվեստում այնքան էլ շատ չէ, որքան Անսելմոյի: Հարկ է նշել մաս, որ հատկապես Անսելմոյի արվեստում Հայոց ցեղասպանության թեման խիստ առանցքային մշամակություն է ունեցել: Ավելի քան չորս տարի աշխատելով շարքի ստեղծման վրա՝ հետագայում տասնյակ ցուցահանդեսներ է ունեցել աշխարհի տարբեր երկրներում՝ դրանցում ներկայացնելով իր «Կոտորածը» շարքը:

Քանակի առումով Անսելմոն եվրոպացի գեղանկարիչներից միակն է, որ մի ամբողջ շարք է ստեղծել (բաղկացած շուրջ 50 աշխատանքից)՝ մվիրված հատուկ Հայոց ցեղասպանությանը: Միաժամանակ մա միակ եվրոպացի գեղանկարիչն է, ով այս թեմայով շարքի ստեղծումից ի վեր (1960-1970-ականներ) ունեցել է տասնյակ ցուցահանդեսներ տարբեր երկրներում՝ այսպիսով մաս իր ներդրումն ունենալով Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցում:

Լինելով չափազանց ընդգրկուն՝ Հայոց ցեղասպանության թեման մինչև հիմա էլ ստեղծագործության նյութ է դառնում շատ գեղանկարիչների համար, կարծում ենք՝ ներկա փուլում ևս կգտնվեն եվրոպացի գեղանկարիչներ, որոնք ինչ-որ կերպ անդրադառնում են այդ թեմային:

Мугдусян Мариам, магистрант, Ер. Гос. Худ. Академии, **ОТРАЖЕНИЕ ТЕМЫ ГЕНОЦИДА АРМЯН В ЗАПАДНОЙ ЖИВОПИСИ**. В статье представлены работы художников, в искусстве которых тема Геноцида армян заняла значимое место. Хотя в данной работе мы представили 4-х живописцев - Аршил Горки, Жан Жансем, Иржи Носек и Ансельмо Франческони – однако особый акцент сделали именно на работах двух последних художников как представителей европейской живописи.

Mughdusyan Mariam, MA student, Yerevan State Academy of Fine Arts, **REFLECTION OF THE TOPIC OF ARMENIAN GENOCIDE IN WESTERN ART**. In this article the author presents the art-works of the painters, who has contributed a lot to the topic of the Armenian Genocide. Nevertheless in the article, the four painters' works are presented i.e. Arshil Gorky, Jean Jansem, Irjy Norek, Anselmo Francheskoni; the special attention is paid to the works of last ones as European painters.

ՍԻՐԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գյումրիի պետական մանկավարժական
համալսարանի հայցորդ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ
ԻՍՊԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Բանալի բառեր – *հայոց ցեղասպանություն, հումանիզմի ճգնաժամ, հոգեբանական բարդույթ, համամարդկային հիմնախնդիր, կորսված մանկություն:*

Ключевые слова: *Армянский геноцид, гуманистический кризис, психологический комплекс, всечеловеческая проблема, потерянное детство.*

Key words: *Armenian genocide, humanity crisis, psychological complex, universal problem, lost childhood.*

1880-1914 թթ. ընթացքում ամբողջ արևմտյան աշխարհում առաջացան սոցիալական և մշակութային խորը փոփոխություններ: Այն կարելի է կոչել դարավերջի ճգնաժամ, որի ամենաբնորոշ առանձնահատկություններն էին տեխնիկական և գիտական մեծ առաջընթացը, արդյունաբերության արագ զարգացումը, հասարակական և անարխիկ տեսությունների տարածումը, պոզիտիվիզմի (գործնականություն) և ռացիոնալիզմի (բանապաշտություն) ճգնաժամը, երբ մարդը կասկածում էր՝ գիտությունը և բանականությունը կբավականացնե՞ն բացատրելու և ճանաչելու աշխարհը: Այս մտածողությունն ավելի ուշ վերածվեց էքզիստենցիալիզմի, ըստ որի, մարդ էակը ստեղծված է մահվան համար, իսկ վերջինս մարդուն անխուսափելիորեն պատճառում է գոյապաշտական տրտմություն: Այս փուլն, ի վերջո, եզրափակվեց Առաջին համաշխարհային պատերազմով:

Առհասարակ քսաներորդ դարն առանձնացավ իր դաժանությամբ, որի ընթացքում, ըստ Իսպանիայի գերագույն դատարանի անդամ Բալտասար Ռեալի, «180 մլն մարդ է կյանքից զրկվել, այն դեպքում, երբ բնության արհավիրքների գոհ է գնացել 24 մլն»¹, իսկ Բարսելոնայի համալսարանի մշակութաբանության պրոֆեսոր, ցեղասպանագետ Ժոան Ֆրիխոլե Ռեիքսաչին թե՛ սեփական և թե՛ հետազոտած հսկայածավալ մշակութաբանական ու մարդաբանական ուսումնասիրությունները թույլ են տալիս 20-րդ դարը որակել որպես ցեղասպանությունների դար: «Քսաներորդ դարը բնորոշվել է որպես «ցեղասպանության դար» և այն, թերևս, պահպանում է կապը տարբեր կայսրությունների կազմաքանդման գործընթացների հետ»²:

Բայց նախորդ դարին բնորոշ կազմաքանդման ու մասնատման գործընթացը հատկական է նախևառաջ մարդու ներքին աշխարհին ու դրանից սկիզբ առնող հետևանքներին, որոնք մարդուն դարձնում են «ծայրահեղ լարվածության հասած հոգեբանական կառուցվածք, որ թեև ձգտում է պաշտպանվել, պատասպարվել այդ ուժերից և լարվածությունից, ամեն ճիգ ու ջանք գործի է դնում վնասազերծելու, հաղթելու դրանց, բայց ինքը մշտապես գտնվում է փլուզվելու, քանդվելու, ոչնչանալու վտանգի տակ, կանգնած է «ինչպե՞ս ապրել» ճակատագրական հարցի առաջ»³: Մարդու հոգևոր աշխարհի դեկոնստրուկցիան վկայում է մարդկայինից հետևողականորեն օտարացող բանականության մասին և ինչնեցնում երկսայր պաթ. մի կողմից այն սկիզբ է դնում մարդու կողմից մարդուն ոչնչացնելու գործընթացին (այստեղից էլ պատերազմների, կոտորածների, սպանությունների ու մարդկային դաժանության սովորական դառնալը), մյուս կողմից այդ նույն հետևանքը պատճառ է դառնում մարդու «հոգեբանական քայքայման» խորացման, մարդու ներքին ճգնաժամի պատճառի: Այս համընդհանուր անկումային տրամադրությունները համակել էին նաև դարասկզբի Իսպանիան ու իսպանացուն, ինչը պայմանավորված էր իսպանաամերիկյան պատերազմում իսպա-

¹ **Գուարչ Գ.**, Հայկական տոհմաժառ, ՀԳՄ հր., Երևան, 2005, էջ 7:

² **Frigolé Reixach J.**, Cultura y genocidio, Barcelona, 2003, p. 8:

³ **Էդոյան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, «Սարգիս Խաչենց» հր., Երևան, 2009, էջ 156:

նացիների պարտությամբ ու վերջին գաղութների կորստով, անկախություն ձեռք բերելու նպատակով Կատալոնիայի ու Բասկոնիայի կողմից մղվող պայքարով, ինչը ոչ միայն սրեց հարաբերությունները երկրի ներսում, այլև ավելի խորացավ քաղաքացիական պատերազմի ընթացքում: Հետևաբար, պատմական այս իրադարձությունները Իսպանիայում հիմք դրեցին մոտ երեք տասնամյակ տևող սոցիալական ու հոգեբանական ճգնաժամի: Ըստ էության, պատերազմը բեկում է մայրկանց հոգիները, մինչև կյանքի վերջ գրկում հանգստությունից և ուրախությունից՝ դառնալով մարդու մեկուսացման ու ինքնապարփակման պատճառ: Հետևաբար սովը, գրկանքը, բռնությունը, հոգեկան դատարկությունը դարձան մարդկանց մշտական ուղեկիցները քաղաքացիական պատերազմի ու հետպատերազմյան Իսպանիայում: Պատերազմից հետո սկսվեց վերլուծությունների ու վերագնահատության շրջանը, որի ընթացքում իսպանացի մտավորականը սեփական խնդիրների օգնությամբ անդրադարձավ նաև համամարդկային հիմնախնդիրներին, որոնք արդեն դարձել էին նրա հետաքրքրության առարկան: «Եվ ինչպես միշտ է պատահում, ամենակենսական ազգային խնդիրների լուծման փնտրտուքն արվեստում ճանապարհ է բացում դեպի համամարդկայինը: Հենց այն պատճառով, որ իսպանացի գրողներն ապրում ու խորհում էին ազգային կյանքի արմատական խնդիրների մասին, նրանք հասնում էին համապարփակ, համամարդկային նշանակություն ձեռք բերող գեղարվեստական լուծումների»⁴: Այսպես, 70-ական թվականներից իսպանական հասարակության մեջ սկսեց շրջանառվել ցեղասպանության թեման, որովհետև քաղաքացիական պատերազմի ու գեներալ Ֆրանկոյի բռնապետության ընթացքում կատարված դաժանությունն ու սպանությունները սկսեցին որակվել ցեղասպանություն⁵, այս տեսակետն իր կողմնակիցներն ունի նաև այսօր և հիմնավորվում է նրանով, որ «պատերազմը, նույն ազգի տարբեր մասերի միջև, նույնպես ենթադրում է ցեղասպանություն այն չափով, որով չի սահմանափակվում

⁴ **Тертерян И. А.**, Испытание историей: Очерки испанской литературы XX века, Москва, 1973, с.7.:

⁵ Այս մասին տե՛ս **Julius Ruiz**, Las metanarraciones del exterminio, Revista de libros, Agosto 2014, <http://www.revistadelibros.com/articulos/las-metanarraciones-del-exterminio>.

միայն մյուս կողմի ջախջախումով, այլև ենթադրում է վերջինիս ոչնչացում, քայքայում, թուլացում, ստորացում»⁶ : Ահա այս համապատկերում իսպանական գրականության մեջ նախորդ դարի ութսունականներից սկիզբ առավ հայոց ցեղասպանության թեման, որն արժարժման լայն հուն մտավ 21-րդ դարի սկզբից:

Հայոց ցեղասպանությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլ ամբողջ մարդկության մեծագույն ցավն ու ողբերգությունն է: «Ցեղասպանությունը համընդհանուր ողբերգություն է ինչպես մարդու, այնպես էլ հումանիզմի առումով, և սա երկրի վրա ապրող մեզ բոլորիս դարձնում է պատասխանատու»⁷, - գրում է Կապուշինսկին «Իշխանության պաթոլոգիաները» («Patalogias de poder») վերտառությամբ հոդվածում:

Չնայած հարյուրամյա հեռավորությանը, հայոց ցեղասպանության հիմնախնդիրը չի կորցրել իր արդիականությունը: Կուտակվել է հսկայածավալ բազմաժանր գրականություն, այսօր էլ գեղարվեստի լեզվով շարունակվում է ցեղասպանությանը նվիրված գրքերի լույսընծայումը: Առհասարակ ժամանակակից գրականությանն ու արվեստին հետաքրքրում են 21-րդ դարի մարդու դեմ ծառացած հարցերը, հետևաբար սրանով պետք է բացատրել ցեղասպանության՝ համաշխարհային գրականության առավել արդիական թեմաների շարքին պատկանելը, ժամանակակից աշխարհի համամարդկային հիմնախնդիրների մեջ ներխուժելը:

Ի տարբերություն մյուս երկրների, որոնք ցեղասպանությունից անմիջապես հետո դարձել են ապաստան տվողներ կամ որտեղ գերակշռում է հայ համայնքը, ցեղասպանությունը միշտ շրջանառվող թեմա է, Իսպանիան այս իմաստով շատ ավելի ուշ արձագանքեց Հայոց մեծ ողբերգությանը: Չնայած սրան՝ իսպանացի ընթերցողը ծանոթ էր թուրքական նկարագրին, որն իր կերպավորումը ստացել էր տաղանդավոր գրող Խուան Գոյտիսոլոյի «Օսմանյան Ստամբուլ» գործում, որում իսպանացի գրողը Ստամբուլ կատարած իր ճամփորդական մտորումներում վերականգնում է թուրք էթնոսի մասին Արևմուտքում տարածում գտած կարծիքը. «Օսմանյան կայսրության շքեղության շրջանում Արևմուտ-

⁶ **Frigole Reixach J.**, Cultura y genocidio, Barcelona, 2003, p. 13.

⁷ **Kapuscinski R.**, El pais, 10 de diciembre de 2000, p. 15.

քում թուրքի դոմինանտ պատկերը ներկայանում է որպես բարբարոս, անգութ, դաժան ու արյունաբերու՝ հանձնված մարմնական հաճույքներին ու սողոմի գարշելի փչացածությամբ»⁸:

Իսպանիայում հայոց ցեղասպանության մասին սկսեցին խոսել միայն անցյալ դարի 80-ականներին, երբ հայ երիտասարդների մի խումբ ահաբեկչության միջոցով փորձեց աշխարհի ուշադրությունը հրավիրել կատարվածին և լսելի դարձնել վերապրողների ձայնը: Այս ճանապարհով Իսպանիան առաջին անգամ լսեց ցեղասպանության մասին, իսկ իսպանացի նշանավոր լրագրող Խոսե Անտոնիո Գուռիարանը առաջինն էր, ով գեղարվեստի լեզվով պատմեց այն: Այսպես, 1982 թ. «Ռումբը» («La Bomba») վեպով իսպանական իրականության մեջ շրջանառության մեջ դրվեց հայոց ցեղասպանության թեման: Գուռիարանը վեպը կառուցում է «ինքնամղադրածությամբ» (գեղարվեստական պատկերի և իրական պատումի բացարձակ նույնություն), ասես խոստովանություն, որում սեփական կյանքի պատմությունը դառնում է ոչ միայն ցեղասպանության առաջ բերած հետևանքների ու դրանց ողբերգական ազդեցության պատկերման հնարավորություն, այլ առհասարակ բռնության, ահաբեկչության, մարդատյացության ցավոտ խնդիրների անդրադարձ: Ռումբը մարդու մեջ կատարվող պայթյունի խորհրդանիշն է, երբ մարդը հանկարծ նկատում կամ պարզապես հայտնագործում է ուրիշի, իր կողքին կանգնած անհատի ներքինը: Ռումբը կոչված էր պայթեցնել մարդկային անտարբերությունը հայոց ցավի նկատմամբ, հասնել դրա ճանաչմանն ու ուրիշի ցավը սեփականը համարելու գիտակցությանը: «Ռումբը» հակաահաբեկչական ու հակաբռնության մասին վեպ է, մարդու հանդեպ հավատն ու սերը ժխտում են առհասարակ բռնությունը: Գիրքը պատմում է ատելությունից ազատվելու ու ներման հասնելու պատմությունը, ինչը դառնում է արդիական բոլոր ժամանակների համար: Հետաքրքիր օրինաչափություն կարելի է տեսնել ցեղասպանության արձարժման, հարցադրումների առաջադրման ու տվյալ երկրի գրականության միջև: Մեր կարծիքով տարածքային գործոնն այս հարցում էական է և ուղիղ համեմատական է եղեռնագրության ենթաթե-

⁸ Goytisolo J., Estambul otomano, Barcelona, Peninsula, 2003, p. 76.

մային: Այսպես, թուրքական և արաբական գրականության մեջ գրական հերոսը գլխավորապես մուսուլմանացված հայ կինն է, ով կյանքի վերջում (բնորոշ է թուրքական գրականությանը) բացահայտում է իր արմատները կամ թոռների միջոցով է պատմում իր պատմությունը⁹, կամ արաբական արձակում ընթերցողն ականատես է հերոսի (այս դեպքում ևս մեծամասնություն են կազմում մուսուլմանացված հայ կանանց կերպարները) ներքին հոգեբանական ալեկոծումներին¹⁰: Սա պետք է բացատրել նրանով, որ ցեղասպանության ժամանակ վերը նշված երկրներում առկա է ցեղասպանության հետևանքներից մեկը՝ գողացված կյանքերի ու սրանից բխող ինքնության վերագտման ու սեփական հիշողությունների հետ հաշտեցման երևույթը: Իսկ արդեն փրկվածների դեպքում, ովքեր հանգրվանել են տարբեր երկրներում ու ձևավորել հայկական սփյուռքը՝ փորձելով վերահաստատել ազգային գոյությունը, բնորոշ են հայրենաբաղձության, կարոտի թեմաները: Իսպանական գրականության մեջ ցեղասպանության արժարժումը ժամանակագրորեն սկիզբ դրվեց հայկական ահաբեկչության գործունեությամբ՝ որպես ցեղասպանության հետևանք, ինչը իսպանացի ժողովրդին հուզող թեմաներից էր՝ կապված բասկ «Էտտա» ահաբեկչական խմբավորման գործունեության հետ: «Ռումբը» գրքով հեղինակը ոչ միայն անդրադառնում է հայոց ցեղասպանությանը, առհասարակ մարդու թեմային, այլ նաև, գուցե ոչ անմիջականորեն, հատկապես ութսունականներից Իսպանիայում բափ առած և ահաբեկչության թեմային, որը ներկայացվում է որպես քսաներորդ դարի չարիքներից մեկը:

1999 թ. կատալոնացի դասական գրող Մարիա Անխելա Անգլադան անհատի բարոյական պարտավորվածության գիտակցումով հանդես եկավ «Արամի հուշատետրը» վեպով, որը գրողի հարգանքի տուրքն էր ցեղասպանության զոհերից մեկի՝ Դանիել Վարուժանի հիշատակին, ով վեպում խորհրդանշում է հայ ժողովրդի սպանված հատվածի հավաքական կերպարը: Անգլադան իրեն բնորոշ քնարականությամբ պատկե-

⁹ Տե՛ս **Մեթոնյան Ռ.**, Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, ՎՄՎ-Պրինտ, Երևան, 2010, 127 էջ.

¹⁰ Այս մասին տե՛ս **Կիրակոսեան Ս.**, Մեծ եղեռնը արաբական արձակին մեջ, Գրականագիտական հանդես Բ (Դ), Երևան, 2005, էջ 118-121:

րում է ազգային խառնվածք, սովորույթներ, մշակույթ՝ մասնավորապես պոեզիա՝ հավաստելով, թե հնարավոր չէ մոռացումով քողարկել անջընժելի հիշողությունը: Գրողը մշակույթի լեզվով քողագերծում է Մեծ Եղեռնի հակամարդկային ու հակամշակութային բնույթը, ցեղասպանությունը դիտարկում մշակութային հարթության մեջ՝ զուգահեռելով բանաստեղծին ընդդեմ մարդատյացների, իսկ պոեզիան՝ ընդդեմ բարբարոսության: Մշակույթն ատելության դեմ լավագույն դեղամիջոցն է, արդարության, ճշմարտության հետ առերեսվելու և ատելությունից ձերբազատվելու կռվանը: Համեմատությամբ մատնանշվում է, որ բարբարոսությունն ու բիրտ ատելությունը ծնվում են մշակույթի պակասից կամ, որ ավելի վատ է՝ բացակայությունից: Անգլադան ավելի է խորացնում հիշողության դերը՝ հաստատելով առհասարակ մշակույթի ու մասնավորապես գրականության միջոցով հիշողությունը փոխանցելու, արդարության ու ճշմարտության հասնելու հնարավորությունը:

Արդեն 21-րդ դարում ավելի հզորացավ ցեղասպանությունը դատապարտող շարժումն Իսպանիայում, և իրար հետևից լույս տեսան ցեղասպանությանը նվիրված և այն դատապարտող գրքեր: Կատալոնացի ճարտարապետ ու գրող Գոնսալո Էռնանդես Գուարչն իսպանախոս հանրությանը ներկայացավ հայոց ցեղասպանությանը նվիրված եռագրությամբ՝ «Հայկական տոհմաժառ» (2002 թ.), «Հայոց կտակ» (2008 թ.) և 2009 թ. լույս ընծայված «Սպիտակ լեռը» (վեպը նախապես վերնագրված է եղել «Արևելքի մարդը») վեպերով, որոնցում խորը ռեալիզմով արտացոլում է ժամանակաշրջանի թուրքական պետության մթնոլորտն ու իրականությունը, որտեղ առաջնայինն ատելությունն ու մախանձն էին: Հեղինակը կարևորում է գեղարվեստական տարածության ու ժամանակի «բացվածության» ցուցադրումը. վեպերի տարածությունն ու ժամանակը պատմական է ու սոցիալական: Դրանք բաց են պատմական ժամանակի և Օսմանյան կայսրության 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի տարածության մեջ՝ պատկերելով տարբեր խավերի ներկայացուցիչներից մինչև քաղաքական գործիչների կերպարներ, պետական ամբողջ համակարգը՝ վերևից ներքև կառուցված կեղծիքի, անօրինականության, շահամոլության վրա, պատկերում Թուրքիայի գահի համար մղվող պայքարն ու բացահայտում թուրքերի՝ մարդ սպանելու հակումը

գենետիկ մակարդակում: Սուբանից մինչև հասարակ զինվորը, թվում է՝ վարակված են այդ արատներով, և սա հանգեցնում է հասարակության մերկացման, ինչը երևան է հանում Օսմանյան կայսրության ամբողջ արատավորությունը: Գրողը սպանությունը, դաժանությունը, բռնությունը նախևառաջ բնորոշում է որպես 20-րդ դարի մարդկային ճգնաժամի բնութագրիչներ, որպես «հումանիզմի ճգնաժամ»¹¹, որի համատեքստում գրողը քննում է ցեղասպանության առաջ բերած հարցադրումները: Այսպես, գրողը պատկերում է ցեղասպանության ազդեցությունը մարդկանց հոգևոր աշխարհի ու ճակատագրի վրա, ինչը ամենածանր ձևերով՝ հոգեբանական բարդությոներ, ցավի մեջ մորմոքվել ու չբարձրաձայնել, անհուսություն, տեսած սարսափներին հավատալու անկարողություն, կորսված մանկություն, անցյալի ստվերներից ազատվել կամ պարզապես նոր էջից կյանք սկսել՝ արտահայտվել է ցեղասպանությունը վերապրածների մեջ: Գրողը ներկայացնում է բռնության ենթարկված կանանց ու որպես բռնության արդյունք ծնված երեխաների թեման, բացահայտում է մոտամլանացված հայ մանուկների երկփեղկված էության հոգեբանական բարդությոները: Նկատելի է նաև, որ վերը նշված թեմաների արծարծումը, որոնք շրջանցվել են հայ գրականության մեջ, իսպանացի գրողի կողմից համարձակ քայլ է, որ կերպարները՝ հոգեբանական ճշմարիտ ապրումներից թելադրվող վարքագծի առումով հաջողված են:

Գոնասալո Գուարչի ստեղծագործությունների դեպքում գեղարվեստական չափանիշը թերևս զիջում է պատմաճանաչողական արժեքին, սակայն եթե այն գրվում է օտարի կողմից և մարդասիրության ևս մեկ կոչ է համաշխարհային ընթերցողին, մեկ անգամ ևս մարդկային ողբերգության ժխտում, ապա պետք է կարևորել այն պատմաճանաչողական արժեքը, որը չափազանց կարևոր է ոչ հայ ընթերցողի դեպքում:

Առաջին գրքից քսանհինգ տարի անց Հայաստան կատարած իր այցով Խոսե Անտոնիո Գուտիարանը նորից անդրադառնում է հայկական թեմային ու լույսընծայում «Հայեր. մոռացված ցեղասպանություն» (2008 թ.) վեպը, որի շրջանակներում հայոց էության, ժողովրդի պատմու-

¹¹ Guarch H. G., La montana blanca, Barcelona, 2009, p. 439.

թյան մեջ խորը թափանցումներով, ազգային ճակատագրի պատմահոգեբանական խորացումներով, տարբեր հանդիպումներում լսած պատմություններով հյուսում է Հայաստանի մասին իր վեպ-ուղեգրությունը: Գրողը փորձում է խոր ճանաչողությամբ պատմել հայրենիքում ու հայրենիքից դուրս ապրող հայ մարդու, նրա հաղթահարած դժվարությունների, իսկ ցեղասպանությունը վերապրածների դեպքում՝ հաղթահարած տառապանքների մասին: Այս ընթացքում հեղինակային զգացողություններն ու տպավորությունները միախառնվում են պատմական դեպքերին ու անձանց մասին պատմություններին, ճանապարհորդության ուղեկիցների՝ ցեղասպանությունը վերապրած իրենց գերդաստանների պատմություններին, ականատեսների կամ ժառանգների վկայություն-հիշողություններին, որոնց արդյունքում ստանում ինքնակենսագրական հենքով պատմագիտական, մշակութային խորհրդածություններով հագեցած ուղեգրություն, որում բացահայտվում է Հայաստանն ու հայ մարդն՝ իր ապրումներով ու մտատիպարով, և իհարկե, ցեղասպանության երբեք անցյալ չդարձող ցավը:

Կովկասյան ճանապարհորդության տպավորություններն իրենց ուրվագիծը ստացան կատալոնացի լուսանկարիչ և գրող Մարկ Մորտեի կողմից 2007 թ. լույս ընծայած «Կովկասը լեգենդների ու կալաշնիկովի արանքում» գրքում՝ նվիրված կովկասյան երեք ժողովուրդների պատմությանը: Մարկ Մորտեն ցեղասպանությանն անդրադարձել է ակնարկի ձևով «Հայկական աղետ» («La catastrophe Armenia») գլխում (հիշենք, որ ցեղասպանությունը «Աղետ» որակել է Երվանդ Օտյանը «Անիծյալ տարիներ» արժեքավոր գործում)՝ նշելով, որ «հայոց ցեղասպանության պատմությունը մինչև այսօր՝ համարյա մեկ դար անց, կնճռոտ թեմա է»: 2008 թ. Մորտեն հրատարակեց գեղարվեստական վեպ՝ «Արարատի զավակները», որը կերտել է ռեալիզմի ու քնարականության մերհյուսմամբ և կառուցել է դասական վեպ, ընդ որում, և՛ սյուժեն, և՛ կերպարներն ունեն ոչ ուղղագիծ զարգացում, դրանք բարդ, հոգեբանական կերպարներ են, որ օգնում են գրողին կերպավորելու ցեղասպանությունը վերապրածներին, մի ամբողջ սերնդի, ում մանկությունը համընկավ ցեղասպանության ժամանակաշրջանին և իր վրա կրեց այսպես կոչված «կորուսյալ սերնդի» բոլոր տառապանքները, մարդիկ, ովքեր մերքնապես ամա-

յացած էին, հոգեպես «կորած», որոնց կյանքը հաշմված էր ցեղասպանության պատճառով: Գրողը կերտում է դրական թուրքի կերպար (Մեհմետ), որը պատկերվում է բացահայտելու մարդու անձնական դրաման, երբ անհատը բախվում է կյանքի հրեշավորությանն ու ողբերգականությանը, «կյանքի շավիղը» փոխելու անհնարինությունը պատճառ է դառնում հերոսի պարտության, իսկ հերոսի կործանումն արտացոլում է մարդկային արժեքների ու կեցության հիմքերի կազմալուծումը, բարոյական ու մարդասիրական համակարգերի դեֆորմացիան:

Այսպիսով, և՛ Մորտեն, և՛ մյուս հեղինակները պատերազմի անհեթեթությունն ու ցեղասպանությունը տեսնում են որպես համաշխարհային չարիքի խորհրդանիշ, մարդկային ճակատագրի ողբերգականությունը, մարդու անօգնականությունն ու մենակությունը դիտարկում ոչ միայն ցեղասպանություն, բռնություններ ու պատերազմներ ծնող պատճառներ, այլ սրանցից սկիզբ առնող ողբերգությունը դառնում է կյանքի կոնցեպցիա, անխուսափելի պարտություն:

Գուարչի վեպերում առաջնայինը փաստական հենքով ու գեղարվեստական լուծումներով պատումն է, Գուռիարանը ներկայացնում է ցեղասպանությունը վերապրածների զավակների հոգեբանական բարդությոներն ու լուծությունից սկիզբ առնող ու շարունակվող ցեղասպանությունը: Մարկ Մորտենն ու Մարիա Անգլադան ստեղծում են ցեղասպանությունը վերապրած երեխաների հիշողություններով ու հոգեբանական խորացումներով, քնարականությամբ առանձնացող գեղարվեստական վեպեր, որոնցում իսպանալեզու ընթերցողի համար բացահայտվում է Օսմանյան կայսրության ու հայոց ցեղասպանության պատմությունն իր մանրամասներով՝ ժամանակաշրջանն ու մթնոլորտը, որոնք ծնեցին ցեղասպանությունը: Իսպանական գրականության մեջ ցեղասպանությունը ներկայացված է համիդյան ջարդերից մինչև 1915 թ. և ապա հետեղեմյան շրջանը՝ վերապրածների ու ցեղասպանության զոհերի ժառանգների հոգեբանական տրավմաները, անտարբերությունից ծնվող ցավն ու շարունակվող ցեղասպանությունը (քանի դեռ ցեղասպանությունը չի ճանաչվել ու դատապարտվել, այն շարունակվում է): Առհասարակ, իսպանական գրականության մեջ հայկական ցեղասպանության անդրադարձի տեսանկյունից նկատվում է հետևյալ միտումը. իս-

պանացի գրողներն ուշադրություն են դարձնում հատկապես ցեղասպանության առաջ բերած հոգեբանական հետևանքներին և գոհ-դահիճ փոխհարաբերություններին: 20-րդ դարում աշխարհի, կյանքի հոգևոր դատարկությունից սկիզբ առնող մարդու մենության թեման դրսևորվում է ցեղասպանության վերապրածների մոտ, և ցեղասպանության խեղումները դառնում են կերպարների հոգևոր ճգնաժամի պատճառ, այդ հերոսները մենություն զգում են երկու մակարդակում՝ հոգևոր (սարսափելի ու անջնջելի հիշողություններ) և ֆիզիկական (ընտանիքի, գերդաստանի կորուստ): Եղեռնից փրկվածները հիշեցնում են Դոստոևսկու հերոսներին, որոնք բացահայտում են հոգեբանական պլանում մարդու քայքայումը¹²: Գրեթե չկան ցեղասպանության անմիջական պատկերումներ, կա երկրորդ, երրորդ սերնդի հայ մարդու պատմությունը՝ հարստացած 1915 թ.-ի ազդեցություններով: Թերևս միայն Գոնսալո Գուարչն ու Մարկ Մորտեն են փորձում կերտել պատմական անձանց կերպարներ, տալ անմիջական իրադարձությունների դրվագներ:

Իսպանական գրականության մեջ եղեռնագրության մաս կազմող գրքերը (չորս հեղինակի թվով ութ գեղարվեստական գործեր) գրված են միայն արձակ՝ վեպի ժանրատեսակով: Սա պետք է բացատրել նրանով, որ վեպը լավագույնս կարողանում է հասնել կյանքի բազմաֆոն պատկերմանը: Ցեղասպանության թեման իսպանական գրականության մեջ արտահայտված է նաև ինքնակենսագրական (օրագիր, ուղեգրություն, հուշագրություն, ինքնակենսագրական վեպ) և պատմագեղարվեստական արձակի ժանրերով: Հաճախ դժվար է որոշել շատ ստեղծագործությունների ժանրային պատկանելությունը, դրանք երբեմն ներկայացնում են մի քանի ժանրատեսակների համադրություն, ինչը բնորոշ է առհասարակ մերօրյա գրականությանը, երբ ջնջվել են ժանրային հստակ սահմանները: Ժանրատեսակի առումով այս գրքերը պետք է համարել վեպ-օրագրություն, վեպ-ուղեգրություն, վեպ-ժամանակագրություն:

Այսպիսով, իսպանացի գրողները ցեղասպանությունը քննում են իբրև 20-րդ դարին բնորոշ գոյաբանական՝ աշխարհի ու մարդու ամբողջականության քայքայման և իբրև համամարդկային հիմնախնդիր:

¹² Տե՛ս **Էդուան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, «Սարգիս Խաչենց» հր., Երևան, 2009, էջ 172:

Карапетян Сирануш, Исследователь Гюмрийского Государственного Педагогического Университета, Тема армянского геноцида в испанской прозе; В статье анализируются восемь романов из произведений испанских писателей, посвященных теме армянского геноцида, в которых для испаноязычного читателя раскрывается история Османской Империи и армянского геноцида, эпоха и атмосфера, которые родили геноцид. Представляется изображение темы со стороны разных авторов, В статье представляется разработка темы, использование художественных принципов и критериев, аспекты рассмотрения геноцида, характеристика армянского и турецкого народов, мотивы геноцида, круг выдвинутых вопросов.

Karapetyan Siranush, Researcher of Gyumri State Pedagogical University, The Armenian Genocide in Spanish Prose; The Spanish writers works which reflected the Armenian Genocide , eight novels in which the history of the Ottoman Empire and Armenian Genocide, the period of time and atmosphere are described for the Spanish-speaking readers. which gave birth the Genocide are examined in the article. The elaboration of the topic, the description of the topic by different writers, the usage of literary principles and criteria, the viewpoint of the examination of the Genocide, the characteristics of the Armenian and Turkish nations, the causes of the Genocide and the range of raised challenges are presented in this article.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱԳԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$: Տպ. մամուլը՝ 7.125:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1